

# Կոռուպցիոն հանցագործությունների քննության ուղեցույց

# Կոռուպցիոն հանցագործությունների քննության ուղեցույց

Արա Ղազարյան

*Սույն հետազոտությունը հնարավոր է դարձել ժողովրդավարության զարգացման հիմնադրամի ֆինանսական օժանդակության շնորհիվ «Արդարացի դատախազական բարեփոխումներ» ծրագրի շրջանակում: Հետազոտության մեջ տեղ գտած վերլուծություններն արտահայտում են հեղինակների տեսակետը և կարող են չհամընկնել ժողովրդավարության զարգացման հիմնադրամի դիրքորոշումների ու տեսակետների հետ:*

# Բովանդակություն

Նախաբան.....	4
<b>ԲԱԺԻՆ 1. ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՈՒՄ</b> .....	6
Միջազգային իրավական ակտեր.....	6
<< իրավական ակտեր և նախադեպային պրակտիկա .....	9
1. Հանցագործության օբյեկտը և սուբյեկտը.....	12
2. Օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները .....	13
2.1. Փոխարկում.....	17
2.2. Փոխանցում.....	18
2.3. Թաքցնում.....	20
2.4. Խեղաթյուրում.....	22
2.5. Գույքը ձեռք բերելը, պահելը, օգտագործելը .....	24
2.6. Փողերի լվացման հանցակցություն .....	27
3. Նախորդող (պրեդիկատ) հանցագործություն .....	30
<b>ԲԱԺԻՆ 2. ԿԱՇԱՌՔ ՍՏԱՆԱԼԸ և ԿԱՇԱՌՔ ՏԱԼԸ</b> .....	34
Միջազգային իրավական ակտեր.....	34
<< իրավական ակտեր և նախադեպային պրակտիկա .....	35
<b>Ա. Կաշառք ստանալու հանցակազմը</b> .....	42
1. Կոռուպցիայի սահմանումը .....	42
2. Կաշառք ստանալու հանցագործության օբյեկտը .....	43
2. Կաշառք ստանալու հանցագործության սուբյեկտը.....	44
3. Կաշառքի առարկան .....	50
4. Կաշառք ստանալը, պահանջելը, առաջարկ անելը և ընդունելը, խոստում տալը.....	58
5. Իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելը.....	66
6. Կաշառք ստանալու միջնորդությունը և հանցակցությունը .....	70
7. Կաշառք ստանալու հանցակազմի սուբյեկտիվ հատկանիշը և ապացուցման չափանիշը.....	74
8. Պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներ .....	80
<b>Բ. Կաշառք տալու հանցակազմը</b> .....	84

1. Հանցագործության օբյեկտը և սուբյեկտը.....	84
2. Կաշառքի առարկան .....	84
3. Ակտիվ կաշառակերության գործողությունները .....	85
4. Իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելը.....	87
5. Կաշառք տալու միջնորդությունը և հանցակցությունը .....	88
6. Կաշառք տալու հանցակազմի սուբյեկտիվ հատկանիշը և ապացուցման չափանիշը .....	89
7. Ծանրացնող հատկանիշները .....	91
8. «Կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում» օպերատիվ-հետախուզական միջոցառումները.....	96
<b>ԲԱԺԻՆ 3. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԱՅԼ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b> .....	106
1. Հոդված 437.....	106
2. Հոդված 438.....	108
3. Հոդված 439.....	112
4. Հոդված 440.....	114
5. Հոդված 441.....	117

## Նախաբան

Սույն ուղեցույցը նախատեսված է Հակակոռուպցիոն դատարանի դատավորների համար, որոնք քննում են կոռուպցիոն բնույթի հանցագործություններ: Ուղեցույցը կարող է օգտակար լինել նաև դատախազներին, քննիչներին, փաստաբաններին, նախաքննության և հետաքննության մարմինների ներկայացուցիչներին: Ուղեցույցը կարող է օգտագործվել նաև սկզբնական և շարունակական իրավաբանական կրթության դասընթացներում, հատկապես, որ դրանում ներկայացված են մեծ թվով գործնական օրինակներ ներպետական և միջազգային պրակտիկայից, ինչպես նաև՝ մեջբերումների ներպետական և միջազգային իրավունքի դոկտրինալ մեկնաբանություններից:

Ուղեցույցում ներկայացված են փողերի լվացման, ակտիվ ու պասիվ կաշառակերության և դրա հետ կապված կոռուպցիոն այլ բնույթի հանցագործությունների հատկանիշների վերաբերյալ բացատրություններ, ուղեցույցներ, մեկնաբանություններ: Ուղեցույցում արված են հղումներ ներպետական օրենսդրական փաստաթղթերին, Վճռաբեկ դատարանի որոշումներին, իրավաբանական գրականությանը, կոռուպցիայի կանխարգելման միջազգային շրջանակային կոնվենցիաներին ու դրանց ուղեցույցներին, համեմատական իրավունքի աղբյուրներին, մասնավորապես, տարբեր երկրների դատական մարմինների որոշումներին, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկային, հեղինակավոր միջազգային կազմակերպությունների ուսումնասիրություններին ու նրանց պատրաստած խորհրդատվական փաստաթղթերին: Ինչպես նշվեց, ուղեցույցում բերված են բազմաթիվ գործնական օրինակներ: Բոլոր աղբյուրների մատնանշումներն արված են ակտիվ հղումներով, ինչը դյուրացնում է ուղեցույցի օգտագործումը: Այդ նպատակով նաև համարակալվել են բոլոր պարբերությունները:

Ուղեցույցում բոլոր մեկնաբանությունները արվել են միջազգային և ներպետական իրավունքի դոկտրինալ աղբյուրների հիման վրա՝ համապատասխան հղումներով:

Ուղեցույցը բաղկացած է նախաբանից, որտեղ ներկայացված են Ուղեցույցի նպատակը, հասցեատերերի շրջանակը, կառուցվածքը, բովանդակության համառոտ նկարագրությունը: Այնուհետև, Ուղեցույցը բաղկացած է Բաժին 1-ից, որում ներկայացված են փողերի լվացման հանցակազմի վերաբերյալ միջազգային հինգ կոնվենցիաների նկարագրությունը, ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային պրակտիկան, իսկ այնուհետև ներկայացված են Քրեական օրենսգրքի 196-րդ

հողվածի հանցակազմի բոլոր հատկանիշների նկարագրությունը: Հանցակազմի հատկանիշների նկարագրությունը կատարվել է ներպետական և միջազգային աղբյուրների հղմամբ:

Նույն կերպ են կառուցված նաև Բաժին 2-ի երկու համապատասխան ենթաբաժինները կաշառք ստանալու և կաշառք տալու հանցակազմերի մասին. սկզբում ներկայացված են ակտիվ ու պասիվ կաշառակերության միջազգային կոնվենցիաների ու դրանց ուղեցուցային փաստաթղթերի նկարագրությունը, ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային պրակտիկան, իսկ այնուհետև ներկայացված են Քրեական օրենսգրքի 435 և 436-րդ հոդվածներում սահմանված հանցակազմերի բոլոր հատկանիշների նկարագրությունները և համապատասխան մեկնաբանությունները: Ներկայացված են նաև այդ հանցագործությունների հանցակցության, ինչպես նաև կաշառքի միջնորդության վերաբերյալ համապատասխան վերլուծություններ:

Ուղեցույցի Բաժին 3-ում ներկայացված են կոռուպցիոն այլ բնույթի հանցագործությունների մասին վերլուծություններ, որոնք կապ ունեն կաշառք ստանալու ու կաշառք տալու հանցագործությունների հետ: Դրանք են Օրենսգրքի 437, 438, 439 և 440-րդ հոդվածներով սահմանված հանցակազմերը: Այս հանցակազմերի վերաբերյալ ուղղակի հղումներ կան նաև կոռուպցիայի կանխարգելման մասին միջազգային կոնվենցիաներում:

Հույս ունենք, որ ուղեցույցը կձառայի իր նպատակներին, կունենա գործնական նշանակություն կոռուպցիոն բնույթի հանցագործություններ քննելու ժամանակ, օգտակար կլինի ՀՀ քրեական նոր օրենսգրքի դրույթների գործնական կիրառմանը:

## ԲԱԺԻՆ 1. ՓՈՂԵՐԻ ԼՎԱՅՈՒՄ

Միջազգային իրավական ակտեր

1. Փողերի լվացման միջազգային իրավական կառուցակարգը բաղկացած է հինգ հիմնական միջազգային շրջանակային կոնվենցիաներից: Միջազգային իրավունքում հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների քրեականացումն առաջին անգամ սահմանվել է [«Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին»](#) 1988 թվականի ՄԱԿ-ի կոնվենցիայով (այսուհետ նաև՝ Վիեննայի կոնվենցիա): Չնայած այս կոնվենցիայի շրջանակը սահմանափակվում էր [թմրանյութերի](#) ապօրինի շրջանառությամբ և դրանում չէր օգտագործվում «փողերի լվացում» եզրը, կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասի բ-կետում և գ-կետում սահմանվեցին փողերի լվացման բոլոր չորս տեսակի հանցագործությունները՝ հանցավոր եղանակով ստացված եկամտի [փոխարկում/փոխանցում](#), [թաքցում/խեղաթյուրում](#), [ձեռք բերում/օգտագործում/տնօրինում](#) և նշված հանցավոր արարքներին [մասնակցելը/օժանդակելը/ուղղորդելը](#): Փողերի լվացման մասին այս կոնվենցիոն նորմը հիմք հանդիսացավ փողերի լվացման դեմ միջազգային իրավունքի և ազգային իրավական համակարգերի հետագա զարգացման համար: Հայաստանի Հանրապետությունում Վիեննայի կոնվենցիան ուժի մեջ է մտել 1993 թվականի դեկտեմբերի 12-ին:
2. [«Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման և բռնագրավման մասին»](#) 1990 թվականի Եվրոպայի խորհրդի կոնվենցիայով (այսուհետ նաև Ստրասբուրգի կոնվենցիա) սահմանվեցին հանցավոր ծագում ունեցող եկամուտների հայտնաբերման, սառեցման, առգրավման ու բռնագրավման միջազգային համագործակցության մեխանիզմներ: Նշանակալի էր նաև, որ սահմանվեց քաղաքացիական դատավարության կարգով ապօրինի գույքի բռնագրավման *in rem* ընթացակարգի իրավական հիմքը: Կոնվենցիայում առաջին անգամ սահմանվեց նաև փողերի լվացման նախորդող (պրեդիկատ) հանցագործության սահմանումը: Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանվեցին փողերի լվացման նույնանման իրավական դրույթներ, ինչ Վիեննայի

կոնվենցիայում: Հայաստանի Հանրապետությունում Ստրասբուրգի կոնվենցիան ուժի մեջ է մտել 2004 թվականի մարտի 1-ին:

3. [Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան](#), ընդունված 2000 թվականին (այսուհետ նաև Պալերմոյի կոնվենցիա) կազմակերպված հանցավորության դեմ առաջին միջազգային համընդհանուր իրավական փաստաթուղթն էր: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի (ա) և (բ) ենթակետերում ավելի ընդլայնվեց փողերի լվացման հանցակազմի սահմանումը, քան Վիեննայի կոնվենցիայում: Եթե Վիեննայի կոնվենցիայում փողերի լվացման հանցակազմը վերաբերում էր միայն այն հանցավոր եկամուտներին, որոնք ստացվել են թմրանյութերի շրջանառությամբ, Պալերմոյի կոնվենցիայում փողերի լվացման հանցակազմը վերաբերում էր բոլոր տեսակի ծանր հանցագործությունների միջոցով ստացված եկամուտներին: Հայաստանի Հանրապետությունում Պալերմոյի կոնվենցիան ուժի մեջ է մտել 2003 թվականի սեպտեմբերի 29-ին:
4. [Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան](#), ընդունված 2003 թվականին, կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ իրավամբ գլոբալ իրավական փաստաթուղթ է: Այս կոնվենցիան վավերացրել են առավել թվով պետություններ՝ ՄԱԿ-ի անդամ 191 պետություններ: Կոնվենցիայի 23-րդ հոդվածում սահմանված են փողերի լվացման հանցակազմի նույնանման ձևակերպումներ, ինչ Վիեննայի կոնվենցիայում և Պալերմոյի կոնվենցիայում: Սակայն, ի տարբերություն վերջինների, այս կոնվենցիայում առավել մանրամասնորեն ու ընդգրկուն է սահմանվել նախորդող (պրեդիկատ) հանցագործությունների շրջանակը՝ պարտավորեցնելով Մասնակից Պետություններին իրենց օրենսդրությունում նախորդող հանցագործությունների ցանկը սահմանել հնարավորինս լայն՝ այդ թվում նաև այնպիսի հանցագործությունների համար, որոնք կատարվել են պետության տարածքից դուրս: Հայաստանի Հանրապետությունում կոնվենցիան ուժի մեջ է մտել 2007 թվականի ապրիլի 7-ին:

- 4.1. Կոնվենցիայի դրույթները պաշտոնապես մեկնաբանված են [Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի տեխնիկական ուղեցույցում](#): Օգտակար են ոչ միայն փողերի լվացման հանցակազմի դրույթների մեկնաբանությունները (հոդված 23), այլև նրանք, որոնք վերաբերում են, օրինակ, հանցագործությունը պարտակելուն (հոդված 24), գույքը արգելադրելու, առգրավելու և բռնագրավելու հիմքերին, (հոդված 31), վկաների, տուժողների և փորձագետների պաշտպանության

ընթացակարգերին (հոդված 32), բանկային գաղտնիքին (հոդված 40) և այլն: Տեխնիկական ուղեցույցը իրավաբանորեն պարտադրող չէ, սակայն մեկնաբանությունները պրակտիկայում լայնորեն կիրառվում են Մասնակից Պետությունների կողմից հակակոռուպցիոն քաղաքականություններ մշակելիս, ծրագրեր կազմելիս, օրենսդրական բարեփոխումներ իրականացնելիս: Տեխնիկական ուղեցույցը լայնորեն օգտագործվում է նաև Մասնակից Պետությունների դատարանների կողմից:

4.2. Կոնվենցիայի դրույթների պաշտոնական մեկնաբանությունները նաև հասանելի են [Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի կիրարկման օրենսդրական ուղեցույցում](#), որը պատրաստել է ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործությունների դեմ պայքարի գրասենյակը: Ուղեցույցի նպատակն է Մասնակից Պետություններին աջակցելը, որ ազգային օրենսդրությունը համապատասխանեցվի կոնվենցիային: Ուղեցույցում մեկնաբանված են կոնվենցիայի բոլոր դրույթները: Դրանք նույնպես իրավաբանորեն պարտադրող չեն, խորհրդատվական բնույթ ունեն, սակայն պրակտիկայում այդ մեկնաբանությունները ընդունվում են որպես կոնվենցիայի դրույթների դոկտրինալ մեկնաբանության աղբյուր:

5. [«Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների վլացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին»](#) Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում, ընդունված 2005 թվականին (նաև՝ Վարշավայի կոնվենցիա), կատարելագործվել են Ստրասբուրգի կոնվենցիայի՝ փողերի վլացման հանցակազմի նորմերը և մեխանիզմները, գույքի արգելադրման, առգրավման ու բռնագրավման իրավական հիմքերը և ընթացակարգերը, ինչպես նաև քաղաքացիական բռնագանձման (*in rem*) ընթացակարգի սկզբունքները: Կոնվենցիայի 9-րդ հոդվածը տրամադրում է փողերի վլացման ամենաժամանակակից միջազգային իրավական սահմանումը: 2003 թվականի Քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածը և 2021 թվականի Քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածը առավելապես նման են Վարշավայի կոնվենցիայի 9-րդ հոդվածին: Հայաստանի Հանրապետությունում կոնվենցիան ուժի մեջ է մտել 2008 թվականի հոկտեմբերի 1-ին:

5.1. Կոնվենցիայի դրույթների պաշտոնական մեկնաբանությունները ներկայացված են «Հանցավոր ճանապարհով ստացված

եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման և բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ԵԽ կոնվենցիայի [բացատրական գեկույցում](#): Այստեղ ներկայացված են կոնվենցիայում օգտագործված տերմինների (օրինակ՝ «գույք», «բռնագրավում», «նախորդող հանցանք», «սառեցում» կամ «առգրավում» (հոդված 1), փողերի լվացման հանցակազմի (հոդված 9), գույքի բռնագրավման հիմքերի և ընթացակարգերի (հոդվածներ 23-26), ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագրավման հիմքերի և ընթացակարգերի (հոդվածներ 34, 39, 67-68) ուղեցույցներ և մեկնաբանություններ: Բացատրական գեկույցը խորհրդատվական բնույթ ունի, պարտադիր իրավաբանական նշանակություն չունի:

6. [Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ հանցավոր եկամուտների օրինականացմանը \(լվացմանը\) և ահաբեկչության ֆինանսավորմանը դիմագրավելու մասին պայմանագիրը](#) սահմանում է ընդհանուր իրավական հիմքեր և իրավական փոխօգնության մեխանիզմներ ԱՊՀ պետությունների միջև: Պայմանագիրը թեև ընդհանուր առմամբ համահունչ է վերը նշված կոնվենցիաներին, այն չի սահմանում մանրամասն նյութաիրավական հիմքեր, այլ դրա փոխարեն առավելապես կենտրոնացած է ԱՊՀ պետությունների միջև գործնական փոխօժնության իրավական մեխանիզմներ սահմանելուն: Պայմանագրով նախատեսվում են հետևյալ գործունեությունը պետությունների միջև՝ պետությունների համագործակցություն օպերատիվ-հետախուզական մարմինների մակարդակով, տեղեկատվության փոխանակում ֆինանսական գործարքների մասին, որոնք կապված են փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի հետ, միջազգային իրավական փոխօգնություն քրեական գործերի քննության և դատավարության ընթացքում, համատեղ միջոցառումների անցկացում կանխարգելման, օրենսդրական նորմերի ներդաշնակման և փորձի փոխանակման ուղղությամբ: Հայաստանի Հանրապետությունում կոնվենցիան ուժի մեջ է մտել 2008 թվականի սեպտեմբերի 23-ին:

«Վ իրավական ակտեր և նախադեպային պրակտիկա

7. Փողերի լվացման հանցակազմը սահմանված է [Քրեական օրենսգրքի](#) 296-րդ հոդվածում, որում ներառված են վերը նշված միջազգային կոնվենցիաներով սահմանված չորս խումբ հանցավոր արարքներից երեքը՝

- 1) հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկումը կամ փոխանցումը,
  - 2) գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, տեղաբաշխումը, իրավունքները կամ պատկանելությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը, և
  - 3) հանցավոր ճանապարհով ստացված գույք ծեռք բերելը կամ տիրապետելը կամ պահելը կամ օգտագործելը կամ տնօրինելը:
8. Չորրորդ խմբի հանցավոր արարքները, որոնք ներառում են նշված երեք խումբ արարքների հանցակցությունը (ըստ միջազգային կոնվենցիաների՝ այդ հանցավոր գործողություններին մասնակցելը, միանալը, դրանց կատարման համար հանցավոր համաձայնության գալը, ինչպես նաև այդ հանցանքների իրականացմանն աջակցելը, դրդելը, նպաստելը կամ խորհրդակցելը), համապատասխանում են Քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի 8-րդ գլխում սահմանված հանցակցության տարբեր ձևերին:
9. Օրենսգրքի 296-րդ հոդվածի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների վերլուծությունը ներկայացված է ստորև: Հատկանշական է, որ 296-րդ հոդվածի բովանդակությունը ամբողջովին համապատասխանում է 2003 թվականի Քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածում սահմանված փողերի լվացման հանցակազմի բովանդակությանը, իսկ դա էլ իր հերթին համապատասխանում էր Վարչավայի կոնվենցիայի 9-րդ հոդվածին: Այսպիսով, փողերի լվացման քրեաիրավական բովանդակությունը ամբողջությամբ ներմուծվել է փողերի լվացման մասին վերը նշված շրջանակային հինգ կոնվենցիաներից, հետևաբար, 296-րդ հոդվածը համապատասխանում է փողերի լվացման միջազգային իրավունքին:
10. Փողվերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ օրենքը («ՓԼԱՖԴՊ օրենք») սահմանում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտի իրավասու մարմինների, հաստատությունների և անձանց շրջանակը, այդ մարմինների համագործակցության կարգն ու պայմանները, կարգավորող մարմնի վերահսկողության լիազորությունները: Օրենքը չի սահմանում նյութաիրավական հիմքեր: Օրենքն ընդունվել է ՖԱԹՖ-ի հանձնարարականների հիման վրա: Օրենքի կարգավորման սուբյեկտներն են բանկերը, վարկային կազմակերպությունները, վճարային ապահովագրական ընկերությունները, այլ ֆինանսական ծառայություններ մատուցողները, ինչպես

նաև նոտարները, փաստաբանները, հաշվապահները, աուդիտորները, և այլք, որոնք, որպես հաշվետու մարմիններ, պարտավոր են տեղեկացնել լիազոր մարմինն կասկածելի գործարքների մասին: Կարգավորող (լիազոր) մարմինը Կենտրոնական բանկն է:

11. Փողերի լվացման հանցակազմը մեկնաբանվել է Վճռաբեկ դատարանի հետևյալ երեք որոշումներում.

11.1. [Արսեն Սարգսյանի վերաբերյալ 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0090/01/09](#) քրեական գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանը մեկնաբանել է փողերի լվացման հանցակազմի «...կամ գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ օգտագործելը կամ տնօրինելը (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի է, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում» գործողության սուբյեկտիվ հատկանիշը և սահմանել, որ թեև նշված արտահայտությունում որպես սուբյեկտիվ հատկանիշ միայն նշված է գույքի ստացման պահին այդ գույքի հանցավոր ծագումը անձին հայտնի լինելու պայմանը, սուբյեկտիվ հատկանիշի ներքո պետք է հասկանալ նաև հանցավոր ծագում ունեցող գույքի իրական աղբյուրները քողարկելու, թաքցնելու, նման գույքը օրինական շրջանառության մեջ ներգրավելու, այսինքն՝ «փողերի լվացման» նպատակը:

11.2. [Հովհաննես Գևորգյանի և Հրաչյա Չանախչյանի վերաբերյալ 2019 թվականի նոյեմբերի 7-ի թիվ ԵԿԴ/0161/01/15](#) քրեական գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանը սահմանել է, որ փողերի լվացմանն ուղղված անձի դիտավորությունը որոշելիս անհրաժեշտ է պարզել անօրինական գույքի և եկամուտների ծագման աղբյուրը, դրանց օրինական շրջանառության մեջ ներդնելուն ուղղված գործողությունների ամբողջությունը, նյութական միջոցների շարժընթացն ու շրջապտույտն օրինական քաղաքացիական շրջանառության մեջ, ձեռնարկված գործողությունների շղթան, որի վերջնաարդյունքում այդ գույքն ու եկամուտները ստացել են օրինական տեսք: Վճռաբեկ դատարանը նաև սահմանել է, որ եթե մինչև 2014 թվականի օրենքի փոփոխությունը նախորդող (պրեդիկատ) հանցագործությունների համար սահմանվում էր որոշակի հանցագործությունների սպառիչ ցանկ, օրենքի փոփոխությունից հետո ցանկացած հանցագործության արդյունքում ստացված գույքը կարող է հանդիսանալ փողերի

վլացման հանցագործության առարկա: Վճռաբեկ դատարանը նաև հստակեցրել է «ցանկացած գույք» և «քաղաքացիական իրավունքի այլ օբյեկտներ» հասկացությունները:

- 11.3. [Աշոտ Սուրիասյանի վերաբերյալ 2021 թվականի ապրիլի 14-ի թիվ ԵԷԴ/0054/01/15](#) քրեական գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանը սահմանեց, որ փողերի վլացումն անհրաժեշտ է դիտարկել որպես ինքնավար բնույթ ունեցող հանցավոր արարք, որի համար պատասխանատվությունը չի կարող պայմանավորված լինել նախորդող հանցագործության համար դատապարտված լինելու, կամ այդ հանցագործության ապացուցված լինելու հանգամանքներով: Անհրաժեշտ է միայն փաստել, որ գույքը ձեռք է բերվել հանցավոր ճանապարհով, ինչը չի ենթադրում այդ հանցագործության բոլոր հատկանիշների ճշգրիտ նկարագրություն, որն ավելի ցածր ապացուցողական շեմ է, քան ապացույցների բավարար համակցության «ողջամիտ կասկածից վեր» ապացուցողական շեմը: Մասնավորապես, բավարար է գործի փաստերից բխող որոշակի տվյալների կամ անուղղակի ապացույցների համադրման արդյունքում հանգել որոշակի ողջամիտ եզրահանգման առ այն, որ խնդրո առարկա գույքն ամենայն հավանականությամբ ունի հանցավոր ծագում:

1. Հանցագործության օբյեկտը և սուբյեկտը

12. **Փողերի վլացման հանցագործության օբյեկտը** բնականոն տնտեսական գործունեության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են: *Անմիջական օբյեկտն* է օրինական գույքային և դրամավարկային շրջանառության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները: *Լրացուցիչ օբյեկտներ* են հասարակական անվտանգության շահերը (եթե հանցավոր եկամուտների օրինականացումը կապված է կազմակերպված հանցավոր խմբավորումների գործունեության հետ), բնակչության առողջությունը (եթե հանցագործության առարկա են զենքը, թմրանյութերը և այլն), պետական ծառայության շահերի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները (եթե առկա է պաշտոնեական դիրքի օգտագործում) և այլն:

Արմեն Սարգսյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի թիվ [ԵԿԴ/0090/01/09](#) որոշում, կետ 10:

13. Միջազգային կոնվենցիաներում փողերի լվացման հանցագործության **անմիջական օբյեկտը**, որի տարրերը սահմանված են կոնվենցիաների նախաբաններում, միջազգային կազմակերպված ծանր հանցավորության կանխարգելումն է, այդ նպատակով պետությունների միջազգային արդյունավետ համագործակցությանը, ընդհանուր միջազգային քրեական քաղաքականության մշակմանը, միջազգային հանցավորության դեմ պայքարում արդիական ու արդյունավետ մեթոդների կիրառմանը ուղղված հարաբերությունների պաշտպանությունն է: **Լրացուցիչ օբյեկտներ** են անձանց հիմնական իրավունքների, մասնավորապես, գույքային շահերի և իրավունքների պաշտպանությանը (անօրինական ծագում ունեցող գույքի հայտնաբերմանը, արգելադրմանը, առգրավմանը ու բռնագրավմանը) ուղղված և կոնվենցիոն նորմերից բխող իրավահարաբերությունների պաշտպանությունը:

14. **Փողերի լվացման հանցագործության սուբյեկտ է** 16 տարին լրացած ֆիզիկական անձը, ով հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոցների կամ այլ գույքի հետ ֆինանսական կամ այլ գործարքներ է կատարում կամ տվյալ նյութական արժեքները օգտագործում է ձեռնարկատիրական կամ այլ տնտեսական գործունեության համար (ընդհանուր սուբյեկտ):

Արմեն Սարգսյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի թիվ [ԵԿԴ/0090/01/09](#) որոշում, կետ 17:

## 2. Օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները

15. «**Գույք**»՝ Քրեական օրենսգրքի 121-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված օբյեկտները, որոնք են՝ ցանկացած տեսակի նյութական բարիքները, քաղաքացիական իրավունքի շարժական կամ անշարժ օբյեկտները, ներառյալ ֆինանսական (դրամական) միջոցները, վճարային գործիքները, արժեթղթերը, կրիպտոակտիվները և գույքային իրավունքները, գույքային իրավունքները կամ շահերը հավաստող փաստաթղթերը կամ այլ միջոցները, գույքից ստացված կամ դրա նկատմամբ հաշվեգրվող տոկոսները, շահութաբաժինները կամ այլ եկամուտները, ինչպես նաև հարակից և արտոնագրային իրավունքները:

15.1.1. «Գույք» հասկացության հետևյալ սահմանումը Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայում համահունչ է Քրեական օրենսգրքի վերը նշված սահմանման հետ՝ *«ցանկացած արժեք՝ լինի նյութական կամ ոչ նյութական, շարժական կամ անշարժ, իրերի կամ իրավունքների ձևով*

արտահայտված, ինչպես նաև իրավաբանական փաստաթղթեր կամ ակտեր, որոնք հաստատում են այդպիսի արժեքների նկատմամբ սեփականության իրավունքը կամ դրանցում շահ ունենալը» (տե՛ս հոդված 2(դ)):

15.1.2. Վարչավայի կոնվենցիայում սահմանված է նաև հանցավոր ճանապարհով ստացված «եկամուտ» հասկացությունը, որից ածանցվում է «գույք» հասկացությունը: Եկամուտ է «քրեական հանցանքներ կատարելուց ուղղակիորեն կամ անուղղակիորեն սրացված կամ ձեռք բերված ցանկացած տեսակի տնտեսական շահ: Այն կարող է բաղկացած լինել ... «բ» ենթակետում սահմանված ցանկացած գույքից»: Բ- ենթակետում սահմանված է «գույքի» հետևյալ նկարագրությունը՝ «ցանկացած նկարագրություն ունեցող գույք՝ ֆիզիկական կամ ոչ ֆիզիկական, շարժական կամ անշարժ, ինչպես նաև այդպիսի գույքի նկատմամբ իրավունքի կամ շահի մասին վկայող իրավական ակտեր կամ փաստաթղթեր»:

15.1.3. ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի փողերի լվացման հանցակազմում օգտագործվում է միայն «գույք» եզրը: Դրա հետ փոխկապակցված 121-րդ հոդվածում (*Հանցավոր ծագում ունեցող գույքի, եկամտի և այլ տեսակի օգուտի, հանցագործության գործիքի, միջոցի և առարկայի բռնագրավումը*) օգտագործվում է նաև «եկամուտ» հասկացությունը, որը ստացվում է հանցավոր ծագում ունեցող գույքի օգտագործումից, այսինքն՝ եկամուտը ածանցվում է գույքից: Վարչավայի կոնվենցիայում «եկամուտ» հասկացությունը սահմանված է որպես առավել լայն հասկացություն, որում «գույքը» դրա դրսևորման եղանակներից մեկն է:

16. **Հանցակազմի օբյեկտիվ կողմը** դրսևորվում է հետևյալ երեք խումբ ինքնուրույն գործողություններով.

1-ին խումբ. հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկում (կոնվերտացում) կամ փոխանցում (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում),

որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից:

2-րդ խումբ. Գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, տեղաբաշխումը, իրավունքները կամ պատկանելությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում):

3-րդ խումբ. Գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ պահելը, կամ օգտագործել կամ տնօրինել (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում):

(Վճռաբեկ դատարանի թիվ [ԵԿԴ/0090/01/09](#) որոշում, կետ 14):

17. Միջազգային կոնվենցիաներում փողերի լվացման հանցակազմում սահմանված է նաև հանցավոր արարքների չորրորդ խումբը՝ նշված երեք խումբ հանցավոր արարքների հանցակցությունը: Օրինակ, Վարչապալայի կոնվենցիայի 9-րդ հոդվածի 1-ին մասի դ-կետում սահմանված է փողերի լվացման հանցավոր գործողություններին՝ *«մասնակցելը, միանալը կամ հանցավոր համաձայնության գալը, ինչպես նաև այդ հանցանքների իրականացմանն աջակցելը, դրդելը, նպաստելը կամ խորհրդակցելը»*: Քրեական օրենսգրքում դրանք սահմանված են Ընդհանուր մասի 46-րդ և 50-րդ հոդվածներում:

18. Նշված չորս խումբ հանցավոր արարքները փողերի լվացման ինքնուրույն հանցակազմեր են: Մի խմբում սահմանված հանցակազմը կախված չէ այլ խմբի հանցակազմի հատկանիշներից:

19. Քանի որ փողերի լվացման հանցակազմը ձևական է, այն ավարտված է համարվում նշված բոլոր արարքներից որևէ մեկի կատարման պահից (Վճռաբեկ դատարանի թիվ [ԵԿԴ/0090/01/09](#) որոշում, կետ 14):

**Օրինակներ՝** Փողերի լվացման չորս խումբ հանցավոր արարքների օրինակներ են.

- հանցավոր ծագում ունեցող գումարով անշարժ գույք գնելը կամ հանցավոր եղանակով ձեռք բերված գույքը

վաճառելը: Սրանք գույքի փոխարկման օրինակներ են, քանի որ փոխվել է գույքի բնույթը, տեսակը:

- Հանրային ծառայողը հանցավոր ծագում ունեցող գումարը տվել է ընկերոջը ու խնդրել, որ գումարը պահի իր տանը, ու դա արել է, որպեսզի չհայտարարագրի այդ գումարն իր տարեկան հայտարարագրում: Նման քայլով հանրային ծառայողը կատարել է հանցավոր ծագում ունեցող գույքի փոխանցում՝ փոխել է գույքի գտնվելու վայրը:
- Հանրային ծառայողը գումարը պահել է կեղծ սեփականատիրոջ անունով օֆշորային բանկի հաշվում, և եկամուտների հայտարարագրում գումարի մասին նշում չի արել: Այդ գործողություններով թաքցրել է գումարի գոյության փաստը: Հայտարարագրում չնշելը նաև Քրեական օրենսգրքի 444-րդ հոդվածով սահմանված հանցավոր արարք է:
- Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձը Երևանի Թումանյան փողոցում գտնվող իր վաճառասրահում տեղադրված վճարային տերմինալից բանկային կեղծ քարտերի օգնությամբ ԱՄՆ-ում գործող բանկերի հաճախորդների հաշվեհամարներից գողացել է գումարներ, այնուհետև այդ գումարները փողանցել է Երևանում գործող իր ընկերության բանկային հաշվեհամարին՝ փոխանցումները ձևակերպելով որպես վաճառասրահում գնված ապրանքների համար կատարված վճարումներ: Գողություն կատարելը նախորդող հանցագործություն է, իսկ գողոնը ձևակերպելով որպես ծառայությունների դիմաց վճարված գումար, նպատակ է ունեցել խեղաթյուրել գումարի հանցավոր ծագումը, գումարի ծագմանը տալ օրինական բնույթ՝ այդ գումարներ օրինական շրջանառության մեջ մուտք անելով:
- Անձը թրաֆիքինգի արդյունքում ստացված գումարով գնել է բնակարան, այնուհետև բնակարանը գրավադրել է բանկում վարկի դիմաց, և ստացված

վարկով հիմնադրել է շինարարական ընկերություն և իրականացրել ձեռնարկատիրական գործունեություն: Տվյալ դեպքում անձը հանցավոր ծագում ունեցող գումարով ձեռք է բերել գույք՝ ինտեգրելով հանցավոր ծագում ունեցող գույքը օրինական շրջանառության մեջ ու դա անելիս թաքցրել է գույքի ծագումը: Այդ գործողություններով անձը կատարել է գույքի փոխարկում: Այնուհետև տնօրինել է գույքի ճակատագիրը՝ գրավադրելով բանկում վարկի դիմաց:

- Հ.Գ.-ն, ձեռնարկատիրական գործունեության արդյունքում առաջացող հարկերի վճարներից խուսափելու նպատակով խնդրել է իր ծանոթ Հ.Զ.-ին առանց ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու մտադրության ստեղծել առևտրային կազմակերպություն, որը վերջինս արել է: Հ.Զ.-ն այդ կազմակերպության անունից առանց ապրանքների մատակարարման Հ.Գ.-ի կազմակերպության համար կեղծ էլեկտրոնային հաշիվներ է դուրս գրել: Այդ փաստաթղթերի հիման վրա Հ.Գ.-ն շահութահարկի և ԱԱՀ-ի հաշվարկներում ներառել է խեղաթյուրված տվյալներ և խուսափել է մոտ 233 միլիոն դրամ հարկեր վճարելուց: Հանցավոր գործունեության արդյունքում գոյացած գումարի ծագումը թաքցնելու նպատակով Հ.Գ.-ն իր ընկերության բանկային հաշվից Հ.Զ.-ի ընկերության բանկային հաշվին անապրանք գործարքների դիմաց փոխանցել է գումարներ, որոնք Հ.Զ.-ն կանխկացրել է ու վերադարձրել է Հ.Գ.-ին՝ իրեն պահելով յուրաքանչյուր փոխանցումից 100,000 դրամ՝ ըստ նախնական պայմանավորվածության: Նշված գործողություններում Հ.Զ.-ն կատարել է հանցակցություն՝ օժանդակելով Հ.Գ.-ի կողմից փողերի վաճման հանցագործությանը:

## 2.1. Փոխարկում

20. «Փոխարկում» (կոնվերտացում)՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի բնույթը, ձևը, աղբյուրը, սեփականությունը փոխակերպելու գործողություն է,

որը կատարվում է ֆինանսական գործարքների միջոցով կամ այլ եղանակով՝ գույքի հանցավոր ծագումը քողարկելու նպատակով:

**Օրինակներ՝** Փոխարկման օրինակներ են.

- հանցավոր ծագում ունեցող գումարի միջոցով անշարժ գույք գնելը կամ հանցավոր թմրանյութերի վաճառքից ստացված գումարներով մեքենա կամ տուն գնելը, որի արդյունքում հանցավոր ծագում ունեցող կանխիկ գումարը վերածվում է շարժական կամ անշարժ գույքի,
- անապրանք գործարքների դիմաց ՀԴՄ դուրս գրելը, որի արդյունքում անօրինական կանխիկ գումարը վերածվում է ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացված եկամտի,
- կեղծ բանկային քարտի օգնությամբ արտասահմանյան օգտատերերի բանկային հաշվից գողացված գումարները կրիպտոարժույթի վերածելը,
- գույքի գրավադրումով վարկ վերցնելը և վարկի վճարումը հանցավոր ծագում ունեցող գումարներով կատարելը: Այդպես հանցավոր ճանապարհով ստացված գումարը փոխարկվում է վարկի սպասարկման օրինական գումարի:

**2.2. Փոխանցում**

21. «**Փոխանցում**»՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքը մի վայրից մեկ այլ վայր տեղափոխելը, կամ մի բանկային հաշվից մեկ այլ բանկային հաշիվ փոխանցելը, մի պետությունից մեկ այլ պետություն տեղափոխելը, կամ մի բանկային հաշվից այլ բանկայի հաշվին փոխանցելը (տե՛ս նաև [Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի կիրարկման օրենսդրական ուղեցույցը](#), կետ 231):

**Օրինակներ՝** Փոխանցման օրինակներ են.

- թմրանյութի վաճառքից ստացված գումարը ընկերոջ բանկային հաշվին փոխանցելը,
- հանրային ծառայողի կողմից իր գույքի սեփականությունը այլ անձին փոխանցելը,
- կաշառքից ստացված գումարները օֆշորային ընկերության բանկային հաշվին փոխանցելը,
- մաքսանենգ եղանակով կանխիկ գումարների տեղափոխումը այլ պետություն,
- առցանց վճարային համակարգերի (թվային դրամապանակների) օգտագործմամբ հանցավոր ճանապարհով ստացված գումարների տեղաշարժը հաշիվների միջև:

**21.1. «Փոխարկման կամ փոխանցման սուբյեկտիվ հատկանիշները».**

Քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի առաջին նախադասությունից հստակ երևում է, որ օրենսդիրը նախատեսել է այս գործողությունների սուբյեկտիվ կողմը սահմանել ուղղակի դիտավորությունը, քանի որ դրույթը նշում է, որ փոխարկման կամ փոխանցման հանցակազմի պայմաններ են, եթե անձին հայտնի է, որ տվյալ գույքը ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում, *«որը նպատակ է ունեցել թաքցնելու կամ խեղաթյուրելու այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակելու որևէ անձի, որ նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից»:*

21.1.1. Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշման՝ *«...հանցագործության կատարմամբ հանցավորն օրինական գործունեության շղարշի ներքո նպատակ է հետապնդում լեգիտիմացնել ստացված անօրինական գույքն ու եկամուտները, քողարկելու և թաքցնելու դրանց ծագման հանցավոր աղբյուրը, վերացնելու դրանց հանցավոր հետքերը ... հանցագործությունն արտահայտվում է անօրինական ճանապարհով ստացված «կեղտոտ» փողերի օրինականացմամբ ... փողերի լվացմանն ուղղված գործողություններ կատարելու, անօրինական գույքն ու եկամուտները օրինական քաղաքացիական շրջանառության մեջ ներդնելու միջոցով հանցավորի դիտավորությունն ուղղված է լինում դրանց*

օրինական տեսք հաղորդելուն և քրեական պատասխանատվությունից ազատվելուն»:

[Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0161/01/15 որոշում,](#)  
կետ 161.

21.2. Փոխարկումը և փոխանցումը ուղղակի դիտավորությամբ կատարվող արարքներ են: Փոխարկումը կամ փոխանցումը կատարվում է դիտավորությամբ, այդ գործողությունները կատարելու պահին մեղադրյալը պետք է տեղյակ լինի, որ գույքը հանցավոր ծագում ունի և տվյալ գործողությունը կամ գործողությունները կատարվում են կամ դրանց հանցավոր ծագումը թաքցնելու կամ խեղաթյուրելու կամ էլ, օրինակ, օգնելու դրանց հայտնաբերումը կանխելու, կամ օժանդակելու, որ անձը խուսափի քրեական պատասխանատվությունից այն հանցագործության համար, որի արդյունքում ստացվել է այդ գույքը:

[Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի կիրարկման օրենսդրական ուղեցույց,](#) կետեր 233-234

21.3. Գիտակցումը, մտադրությունը և դիտավորությունը, որպես սուբյեկտիվ հատկանիշներ, հաստատվում են գործի օբյեկտիվ փաստական հանգամանքներով:

[Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիա,](#) հոդված 28):

### 2.3. Թաքցնում

22. Քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 2-րդ խմբում սահմանված են երկու հանցավոր արարքներ՝ գույքի **թաքցնելը** և գույքի վերաբերյալ տեղեկություններ **խեղաթյուրելը**: Այս երկու գործողությունների օբյեկտիվ հատկանիշները բավականին լայն են, դրանք ներառում են գույքի վերաբերյալ գրեթե ցանկացած տեղեկության (գույքի գտնվելու և գույքի հատկանիշների մասին) թաքցնելուն կամ խեղաթյուրելուն:

22.1. «**Թաքցնելը**» և «**խեղաթյուրելը**» թեև բովանդակությամբ նման են, դրանք տարբեր հանցակազմեր են, քանի որ տարբեր են դրանց նպատակները: Առաջինի նպատակն է գույքը անտեսանելի դարձնելը, իսկ երկրորդի նպատակը՝ գույքին լեգիտիմություն հաղորդելը:

22.2. «**Թաքցնելը**»՝ նշանակում է գույքը թաքցնելը կամ շարունակաբար պահելը, որը կատարվում է դիտավորությամբ, նախորդող հանցագործություններից հետո, ու առանց դրանց մասնակցելու՝ եթե

անձին հայտնի է, որ դա հանցավոր ճանապարհով ստացված գույք է ([Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիա](#), հոդված 24):

22.3. **Արարքի սուբյեկտիվ հատկանիշը** ուղղակի դիտավորությունն է. պետք է ցույց տալ, որ իրավախախտը գիտակցել է արարքի կատարելու պահին, որ գույքն ունի հանցավոր ծագում և արարքը կատարել է գույքի հանցավոր ծագումը թաքցնելու նպատակով: Այդուհանդերձ, թաքցնելու կամ խեղաթյուրելու հանցակազմերի սուբյեկտիվ հատկանիշի վերաբերյալ միջազգային իրավական փաստաթղթերում ներկայացվում է առավել մեղմ պահանջ, քան գույքի փոխարկման կամ փոխանցման հանցակազմերի դեպքում: Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 23-րդ հոդվածի և Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 6-րդ հոդվածի ներքո չի պահանջվում ցույց տալ ապացույց, որ գույքի թաքցնելը կամ խեղաթյուրելը արվել է բացառապես գույքի հետքերը կամ դրա ծագումը թաքցնելու նպատակով: Այս կոնվենցիաների ներքո ազգային օրենսդրին առաջարկվում է գույքը թաքցնելու հանցակազմը սահմանել նաև այլ նպատակներով, այդ թվում նաև այն դեպքերում, երբ որևէ նպատակ չի հիմնավորվել:

[Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի կիրարկման օրենսդրական ուղեցույց](#) կետ 237):

[Պալերմոյի կոնվենցիայի կիրարկման օրենսդրական ուղեցույց](#), կետեր 132 և 135

**Օրինակներ՝** Գույքը թաքցնելու օրինակներ են.

- Եկամուտները, գումարները օՖշորային բանկային հաշվում պահելը բանկայի հաշվի կեղծ սեփականատիրոջ տվյալներով,
- հանրային ծառայողի կողմից եկամուտների տարեկան հայտարարագրում կանխիկ գումարի մասին նշում չանելը:
- ուրիշի անունով, սակայն հանցավոր ծագում ունեցող գումարով անշարժ գույք գնելը, կամ անշարժ գույքը օՖշորային կազմակերպության

հաշվեկշռում պահելը, որպեսզի հնարավոր չլինի դա հայտնաբերել:

- Մեծ քանակությամբ գեղանկարներ կամ այլ արժեքավոր արվեստի իրեր գնելը և դրանք թաքստոցում պահելը:

Նշված օրինակներում իրավախախտը ձեռնարկել է միջոցներ դրանց գտնվելու վայրը թաքցնելու համար՝ ուղղակի դիտավորությամբ, քանի որ այդ գործողությունները կատարելու պահի դրությամբ տեղյակ էր, որ դրանք հանցավոր ճանապարհով ստացված գույք են:

#### 2.4. Խեղաթյուրում

23. «**խեղաթյուրելը**»՝ գույքի հատկանիշները փոփոխելը՝ արտաքին տեսքը, բնույթը, ծագումը, գտնվելու վայրը, պատկանելությունը, տեղաբաշխումը, և այլն՝ գույքի օրինական լինելու տպավորություն ստեղծելու համար: Փողերի «լվացման» պրոցեսում սա ամենատարածված իրավախախտման ձևն է, քանի որ դրանով է ստեղծվում պատրանք, թե հանցավոր ծագում ունեցող գույքը մաքուր է:

23.1. Միջազգային կոնվենցիաների հայերեն պաշտոնական տեքստերում «խեղաթյուրել» բառի փոխարեն օգտագործվում է «քողարկել» եզրը (տե՛ս, օրինակ, [Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի](#) 23-րդ հոդվածի 1-ին մասի ա-կետի (ii) ենթակետում):

23.2. **Արարքի սուբյեկտիվ հատկանիշը** նույնպես ուղղակի դիտավորությամբ արարք է: Ըստ Վճռաբեկ դատարանի, նման արարքը կատարվում է՝ «գիտակցելով դրանց՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված լինելու հանգամանքը և հեղափոխելով հարուկ նպատակ՝ թաքցնել կամ քողարկել գույքի (գույքային իրավունքի) հանցավոր ծագումը կամ օժանդակել հանցակցին խուսափելու իրավական հետևանքներից»:

Վճռաբեկ դատարանի թիվ [ԵԿԴ/0090/01/09](#) որոշում, կետ 14:

23.3. Գույքի խեղաթյուրումը կատարվում է հետևյալ երեք փուլերով.

Փուլ 1. Տեղաբաշխում

Հանցավոր ճանապարհով ստացված միջոցները (հաճախ ֆինանսական) որևէ հաստատության միջոցով օրինական տնտեսական (հաճախ ֆինանսական) համակարգ առաջին անգամ մուտք անելը, օրինակ՝ դրանք ավանդ դնելու, արժեթղթեր կամ այլ ակտիվներ ձեռք բերելու միջոցով՝ երբեմն միջոցները մասնատելով ավելի փոքր գումարների, որպեսզի դրանք կասկած չհարուցեն կամ չգերազանցեն պարտադիր հաշվետվություն տրամադրելու համար նախատեսված սահմանաչափը:

## Փուլ 2. Շերտավորում

Գործառնություններ, որոնք նպատակ են հետապնդում հանցավոր եկամուտները հեռացնել դրանց ծագման աղբյուրից՝ վերջինիս բացահայտումը դժվարացնելու համար: Սովորաբար դա իրականացվում է անդրսահմանային ֆինանսական գործարքների միջոցով՝ օգտագործելով «մասնագիտացված» օֆշորային բանկեր կամ օֆշորային գոտիներում գրանցված/գործող (հաճախ գրպանային) ընկերություններ:

## Փուլ 3. Ինտեգրում (օրինականացում)

Փողերի լվացման դասական գործընթացի երրորդ փուլ, որի միջոցով հանցավոր ճանապարհով ձեռքբերված եկամուտներին օրինական տեսք է հաղորդվում և վերադարձվում է հանցագործին: Այս փուլի հիմնական մեթոդներն են օրինական բիզնեսում ներդրումները, պերճանքի առարկաների գնումը, միջոցների փոխանցումը չհամապատասխանող երկիր կամ նմանատիպ այլ գործարքներ, որոնք թույլ են տալիս հանցագործին օգտագործել միջոցները՝ առանց իրավապահ մարմինների մոտ կասկած հարուցելու:

Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի կիրարկման օրենսդրական [նախագիտություն](#), կետ 127

Տե՛ս նաև ՓԼ/ԱՖ հասկացությունների [շտեմարան](#)

**Օրինակ՝** Արմենը «Լայֆ» ՍՊԸ հիմնադիրը և տնօրենն է: 2012 թվականից մինչև 2014 թվականը ավելացված արժեքի հարկի, շահութահարկի և եկամտային հարկի հաշվարկներում ներառել է ակնհայտ խեղաթյուրված տվյալներ՝ այդպիսով կատարելով հանցագործություն՝ խուսափելով առանձնապես խոշոր չափերով՝ 349.062.120 ՀՀ դրամ, հարկերը

վճարելուց (նախորդող (պրեդիկատ) հանցագործություն:

Հանցավոր գործունեության արդյունքում ստացված հասույթը թաքցնելու նպատակով իր ծանոթ Հակոբին առաջարկել է գործարք: Հակոբը Արմենի ուղղորդմամբ ու դրդմամբ հիմնադրել է «Մարկետ» ՍՊ ընկերությունը: Որից հետո էլեկտրոնային հարկային հաշիվներ ձևակերպելու համար, հարկային մարմնի կողմից իրեն հատկացված «Ա-Դի» կարդացող սարքը տվել է Արմենին, ով այդ սարքի գործադրմամբ, 2013-2014 թթ. ընթացքում «Մարկետ» ՍՊԸ-ի անունից «Լայֆ» ՍՊԸ-ին անապրանք գործարքների դիմաց դուրս է գրել 129 էլեկտրոնային հաշիվներ: 2013 թվականի ապրիլի 30-ից մինչև 2014 թվականի հունիսի 03-ն ընկած ժամանակահատվածում, «Լայֆ» ՍՊԸ-ի բանկային հաշվից «Մարկետ» ՍՊԸ-ի բանկային հաշվեհամարին, ապրանքներ ձեռք բերելու պատրվակով, մաս-մաս փոխանցվել է 1.423.011.587 ՀՀ դրամ, այդ թվում առանձնապես խոշոր չափերով հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու և կեղծ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու արդյունքում առաջացած առանձնապես խոշոր չափերով գույքը՝ 582.063.046 ՀՀ դրամը: Նշված գումարը, փոխանցումներ կատարելու կամ դրան հաջորդող օրերին «Մարկետ» ՍՊԸ-ի գործունեության համար անհրաժեշտ ծախսեր կատարելու կեղծ հիմնավորմամբ, Հակոբի կողմից կանխիկացվել և առձեռն տրվել է Արմենին: Յուրաքանչյուր փոխանցման դիմաց Հակոբը Արմենից ստացել է 100,000 դրամ:

## 2.5. Գույքը ձեռք բերելը, պահելը, օգտագործելը

24. Քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի հանցակազմի 3-րդ խմբում սահմանված են հինգ հանցավոր արարքներ՝ հանցավոր ծագում ունեցող գույք **ձեռք բերելը, տիրապետելը, պահելը, օգտագործելը կամ տնօրինելը:**

24.1. Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի օրենսդրական [նուղեցույցում](#) նշվում է, որ գույքը ձեռք բերելու, տիրապետելու, պահելու,

օգտագործելու կամ տնօրինելու հանցակազմերը համարվում են գույքը փոխարկելու, փոխանցելու, թաքցնելու և խեղաթյուրելու հանցակազմերի հայելանման պատկերը, քանի որ առաջինները վերագրվում են այն անձանց, ովքեր տրամադրում են հանցավոր ծագում ունեցող գույք, իսկ վերջինները վերաբերում են նրանց, ովքեր ձեռք են բերում, պահում են, օգտագործում կամ տնօրինում են հանցավոր ծագում ունեցող գույքը (կետ 240-ում):

24.2. **Արարքի սուբյեկտիվ հատկանիշը.** Քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածում բառացիորեն նշված չէ, որ գույքը ձեռք բերելու, տիրապետելու, պահելու, օգտագործելու կամ տնօրինելու գործողությունների համար պարտադիր պայման է գույքի հետքը թաքցնելու կամ հանցավոր ծագումը խեղաթյուրելու, այլ կերպ ասած, գույքը «լվանալու» դիտավորությունը: Որպես սուբյեկտիվ հատկանիշ միայն նշված է գույքի ստացման պահին այդ գույքի հանցավոր ծագումը **անձին հայտնի լինելու** պայմանը: Նման ձևակերպումը առաջացրել է անորոշություն, թե արդյոք անձին կարելի է վերագրել փողերի լվացման հանցակազմ, եթե նման գույքը անձը ձեռք է բերել, օրինակ, սեփական օգտագործման, այլ ոչ թե, օրինակ, դրա հետքը թաքցնելու կամ գույքի ծագումը խեղաթյուրելու դիտավորությամբ: Վճռաբեկ դատարանը արտահայտել է իրավական դիրքորոշում, որ նշված հանցակազմի գործնական կիրառումը պետք է կառուցվի այն եզրահանգման վրա, որ քննարկվող հանցագործության սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշն իրենում պարունակում է հատուկ նպատակ՝ հանցավոր ճանապարհով ստացված միջոցների իրական աղբյուրները քողարկելը, թաքցնելը և այդ միջոցներն օրինական շրջանառության մեջ ներգրավելը, և որ այդպիսի նպատակի բացակայությունը բացառում է այս հանցագործության հանցակազմի առկայությունը:

Վճռաբեկ դատարանի թիվ [ԵԿԴ/0090/01/09](#)

որոշում, կետ 16):

24.3. Պալերմոյի կոնվենցիայի կիրարկման օրենսդրական ուղեցույցում նշվում է, որ հանցավոր եղանակով ստացված գույքի **ձեռքբերման, տիրապետման, պահելու, օգտագործման ու տնօրինման** հանցավոր արարքների սուբյեկտիվ հատկանիշը նույնն է, ինչ հանցավոր ճանապարհով ստացված գույքի **փոխարկման, փոխանցման, թաքցման և խեղաթյուրման** հանցակազմերինը,

քանի որ գույքի ձեռքբերումը, տիրապետումը, պահումը, օգտագործումը կամ տնօրինումը արվում է հանցավորի տեղյակ լինելով, որ գույքն ունի հանցավոր ծագում: Ավելին, ուղեցույցում նաև շեշտադրվում է, որ որևէ հատուկ դիտավորության առկայություն չի պահանջվում արարքը որպես փողերի լվացում որակելու համար:

[Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի կիրարկման օրենսդրական ուղեցույց](#), կետ 137:

24.4. Այսպիսով, հանցավոր ծագում ունեցող գույք ձեռք բերելը, տիրապետելը պահելը, օգտագործելը, տնօրինելը փողերի լվացման հանցակազմեր են, եթե դրանք կատարվել են գույքի իրական աղբյուրը, հանցավոր ծագումը թաքցնելու կամ խեղաթյուրելու նպատակով: Այս մտադրության մասին թեև 296-րդ հոդվածում նշված չէ, սակայն Վճռաբեկ դատարանը գույքի հանցավոր ծագման մասին տեղեկացված լինելը նույնացրել է նման գույքը քողարկելու, թաքցնելու, խեղաթյուրելու, փոխակերպելու, այսինքն՝ «լվանալու» հանցավոր մտադրության հետ: Եթե այդ նպատակը փաստերում բացակայում է, արարքը պետք է որակվի Քրեական օրենսգրքի 295-րդ հոդվածի հիմքով:

24.5. Հանցավոր ծագում ունեցող գույք ձեռք բերելու, տիրապետելու, պահելու, օգտագործելու կամ տնօրինելու օրինակներ են հետևյալ փաստերը:

- Օրինակներ՝**
- Թմրանյութերի վաճառքից գոյացած գումարով մեքենա գնելը՝ անօրինական հասույթը օրինական շրջանառության մեջ դնելու նպատակով: Այսինքն՝ գործարքի նպատակը ոչ թե մեքենա ձեռք բերելն է, այլ կանխիկ գումարի օրինականացումը:
  - Մաքսանենգ ճանապարհով ներմուծված ոսկեդենր տանը թաքստոցում պահելը: Գործողության նպատակը գույքի տեղաշարժը և տեղաբաշխումը թաքցնելն է:
  - Տուն վարձակալելը (տիրապետելը), որի նպատակն է ոչ թե տանը բնակվելը, այլ անօրինական եղանակով ստացված կանխիկ գումարը քաղաքացիաիրավական շրջանառության մեջ

ղնելը, որը յուրաքանչյուր վճարից հետո կանխիկ վերադարձվում է գնորդին:

- Թրաֆիքինգի արդյունքում ստացված գումարի ներդրում օրինական ձեռնարկատիրական գործունեության մեջ՝ հասույթ ստանալու, ինչպես նաև գումարի օրինականացման նպատակով:
- Կողոպուտի արդյունքում ստացված գումարով ճանփորդական ծախսեր կատարելը:
- Խարդախությամբ ձեռք բերված անշարժ գույքը վաճառելը, որը գույքի տնօրինման մասին որոշում կայացնել է:
- Համայնքի ղեկավարը հրապարակային աճուրդով օտարել է գույքը պայմանավորված անձի, ով այնուհետև գույքը նվիրատվությամբ օտարել է համայնքի ղեկավարի որդուն: Առաջադրվել է փողերի լվացման մեղադրանք համայնքի ղեկավարին (գույքի օտարում), իսկ աճուրդով գույքը ձեռք բերած անձին՝ փողերի լվացմանը օժանդակելու համար:

## 2.6. Փողերի լվացման հանցակցություն

25. Փողերի լվացման 4-րդ խումբ հանցավոր արարքներն են փողերի լվացման հանցանքներին կամ դրանց իրականացման փորձին մասնակցելը կամ միանալը, դա կատարելուն հանցավոր համաձայնության գալը, աջակցելը, դրդելը, նպաստելը կամ խորհրդակցելը: Դրանք սահմանված չեն Օրենսգրքի 296-րդ հոդվածում, քանի որ հանցակցության տեսակներ են, որոնք համապատասխանում են Քրեական օրենսգրքի ընդհանուր մասի 8-րդ գլխում սահմանված հանցակցության տարբեր սահմանումներին:

25.1. Մասնավորապես, մասնակցելը համապատասխանում է 45-րդ հոդվածի 1-ին մասում հանցակցության տեսակին, միանալը կամ հանցավոր համաձայնության գալը՝ 50-րդ հոդվածում հանցանքը մի խումբ անձանց կամ հանցավոր կազմակերպության կողմից կատարելու հանցակազմին, աջակցելը, նպաստելը, խորհրդակցելը համապատասխանում է հանցագործությանը օժանդակողի հատկանիշներին (46-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ), իսկ դրդելը՝

դրոշի հատկանիշներին (46-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ):  
Հանցափորձը սահմանված է Քրեական օրենսգրքի 44-րդ հոդվածում:

25.2. Պալերմոյի կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի բ-ենթակետի համաձայն, պետությունները կարող են փողերի վլացման հանցակցության վերաբերյալ նորմերը սահմանել իրենց «իրավական համակարգի հիմնական սկզբունքները պահպանելու պայմանով», որը նշանակում է, որ պետությունները կարող են իրենց հայեցողությամբ ամրագրել հանցակցության վերաբերյալ հանցակազմերը իրենց օրենսդրությունում: Շատ պետություններ, ինչպես Հայաստանի Հանրապետությունը, նախընտրում են փողերի վլացման հանցակցության նորմերն ամրագրել քրեական օրենսգրքի ընդհանուր բաժնում: Այսպիսով, Քրեական օրենսգրքում փողերի վլացման հանցակցության նորմերի ամրագրումը օրենսգրքի Ընդհանուր մասում, այլ ոչ թե Հատուկ մասի 296-րդ հոդվածի կազմում, չի հակասում փողերի վլացման միջազգային նորմերին:

25.3. **Արարքի սուբյեկտիվ հատկանիշը.** փողերի վլացման հանցանքներին կամ դրանց իրականացման փորձին մասնակցելը, միանալը, հանցավոր համաձայնության գալը, աջակցելը, դրոշելը, նպաստելը կամ խորհրդակցելը հանցափորձի տեսակներ են, որոնք, ըստ Քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածի, կատարվում են դիտավորությամբ՝ դիտավորյալ հանցագործություններում: Հանցակցության նման բնորոշումը հստակ ընդգծում է, որ անձինք գործում են միայն դիտավորյալ կերպով: Հանցակցության սուբյեկտիվ կողմը նախատեսում է մեղքի բացառապես դիտավորյալ ձև, ընդ որում, որոշակի հանցանքի կատարմանն այլ անձանց հետ համատեղ մասնակցելու դիտավորությունն արտահայտվում է միայն ուղղակի ձևով:

[Արամ Միքայելյանի և Արայիկ Վաղարշակյանի գործով  
Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԲԴ/0174/01/11](#)

որոշում, կետեր 16-17:

25.4. Սուբյեկտիվ կողմի այնպիսի հատկանիշներ, ինչպիսին են գիտակցումը և դիտավորությունը, կարող են բխեցվել գործի օբյեկտիվ փաստական հանգամանքներից, և ներպետական օրենսդրությունը պետք է հնարավորություն տա սուբյեկտիվ հատկանիշը հիմնավորել

առավելապես այդ եղանակով, քան պահանջել, որ ներկայացվի ուղղակի ապացույց, օրինակ՝ ինքնախոստովանություն:

[Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի կիրարկման օրենսդրական ուղեցույց](#), կետ 244:

25.5. Փողերի լվացմանը մասնակցելու, միանալու, հանցավոր համաձայնության գալու, աջակցելու, դրդելու, նպաստելու կամ խորհրդակցելու հանցակցության օրինակներ են հետևյալը՝

- Օրինակներ՝**
- Փաստաբանը և հաշվապահը օգնել են իրենց վստահորդին հիմնադրել կեղևային (shell) ընկերություններ՝ գիտակցելով, որ ընկերությունները հիմնադրվում են փողերի լվացման գործարքներ իրականացնելու համար (օժանդակություն):
  - Բանկի աշխատակիցը դիտավորյալ, նախնական համաձայնությամբ, անտեսել է կասկածելի գործարքների մասին բարձրաձայնել և կիրառել կանխարգելման մեխանիզմներ:
  - Անձը տրվել է ընկերոջ խնդրանքներին ու համաձայնվել է իր ընկերության անունից դուրս գրել անապրանք գործարքի դիմաց վճարման էլեկտրոնային հաշիվներ, և ընկերության բանկային հաշվին վճարումը ստանալուց հետո կանխիկացրել է գումարը և վերադարձրել ընկերոջը՝ նախօրոք իմանալով, որ ընկերը դա անում է հարկերից խուսափելու նպատակով, ինչպես նաև յուրաքանչյուր գործարքի դիմաց ստանալով որոշակի գումար: Դրանով օժանդակել է փողերի լվացման հանցագործությանը:
  - Անշարժ գույքի գործակալն օգնել է անձին գնել տուն՝ իմանալով, որ գումարը գոյացել է հանցավոր գործողություններից, և գործարքի ընթացքում տվել է խորհուրդներ, թե ինչպես լրացնի գործարքի փաստաթղթերը, թե ինչ փաստաթղթեր ներկայացնի, որ գումարի ծագումը կասկածներ չհարուցի: Անշարժ գույքի գործակալը կատարել է փողերի լվացմանը օժանդակելու հանցակցություն,

որն արտահայտվել է գործարքին աջակցելով, խորհուրդներ տալով:

- Անձն իր ընկերոջը խորհուրդ է տվել դիմել իր ծանոթ ֆինանսական գործակալին, ով կօգնի նրան հանցավոր ծագում ունեցող գումարը օրինական քաղաքացիական շրջանառության մեջ դնել: Թեև անձը իրավախախտին ընդամենը ուղղորդել է մեկ այլ անձի, սակայն այն հանգամանքը, որ նա գիտեր, թե ինչ նպատակով էր ուղղորդում նրան, արդեն իսկ փողերի լվացման հանցակցության ավարտված հանցագործություն է:

### 3. Նախորդող (պրեդիկատ) հանցագործություն

26. Նախորդող (պրեդիկատ) հանցագործությունը Քրեական օրենսգրքով սահմանված հանցավոր արարք է, որը նախորդել է փողերի լվացման հանցավոր արարքին, և որի կատարման արդյունքում ստացվել է փողերի լվացման առարկան՝ գույքը կամ եկամուտները: Նախորդող հանցագործության սահմանումը տրված է 296-րդ հոդվածի 5-րդ մասում, ըստ որի այդպիսին է Քրեական օրենսգրքով սահմանված ցանկացած հանցագործություն, որի արդյունքում, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, ստացվել է հանցագործության առարկա հանդիսացող գույքը:

27. Պրեդիկատ հանցագործությունը սահմանված է վերը նշված բոլոր հինգ կոնվենցիաներում:

27.1. Պալերմոյի կոնվենցիայում պրեդիկատ հանցագործությունը սահմանված է հետևյալ կերպ. «հիմնական իրավախախտում» նշանակում է՝ ցանկացած իրավախախտում, որի հետևանքով ստացվել են եկամուտներ, որոնց նկատմամբ կարող են կատարվել սույն Կոնվենցիայի 6-րդ հոդվածում նշված արարքները, որոնք հանցակազմ են ձևավորում» (հոդված 2, կետ-ը) (տե՛ս նաև [Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի կիրարկման օրենսդրական ուղեցույցը](#), կետ 226):

27.2. Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիա. «հիմնական իրավախախտում» նշանակում է՝ ցանկացած իրավախախտում, որի հետևանքով ստացվել են եկամուտներ, որոնց նկատմամբ կարող են կատարվել սույն Կոնվենցիայի 23-րդ հոդվածում նշված՝ հանցակազմ ձևավորող արարքները» (հոդված 2, կետ-ը).

27.3. [Վարչավայի կոնվենցիա](#). ««նախորդող հանցանք» նշանակում է՝ ցանկացած տեսակի քրեական հանցանք, որի արդյունքում ստացված եկամուտները կարող են դառնալ սույն Կոնվենցիայի 9-րդ հոդվածով սահմանված հանցանքի առարկա» (հոդված 1, կետ – ե):

27.4. ՀՀ վճռաբեկ դատարանը «հիմնական իրավախախտում» արտահայտության փոխարեն օգտագործում է «նախորդող հանցագործություն» արտահայտությունը (տե՛ս *(Աշուր Սուքիասյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի թիվ [ԵԷԴ/0054/01/15](#) գործով որոշման 16-25 կետերում)*): Իրավաբանական գրականության մեջ, ինչպես նշվեց վերևում, օգտագործվում է նաև «պրեդիկատ» (անգլ. predicate) եզրը, որն անգլերեն բառի վերարտադրությունն է, իսկ անգլերեն բառն օգտագործվում է ՄԱԿ-ի և ԵԽ-ի կոնվենցիաների անգլերեն լեզվով ավելի վաղ պաշտոնական թարգմանություններում՝ բացառությամբ Վարչավայի կոնվենցիայի՝ ինչպես նշված է վերևում:

28. Ի տարբերություն Քրեական օրենսգրքի, որում պրեդիկատ հանցագործություն է համարվում Քրեական օրենսգրքով արգելված ցանկացած արարք, միջազգային կոնվենցիաներով Մասնակից Պետություններից պահանջվում է պրեդիկատ հանցագործություններ սահմանել որոշակի հանցավոր արարքների համար: Օրինակ՝ Պալերմոյի կոնվենցիան որպես նախորդող հանցակազմ առաջարկում է դիտարկել բոլոր ծանր հանցագործությունները: Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայում առաջարկվում է նախորդող հանցագործությունները տարածել «*հիմնական իրավախախտումների ամենալայն շրջանակի նկատմամբ*» (հոդված 23, 2-րդ մասի ա-կետ):

29. Դա նշանակում է, որ ՀՀ Քրեական օրենսգրքը պրեդիկատ հանցագործությունների ավելի լայն շրջանակ է սահմանում, քան միջազգային կոնվենցիաները:

30. Պետությունները կարող են Վարչավայի կոնվենցիան վավերացնել նախորդող հանցագործությունների վերաբերյալ վերապահումով (հոդված 9, մաս 4-րդ): Հայաստանի Հանրապետությունը Կոնվենցիան վավերացրել է 9-րդ հոդվածի 4-րդ մասի բ-կետի վերապահումով՝ հայտարարելով, որ Կոնվենցիայի 9-րդ հոդվածով սահմանված փողերի լվացման հանցակազմը կարող է տարածվել միայն այն նախորդող հանցագործությունների նկատմամբ, որոնք սահմանված են Կոնվենցիայի հավելվածում: Հավելվածում սահմանված են հետևյալ հանցագործությունները.

- մասնակցությունը կազմակերպված հանցավոր խմբում և շորթում,
- ահաբեկչությունը, ներառյալ ահաբեկչության ֆինանսավորումը,
- մարդկանց թրաֆիքինգ և անօրինական փոխադրում,
- սեռական շահագործում, ներառյալ երեխաների սեռական շահագործումը,
- թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառություն,
- զենքի ապօրինի շրջանառություն,
- գողացված և այլ իրերի ապօրինի շրջանառություն,
- կոռուպցիա և կաշառակերություն,
- խարդախություն,
- դրամի կեղծում,
- ապրանքների կեղծում և հեղինակային իրավունքի խախտում,
- բնապահպանական հանցագործություններ,
- սպանություն, ծանր մարմնական վնասվածքների պատճառում,
- մարդկանց առևանգում, ազատության անօրինական սահմանափակում, և
- պատանդառություն, կողոպուտ կամ գողություն
- մաքսանենգություն դրամաշորթություն,
- փաստաթղթերի կեղծում
- հեղինակային իրավունքի խախտում, և
- ներքին առևտուր և շուկայական մեքենայություն:

31. Նշանակում է, որ Քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի փողերի լվացման հանցակազմը ներպետական պրակտիկայում կիրառելի է Քրեական օրենսգրքով սահմանված ցանկացած հանցագործությամբ ստացված գույքի/եկամուտների նկատմամբ, իսկ Վարչավայի կոնվենցիայի շրջանակում միջազգային համագործակցության համար փողերի լվացման հանցակազմը կիրառելի է միայն այնպիսի գույքի նկատմամբ, որը ստացվել է միայն վերը նշված հանցավոր արարքներով:

32. Նախորդող հանցագործության բացակայությունը բացառում է փողերի լվացման հանցակազմի գոյությունը, ուստի նմանատիպ գործերով մեղադրական դատավճիռ կայացնելիս դատարանը նախ պետք է հաստատված համարի նախորդող հանցագործության դեպքը, ինչպես նաև փողերի լվացման առարկա հանդիսացող գույքի՝ նախորդող հանցագործության արդյունքում ձեռք բերված լինելու հանգամանքը: Սակայն, պարտադիր չէ նախորդող հանցագործության վերաբերյալ դատավճռի առկայությունը, ինչպես նաև պարտադիր չէ, որ փողերի լվացման մեջ մեղադրվող անձը առնչություն ունենա նախորդող

հանցագործության հետ: Ապացուցման ենթակա է այն, որ գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով, և որ անձը գիտակցել ու նախատեսել է դրա՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված լինելը:

[Արսեն Սարգսյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0090/01/09 որոշում, կետ 11:](#)

33. Ըստ Վճռաբեկ դատարանի՝ փողերի լվացման համար անձին պատասխանատվության ենթարկելու և մեղադրական դատավճիռ կայացնելու համար անհրաժեշտ է ընդամենը փաստել, որ գույքը ձեռք է բերվել հանցավոր ճանապարհով, ինչը ամենևին չի ենթադրում այդ հանցագործության քրեաիրավական հատկանիշների ճշգրիտ նկարագրություն. տվյալ դեպքում բավարար է որոշակի ապացուցողական զանգվածով, այդ թվում՝ նաև անուղղակի ապացույցների համակցությամբ, հաստատված համարել, որ գույքը ձեռք է բերվել հանցավոր գործունեության արդյունքում: Ավելին, միջազգային հանրությունն այս ուղղությամբ որդեգրել է հենց անուղղակի ապացուցման մեթոդը, մասնավորապես, եթե բացակայում են նախորդող հանցագործության վերաբերյալ ուղղակի ապացույցներ, ապա գույքի հանցավոր ծագումը կարելի է հաստատված համարել անուղղակի ապացույցների համակցության համադրման և վերլուծության արդյունքում:

[Աշոտ Սուրիասյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԷԴ/0054/01/15 որոշում, կետ 21.1.](#)

34. Փողերի լվացման առարկա հանդիսացող գույքի հանցավոր ծագումը հաստատելու համար ոչ միայն անհրաժեշտ չէ նախորդող հանցագործության վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայություն, այլև տվյալ գույքի հանցավոր ծագման փաստը կարող է հաստատվել՝ **անկախ նախորդող հանցագործության՝ հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով հաստատված լինելու պայմանից**: Տվյալ դեպքում բավարար է գործի փաստերից բխող որոշակի տվյալների, այդ թվում՝ անուղղակի ապացույցների համադրման արդյունքում գալու ողջամիտ եզրահանգման առ այն, որ խնդրո առարկա գույքն ունի հանցավոր ծագում: Այլ կերպ՝ պահանջվում է միայն այնպիսի փաստական տվյալների ներկայացում, որոնք ողջամտորեն կվկայեն փողերի լվացմանը նախորդող արարքի հանցավոր լինելու մասին:

[Աշոտ Սուրիասյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԷԴ/0054/01/15 որոշում, կետ 22:](#)

## ԲԱԺԻՆ 2. ԿԱՇԱՌՔ ՍՏԱՆԱԼԸ և ԿԱՇԱՌՔ ՏԱԼԸ

Միջազգային իրավական ակտեր

35. Կոռուպցիոն հանցագործությունների միջազգային իրավական համակարգում կենտրոնական իրավական փաստաթուղթը [Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան](#) է: Կոնվենցիան պարտավորեցնում է Մասնակից Պետություններին ստեղծել կոռուպցիայի կանխարգելման ներպետական մարմիններ՝ քրեական գործերի քննության և բարեվարքության մասնագիտացված մարմիններ և համապատասխան իրավական մեխանիզմներ, կոնվենցիայի նորմերին համապատասխան քրեականացնել կոռուպցիայի հետ կապված մի շարք արարքներ, օրինակ՝ պաշտոնատար անձանց կաշառելը, ապօրինի հարստացումը, պաշտոնատար անձի նկատմամբ ազդեցությունն օգտագործելը, փողերի լվացումը, և այլն, ստեղծել հանցավոր ծագում ունեցող գույքի հայտնաբերման, արգելադրման, առգրավման և բռնագրավման, այդ թվում նաև քաղաքացիական բռնագանձման, իրավական մեխանիզմներ, ստեղծել միջազգային իրավական փոխօգնության իրավական հիմքեր և մեխանիզմներ և ստեղծել Կոնվենցիայի անդամ այլ պետություն գույքի վերադարձի համապատասխան իրավական մեխանիզմներ: Կաշառք տալու և կաշառք ստանալու հանցագործությունների սահմանումները նշված են 15-րդ հոդվածում:
36. [Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիան](#) ընդունվել է Եվրոպայի խորհրդի կողմից 1999 թվականի հունվարի 27-ին: Հայաստանի Հանրապետությունում կոնվենցիան ուժի մեջ է մտել 2006 թվականի մայիսի 1-ին: Կոնվենցիան պարտավորեցնում է Մասնակից Պետություններին կոռուպցիոն հանցագործությունների շրջանակում դիտարկել պաշտոնատար անձանց ակտիվ և պասիվ կաշառակերությունը, օտարերկրյա պաշտոնատար անձանց կաշառակերությունը, մասնավոր ոլորտում ակտիվ և պասիվ կաշառակերությունը, կոռուպցիոն բնույթի այնպիսի հանցագործություններ, ինչպիսին են փողերի լվացումը, ապօրինի հարստացումը, ինչպես նաև իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը (հոդվածներ 2-13): Այսպիսով, կոնվենցիան պարտավորեցնում է կոռուպցիայի հիմքով քրեական հետապնդումը տարածել հանրային ու մասնավոր ոլորտների, կաշառք տալու և կաշառք ստանալու հանցակազմերի, ազգային և օտարերկրյա պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց նկատմամբ: Կոնվենցիան ներառում է նաև նորմեր միջազգային իրավական փոխօգնության, հանձնման, տեղեկությունների և տվյալների փոխանակման և

հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավման մասին: ԳՐԵԿՈ-ն՝ Եվրոպայի խորհրդի՝ Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խումբը, մշտադիտարկում է Կոնվենցիայի կիրարկումը Մասնակից Պետությունների կողմից: Հայաստանի Հանրապետությունը ներկայումս գտնվում է համապատասխանության գնահատման չորրորդ փուլում: Այդ շրջանակում 2024 թվականի նոյեմբերին ԳՐԵԿՈ-ն ընդունել է համապատասխանության չորրորդ փուլի մշտադիտարկման [երկրորդ զեկույցի](#) լրացումը:

37. [Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիան](#) ընդունվել է Եվրոպայի խորհրդի կողմից 1999 թվականի նոյեմբերի 4-ին: Հայաստանի Հանրապետությունում կոնվենցիան ուժի մեջ է մտել 2005 թվականի մայիսի 1-ին: Կոնվենցիան պարտավորեցնում է Մասնակից Պետություններին ապահովել կոռուպցիայից տուժած անձանց համար քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոցներ, օրինակ՝ քաղաքացիական հայց ներկայացնելու հնարավորություն, նյութական, ոչ նյութական և բաց թողած եկամուտների հատուցման իրավունք: Կոնվենցիան նաև պարտավորեցնում է ապահովել հայցային վաղեմության ողջամիտ ժամկետներ (նվազագույնը երեք տարի), իրավաբանական անձանց քաղաքացիական պատասխանատվության հիմքեր, պայմանագրերի չեղարկման հնարավորություն, կոռուպցիայի մասին հաղորդում տված աշխատողների աշխատանքային իրավունքների պաշտպանությունը: Սույն կոնվենցիայի կիրարկման մշտադիտարկումը նույնպես արվում է ԳՐԵԿՈ-ի կողմից:

## ՀՀ իրավական ակտեր և նախադեպային պրակտիկա

38. Կոռուպցիոն հանցագործությունների ամբողջական ցանկը սահմանված է Քրեական օրենսգրքի Հավելված 1-ում: Կաշառք ստանալու և կաշառք տալու հանցակազմերը սահմանված են Քրեական օրենսգրքի 435-րդ և 436-րդ հոդվածներում՝ համապատասխանաբար: Ինքնուրույն պատասխանատվություն է նախատեսված նաև կաշառքի միջնորդության համար (հոդված 437): Կաշառք տալու և կաշառք ստանալու հանցագործությունների հետ բովանդակային կապ ունեն նաև 438-440-րդ հոդվածները:
39. Պասիվ կաշառակերությունը (կաշառք ստանալը) Քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածում սահմանված է որպես պաշտոնատար անձի կողմից անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն ստանալը, պահանջելը, կաշառք

տալու առաջարկ ներկայացնելը կամ կաշառք տալու առաջարկը կամ խոստումն ընդունելը՝ իր իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կաշառք տվողի կամ նրա մատնանշած անձի օգտին գործողություն կատարելու կամ չկատարելու համար:

40. Նշված սահմանումը գրեթե նույնական է 2003 թվականի Քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածում սահմանված հանցակազմի հատկանիշներին: Սակայն առկա են որոշ տարբերություններ նոր Քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածում, որոնք հետևյալն են.

- կաշառքի առարկայի շրջանակում ավելացվել են նաև «վճարային այլ գործիքները» և «ծառայությունը»,
- օբյեկտիվ հատկանիշների շրջանակում ավելացվել է «կաշառք տալու առաջարկ ներկայացնելը»,
- հստակեցվել է պաշտոնատար անձի վարքագծի հատկանիշների սահմանումը, որը սահմանվել է հետևյալ կերպ. պաշտոնատար անձի կողմից իր իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կաշառք տվողի կամ նրա մատնանշած անձի օգտին գործողություն կատարելը կամ չկատարելը,
- հանցակազմի ինքնուրույն ծանրացնող հանգամանք է սահմանված կաշառք ստանալը՝ կաշառք տվողի կամ նրա մատնանշած անձի օգտին թողտվության կամ հովանավորչության կամ այլ ապօրինի գործողության կամ անգործության համար,
- հանցակազմի ինքնուրույն ծանրացնող հանգամանք է սահմանված նաև կաշառք ստանալը՝ *«անձի իրավունքները, ազատությունները կամ օրինական շահերը ոտնահարելու սպառնալիքով»*,
- եթե նախկին օրենսգրքով ծանրացնող հանգամանքով հանցակազմ էր դիտվում դատավորի կողմից կաշառք ստանալը, 435-րդ հոդվածի 3-րդ մասում ավելացվել է *«դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի կողմից»* կաշառք ստանալը որպես առավել ծանրացնող հանգամանք:

41. Ակտիվ կաշառակերությունը (կաշառք տալը) Քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածում սահմանվել է որպես պաշտոնատար անձին կամ նրա մատնանշած անձին անձամբ կամ միջնորդի միջոցով գույք, ներառյալ դրամական միջոց,

արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն խոստանալը, առաջարկելը կամ տրամադրելը՝ պաշտոնատար անձի իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կաշառք տվողի կամ նրա մատնանշած անձի օգտին գործողություն կատարելու կամ չկատարելու համար:

42. Նշված սահմանումը նույնպես գրեթե նույնական է 2003 թվականի Քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածում սահմանված հանցակազմի հատկանիշներին: Սակայն, առկա են որոշ տարբերություններ նոր Քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածում, որոնք հետևյալն են.

- կաշառքի առարկայի շրջանակում ավելացվել են նաև «վճարային այլ գործիքները» և «ծառայությունը» եզրույթները,
- կաշառք ստացողի սուբյեկտների ցանկում ավելացվել է պաշտոնատար անձի «մատնանշած անձը» եզրույթը,
- փոփոխվել է պաշտոնատար անձի գործողությունների հատկանիշների սահմանումը հետևյալ կերպ՝
  - «պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունների շրջանակում» հատկանիշը փոխարինվել է «պաշտոնատար անձի իշխանական կամ ծառայողական լիազորությունները» հատկանիշով,
  - «պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնական դիրքն օգտագործելով» հատկանիշը փոխարինվել է «դրանցով [պաշտոնատար անձի իշխանական կամ ծառայողական լիազորություններով] պայմանավորված ազդեցությունն օգտագործելով» հատկանիշով:
    - Նշված փոփոխություններով Օրենսդիրը ներմուծել է Վճռաբեկ դատարանի նախադեպային դիրքորոշումն այն մասին, որ պաշտոնատար անձի լիազորությունները պետք է ընդգրկեն կազմակերպական-տնօրինչական կամ վարչատնտեսական գործառույթներ, ինչպես նաև, թե արդյոք անձն ընդունում է իրավական նշանակություն ունեցող և իրավական հետևանքներ առաջացնող որոշումներ (տե՛ս կետեր 45.2, 97 և 98 ներքևում):

- հանցակազմի ինքնուրույն ծանրացնող հանգամանք է սահմանված կաշառք տվողի կամ նրա մատնանշած անձի օգտին թողտվության կամ հովանավորչության կամ այլ ապօրինի գործողության կամ անգործության համար:
43. Նախկին օրենսգիրքը սահմանում էր կաշառք տվողին քրեական պատասխանատվությունից ազատելու խրախուսական նորմ, եթե տեղի է ունեցել կաշառքի շորթում, և այդ անձը մինչեւ կաշառք տալու մասին քրեական հետապնդման մարմիններին հայտնի դառնալը, բայց հանցանքի կատարումից հետո՝ ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում, այդ մասին կամովին հայտնել է քրեական հետապնդման մարմիններին եւ աջակցել հանցագործությունը բացահայտելուն: Քրեական նոր օրենսգիրքը նման հիմք չի նախատեսում: Կաշառք տվող անձը քրեական պատասխանատվությունից կարող է ազատվել միայն քրեական նոր օրենսգրքի Ընդհանուր մասում տեղ գտած հիմքերով (տե՛ս Գլուխ 12):
44. Քրեական նոր օրենսգրքում սահմանվել է «պաշտոնատար անձ» հասկացության լայն սահմանումը (հոդված 3, մաս 1-ին, 20-րդ կետ), որը ներառում է նաև «հանրային ծառայող» հասկացությունը՝ ի տարբերություն նախկին օրենսգրքի, որում այս երկու հասկացությունները տարբերակվում էին: Այդ պատճառով պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի համար առանձին հանցակազմեր կամ կարգավորումներ (օրինակ՝ նախկին օրենսգրքի 311.1 հոդվածով նախատեսված պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային պաշտոն զբաղեցնող անձի, հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալու հանցակազմը) քրեական նոր օրենսգրքով սահմանված չեն, քանի որ նոր կարգավորումների համաձայն հանրային ծառայողների այդ խմբերը ներառված են «պաշտոնատար անձ» հասկացության մեջ:
45. Կաշառք տալու և կաշառք ստանալու հանցակազմերի տարբեր հատկանիշները, հիմնականում 2003 թվականի քրեական օրենսգրքի 311 և 312-րդ հոդվածների հիմքերով, մեկնաբանվել են ՀՀ վճռաբեկ դատարանի ստորև նշված նախադեպային նշանակության որոշումներում:
- 45.1. [Լևոն Հարությունյանի վերաբերյալ 2020 թվականի մայիսի 26-ի թիվ ԵԱԴԴ/0079/01/16 որոշման մեջ](#) Վճռաբեկ դատարանը մեկնաբանել է կաշառք ստանալու հանցակազմի օբյեկտիվ հատկանիշները, այնուհետև զարգացրել է պաշտոնատար անձի

կողմից կաշառք ստանալու հանցակազմի օբյեկտիվ հատկանիշի մեկնաբանությունը առ այն, որ կաշառքը տրվում է պաշտոնատար անձի այնպիսի կոնկրետ գործողության կամ անգործության համար, որը մտնում է նրա լիազորությունների մեջ և օրինական է, հակառակ դեպքում, երբ կաշառք տրվում է այնպիսի գործողությունների **համար**, որոնք չեն մտնում պաշտոնատար անձի լիազորությունների մեջ, արարքը պետք է որակվի որպես խարդախություն պաշտոնանեական դիրքի օգտագործմամբ: Այդ իմաստով էական չէ, թե արդյոք կաշառք տվող անձը տեղյակ էր, որ պաշտոնատար անձը իրավասու չէր կատարել այն գործողությունները, որոնք կատարելու խոստումով առաջարկել, պահանջել կամ ստացել էր կաշառքը:

45.2. [Ալեքսանդր Ալվազյանի վերաբերյալ 2018 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ ԵՏԴ/0040/01/16](#) որոշման մեջ Վճռաբեկ դատարանը մեկնաբանել է, որ մասնագիտական գործառույթներ իրականացնող անձը չունի պաշտոնատար անձի կարգավիճակ, քանի որ կարևոր է, թե արդյոք տվյալ անձն իրականացնում է կազմակերպական-տնօրինչական կամ վարչատնտեսական գործառույթներ, ինչպես նաև, թե արդյոք անձն ընդունում է իրավական նշանակություն ունեցող և իրավական հետևանքներ առաջացնող որոշումներ: Դատարանը նաև մեկնաբանել է, որ կաշառք ստանալու հանցակազմն առկա է նաև այն դեպքում, երբ պաշտոնատար անձը պահանջել կամ ստացել է գումար իր լիազորությունների շրջանակում որոշակի գործողություն կատարելու **դեպքում** (ոչ թե գործողություն կատարելու **համար**)՝ գործողություն, որը նաև ոչ թե կատարելու է, այլ արդեն կատարել է, սակայն պահանջել կամ ստացել է գումարը որպես վարձատրություն:

45.3. [Կարինե Ժափոյանի վերաբերյալ 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ՇԴ/0004/01/14](#) որոշման մեջ Վճռաբեկ դատարանը սահմանել է, որ «կաշառք տալու կամ կաշառք ստանալու նմանակում» օպերատիվ-հետախուզական միջոցառումները չեն կարող կիրառվել պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի նկատմամբ, քանի որ նշված օպերատիվ-հետախուզական միջոցառումները «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի 30-րդ հոդվածով նախատեսված են միայն կաշառք

ստանալու կամ կաշառք տալու հանցագործության բացահայտման համար, որի սուբյեկտը կարող է լինել միայն պաշտոնատար անձը: Հակառակ դեպքում, ըստ Վճռաբեկ դատարանի, «կաշառք ստանալ» եզրույթը կնույնանար «ապօրինի վարձատրություն ստանալ» եզրույթի հետ, որն այլ հանցագործության օբյեկտիվ հատկանիշ է, մինչդեռ քրեական օրենքն անալոգիայով կիրառելն արգելվում է:

- 45.4. [Արտակ Հովհաննիսյանի վերաբերյալ 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵԿԴ/0096/01/13](#) որոշման մեջ Վճռաբեկ դատարանը մեկնաբանել է կաշառք տալու հանցակազմի օբյեկտիվ հատկանիշները, նշելով, որ արարքը սահմանված է ձևական հանցակազմով, քրեական պատասխանատվությունը կաշառք տալու համար վրա է հասնում ոչ միայն կաշառքի առարկան հասցեատիրոջը տրամադրելու, այլև որոշակի նյութական բարիք կամ առավելություն խոստանալու կամ առաջարկելու պահից՝ ի տարբերություն մինչև 2006 թվականի դեկտեմբերի 5-ի օրենքի փոփոխությունը, քանի որ մինչ այդ գործող խմբագրությամբ քրեորեն պատժելի էր միայն կաշառքը փաստացի տալը, հանցագործության առարկան հասցեատիրոջը փոխանցելը, և կաշառք տալու խոստումը կամ առաջարկը, քանի դեռ կաշառք տվողը կաշառքի առարկան պաշտոնատար անձին հանձնելու փորձ չէր կատարել, չէր կարող որակվել որպես ավարտված հանցագործություն: Կատարված փոփոխություններից հետո գործող օրենսդրական կարգավորմամբ, կաշառք տալու խոստումը կամ առաջարկն ինքնին ավարտված հանցագործություն է:
- 45.5. [Ռադիկ Պապյանի վերաբերյալ 2013 թվականի ապրիլի 18-ին թիվ ՏԴ/0053/01/12](#) որոշման մեջ Վճռաբեկ դատարանը մեկնաբանել է կաշառքի միջնորդության, կաշառք տալու փորձի դրդչության և խարդախության հանցակազմերի համադրությունը: Դատարանը սահմանել է, որ կաշառքի միջնորդությունը տարբերվում է կաշառք տալու հանցակցության ձևերից՝ դրդչությունից կամ օժանդակումից: Կաշառքի միջնորդության հանցակազմի մաս է նաև «կարծեցյալ միջնորդությունը»՝ երբ միջնորդը կաշառք տվողից վերցնում է կաշառքի առարկան պաշտոնատար անձին տալու պատրվակով, սակայն իրականում մտադրություն չունի փոխանցել այն և չի փոխանցում: Նման պարագայում արարքը

պետք է որակվի հանցագործությունների համակցության կանոններով՝ խարդախություն և կաշառք տալու փորձի դրոշմությունը:

45.5.1. Վերը նշված որոշումից մեկ տարի հետո Վճռաբեկ դատարանը Արտակ Հովհաննիսյանի վերաբերյալ նախադեպով սահմանեց, որ կաշառք տալու հանցակազմի համար բավարար պայման է կաշառք տալու խոստումը կամ առաջարկը, և հանցակազմի պարտադիր պայման չէ կաշառքի առարկայի հանձնումը պաշտոնատար անձին: Հետևաբար, տվյալ պարագայում արարքը պետք է որակվի ոչ թե որպես կաշառք տալու փորձ, այլ կաշառք տալու դրոշմություն:

45.6. [Էդուարդ Զաքարյանի վերաբերյալ 2014 թվականի օգոստոսի 15-ի -ին թիվ ԵԿԴ/0002/01/13](#) որոշման մեջ Վճռաբեկ դատարանը մեկնաբանել է կաշառք ստանալու համար պահանջ ներկայացնելու հանցակազմը, երբ պահանջը զոգորդվում է սպառնալիքով: Ըստ Վճռաբեկ դատարանի, այն դեպքերում, երբ պահանջը զուգորդվում է սպառնալիքով, մասնավորապես՝ կաշառք չտալու դեպքում անձի իրավունքներն ու օրինական շահերը ոտնահարելու վերաբերյալ կամ անձին այնպիսի պայմանների մեջ դնելով, որ վերջինս հարկադրված լինի կաշառք տալ՝ իր իրավունքներին և օրենքով պաշտպանվող շահերին սպառնացող հնարավոր վտանգը կանխելու համար, արարքը պետք է որակել որպես շորթամամբ կաշառք պահանջել: Այլ խոսքով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված «պահանջի» և ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված «շորթման» սահմանազատման հիմքում պետք է դրվի սպառնալիքի առկայության հանգամանքը: Դատարանը նաև նշել է, որ կաշառք տալու պահանջը և շորթման սահմանազատումը կարևոր նշանակություն ունի ոչ միայն հանցավորի արարքը ճիշտ որակելու, այլև կաշառք տվողին քրեական պատասխանատվությունից ազատելու հարցի լուծման համար:

## Ա. Կաշառք ստանալու հանցակազմը

### 1. Կոռուպցիայի սահմանումը

46. «Կոռուպցիա» կամ «կոռուպցիոն հանցագործություններ» հասկացությունները սահմանված չեն Քրեական օրենսգրքում (կամ որևէ օրենսդրական ակտում): Դրա փոխարեն Օրենսգրքում սահմանված են կոնկրետ կոռուպցիոն հանցագործությունների մասին նորմեր, և Օրենսգրքի Հավելված 1-ում տրամադրված է երեսունինը կոռուպցիոն հանցագործությունների վերնագրերի սպառիչ ցանկը:
47. Միջազգային իրավունքում նույնպես բացակայում է կոռուպցիայի միասնական իրավական սահմանում: Կոռուպցիայի վերաբերյալ միջազգային կոնվենցիաներում, ինչպես նաև Քրեական օրենսգրքում, միասնական իրավական սահմանման փոխարեն սահմանված են առանձին հանցագործությունների սահմանումներ: Օրինակ, [Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայում](#) բացակայում է կոռուպցիայի սահմանումը, փոխարենը սահմանված են կոռուպցիոն հանցագործությունների կոնկրետ տեսակներ, ինչպիսիք են, պաշտոնատար անձանց կաշառելը, ազդեցության չարաշահումը, ապօրինի հարստանալը, և այլն (15-ից 27-րդ հոդվածներ):
48. Միջազգային իրավունքի միակ փաստաթուղթը, որում սահմանված է կոռուպցիայի հասկացությունը, [Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի](#) ԵԽ կոնվենցիան է, որի 2-րդ հոդվածում, միայն այդ կոնվենցիայի նպատակների համար, «կոռուպցիան» սահմանված է որպես՝ *«ուղղակիորեն կամ անուղղակիորեն կաշառք կամ որևէ անհիմն օգուտ կամ այդպիսի օգուտի խոստում պահանջելը, առաջարկելը, տալը կամ ընդունելը, որը խախտում է կաշառք, անհիմն օգուտ կամ այդպիսի օգուտի խոստում պահանջողի կողմից ցանկացած պարտականության պատշաճ կատարումը կամ պահանջվող վարքագիծը»*: Այս սահմանումը ընդհանուր ձևակերպումներով ներառում է կոռուպցիայի կանխարգելման հիմնական հատկանիշները: Այն վերաբերում է կաշառք տալուն և վերցնելուն, այդ նպատակներին ուղղված ուղղակի և անուղղակի գործողություններին, սահմանում է կաշառքի առարկան ոչ միայն որպես գույք կամ դրամական միավոր, այլև՝ ցանկացած անհարկի առավելություն, նշում է հիմնական օբյեկտը՝ պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականության պատշաճ կատարման կամ պատշաճ հանրային վարքագծի խաթարումը, և սահմանում է կիրառման շրջանակը՝ հանրային ծառայության և մասնավոր հատվածի նկատմամբ:

49. Ի մի բերելով Քրեական օրենսգրքում և միջազգային կոնվենցիաներում կոռուպցիոն հանցագործությունների սահմանումները, կարելի է եզրահանգել, որ կոռուպցիոն հանցագործությունները այնպիսի հանցավոր արարքներ են, որոնք ներկայացնում են հանրային վտանգավորություն, կատարվում են հատուկ սուբյեկտի՝ պաշտոնատար անձանց կողմից (և՛ հանրային մարմինների, և՛ առևտրային կազմակերպությունների), պաշտոնեական դիրքի օգտագործմամբ, շահադիտական կամ անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, դիտավորությամբ, որոնք ուղղված են կաշառք վերցնողի, կամ սվողի, կամ որևէ երրորդ անձանց համար գույքային հոգուտ կամ այլ առավելություններ ստանալուն, ինչն էլ վնասում է հասարակության և առանձին քաղաքացիների օրինական շահերին:

## 2. Կաշառք ստանալու հանցագործության օբյեկտը

50. Քրեական օրենսգրքի Հավելված 1-ում սահմանված են կոռուպցիոն հանցագործությունները, որոնք ուղղված են մարդկանց սահմանադրական իրավունքների և ազատությունների (218-րդ, 219-րդ, 220-րդ, 221-րդ, 231-րդ և 232-րդ հոդվածներ), սեփականության, տնտեսության և տնտեսական գործունեության (255-րդ, 256-րդ, 258-րդ, 268-րդ, 269-րդ, 272-րդ, 273-րդ, 274-րդ, 275-րդ, 276-րդ, 277-րդ, 282-րդ, 284-րդ և 296-րդ հոդվածներ) և հանրային ծառայության շահերի դեմ (435-րդ, 436-րդ, 437-րդ, 438-րդ, 439-րդ, 440-րդ, 441-րդ, 442-րդ, 443-րդ, 444-րդ, 445-րդ, 477-րդ, 480-րդ, 481-րդ, 482-րդ, 486-րդ, 496-րդ, 497-րդ և 549-րդ հոդվածներ):

51. Կաշառք ստանալու հանցակազմի հիմական օբյեկտը, ըստ վերը նշվածի, հանրային ծառայության օրինական գործունեությունն ապահովող հասարակական հարաբերություններն են: Լրացուցիչ օբյեկտներ կարող են լինել մարդկանց սահմանադրական իրավունքներն ու երաշխիքները, օրինակ՝ կյանքը, առողջությունը, սեփականության իրավունքներն ապահովող հասարակական հարաբերությունները:

**Օրինակ՝** Ջինվորական ստորաբաժանման ղեկավարի կողմից կաշառք ստանալու հանցագործության օբյեկտը հանրային ծառայության օրինական գործունեությունն ապահովող հասարակական հարաբերություններն են, իսկ լրացուցիչ անմիջական օբյեկտ կարող է լինել զինվորների կյանքի, առողջության պահպանման, վատ վերաբերմունքի արգելքի սահմանադրական

երաշխիքների ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները:

52. [Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայում](#) կաշառք ստանալու հանցագործության օբյեկտը հանրային մարմինների գործունեության և հանրային գույքի ազնիվ, հաշվետու և պատշաճ կառավարման խրախուսումն է, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարում, այդ թվում նաև հանցավոր ծագում ունեցող գույքի հայտնաբերման ու վերադարձի նպատակով միջազգային իրավական համագործակցության հարաբերությունների (օրինակ, իրավական փոխօգնության ընթացակարգերի) խթանումը, աջակցումը և դյուրացումը պետությունների միջև (տե՛ս հոդված 1):
53. [Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի](#) կոնվենցիայում կոռուպցիոն հանցագործությունների օբյեկտը ավելի լայն է սահմանված և ներառում է ոչ միայն հանրային մարմինների բնականոն գործունեության և հանրային գույքի պաշտպանությունը, այլև սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացման համար անհրաժեշտ այնպիսի արժեքների պաշտպանությունը, ինչպիսիք են վստահությունը և հավատարմությունը, նաև տնտեսական մրցակցությունը պաշտպանելու անհրաժեշտությունը (տե՛ս [Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիայի բացատրական զեկույց](#), կետ 52):

2. Կաշառք ստանալու հանցագործության սուբյեկտը

54. **Կաշառք ստանալու հանցագործության սուբյեկտը** պաշտոնատար անձն է: Ի տարբերություն նախկին օրենսգրքի, որում «պաշտոնատար անձ» հասկացության բնորոշումը սահմանված էր միայն 308-րդ հոդվածի 4-րդ մասում, և դա նախատեսված էր միայն պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների համար, նոր Քրեական օրենսգրքում՝ տարաձայնություններից և իրավական անորոշությունից խուսափելու համար, ինչպես նաև ապահովելու համար, որ այդ հասկացության սահմանումը համապատասխանի Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի պահանջներին, Օրենսգրքի 3-րդ հոդված 20-րդ կետում ներկայացվել է «պաշտոնատար անձ» հասկացության միասնական, սպառիչ սահմանումը, որը նախատեսված է ողջ օրենսգրքի համար: Այդ սահմանումը հետևյալն է.

*«Հանրային ծառայող, հանրային պաշտոն զբաղեցնող անձ, պետական, պետական կառավարման համակարգի, տեղական ինքնակառավարման մարմնի, պետության կամ համայնքի կողմից ստեղծված ոչ առևտրային կազմակերպության կամ*

*հիմնարկի անունից հանդես գալու լիազորություն ունեցող կամ դրանց անունից իրավունք, պարտականություն կամ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ իրականացնող անձ,*

55. Սահմանումը ներառում է պաշտոնատար անձանց երեք խումբ, որոնք են.

– **Հանրային ծառայողը.**

- Հանրային ծառայության մասին օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ հանրային ծառայող է **հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող** անձը: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հանրային ծառայության պաշտոնը կարիերային առաջընթացով բնութագրվող հաստիքային միավոր է, որը նախատեսված է պետական ծառայության առանձին տեսակների համար նախատեսված պաշտոնների անվանացանկով կամ համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկով: Այստեղից բխում է, որ հանրային ծառայության ոլորտում հանրային ծառայություն մատուցող ոչ բոլոր աշխատողներն են համարվում հանրային ծառայողներ: Հանրային ծառայության միևնույն ստորաբաժանումում կարող են լինել աշխատակիցներ, որոնք, ըստ պաշտոնի անձնագրի, զբաղեցնում են հանրային ծառայության պաշտոն, այսինքն՝ հանրային ծառայողներ են, և կարող են լինել աշխատակիցներ, որոնք չեն զբաղեցնում հանրային ծառայության պաշտոն, հետևաբար, հանրային ծառայողներ չեն:

**Օրինակ՝** ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության Կենտրոն 1 բաժնի ավագ մասնագետը, ըստ քաղաքացիական ծառայության պաշտոնի [27-3-22.14-Մ4-1](#) անձնագրի, հանրային ծառայող է, քանի որ զբաղեցնում է քաղաքացիական ծառայության հաստիք, քաղաքացիական ծառայությունը պետական ծառայության տեսակ է, իսկ պետական ծառայությունը հանրային ծառայություն է (տե՛ս Հանրային ծառայության մասին օրենքի 3-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը): Հետևաբար, այդ հաստիքը զբաղեցնող անձը Քրեական օրենսգրքի հիմքով պաշտոնատար անձ է: Մինչդեռ, նույն ստորաբաժանումը կարող է ունենալ փորձագետի հաստիք, որը, ըստ պաշտոնի

անձնագրի, չի համարվում քաղաքացիական ծառայության պաշտոն, ու այդ դեպքում այդ աշխատակցի վրա չեն տարածվի Հանրային ծառայության մասին օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ մասի, օրինակ, կարիերային առաջընթաց ունենալու հաստիքային պայմանները:

#### **Օրինակ՝**

Երևան քաղաքի վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության մարմինների աշխատակիցները զբաղեցնում են հանրային ծառայության պաշտոն՝ վարչական պաշտոն, և նրանք հանրային ծառայողներ են, իսկ այդ մարմիններին կից ստեղծված հանձնաժողովների անդամները (5-9 անձ), թեև իրականացնում են հանրային ծառայություն, հանրային ծառայողներ չեն, քանի որ դրանք հասարակական հիմունքներով ստեղծված հաստիքներ են, որոնք հանրային ծառայության պաշտոնի հաստիքներ չեն: Հետևաբար, նրանք Քրեական օրենսգրքի իմաստով պաշտոնատար անձ չեն:

#### **– Հանրային պաշտոն զբաղեցնող անձը.**

- Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց շրջանակն ավելի նեղ է, քան հանրային ծառայողներինը: Հանրային ծառայության մասին օրենքի 4-րդ հոդվածի համաձայն, հանրային պաշտոնը դասակարգվում է պետականի ու համայնքայինի: Պետական պաշտոնները լինում են քաղաքական, վարչական, ինքնավար և հայեցողական, իսկ համայնքայինը՝ քաղաքական, վարչական և հայեցողական: Այսինքն, պետական և համայնքային պաշտոնները լինում են չորս տեսակի՝ քաղաքական, վարչական, ինքնավար ու հայեցողական, որոնց մանրամասն նկարագրությունը ներկայացված է «Հանրային ծառայության մասին» օրենքի 5-8-րդ հոդվածներում:

**Օրինակներ՝** – պետական քաղաքական պաշտոններն են ՀՀ նախագահի, վարչապետի, ԱԺ պատգամավորների, նախարարների պաշտոնները:

– Համայնքային քաղաքական պաշտոններն են համայնքների ղեկավարների և նրանց տեղակալների, համայնքի ավագանու անդամի պաշտոնները:

– Պետական վարչական պաշտոններն են մարզպետների և նրանց տեղակալների, դատական դեպարտամենտի ղեկավարի, Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարի, գլխավոր ռազմական տեսուչի և նրա տեղակալի պաշտոնները:

– Ինքնավար պաշտոններն են գլխավոր դատախազի և դատախազների, քննչական մարմինների ղեկավարների և ղեկավարների տեղակալների, քննիչների, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ղեկավարի պաշտոնները:

– Պետական հայեցողական պաշտոններ են մարզպետի խորհրդականի, օգնականի պաշտոնները, գլխավոր դատախազի, նախարարի մամուլի քարտուղարի պաշտոնները, նախարարությանը ենթակա պետական մարմնի, տեսչական մարմնի ղեկավարի օգնականի պաշտոնները, և այլն:

– Համայնքային հայեցողական պաշտոններ են համայնքի ղեկավարի խորհրդականի, մամուլի քարտուղարի, օգնականի և համայնքների ավագանու խմբակցությունների փորձագետների պաշտոնները:

- **Պետական կամ համայնքային մարմինների ոչ առևտրային կազմակերպությունների կամ հիմնարկների անունից հանդես գալու լիազորություն ունեցող կամ դրանց անունից իրավունք, պարտականություն կամ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ իրականացնող անձինք.**

- Պետական ոչ առևտրային կազմակերպություններ (ՊՈԱԿ). նման կազմակերպություններն ինքնին պետական են, և դրանց

հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս կառավարության: Հետևաբար, կազմակերպության այն աշխատակիցները, որոնք իրավունք ունեն հանդես գալ կազմակերպության անունից, պաշտոնատար անձինք են:

**Օրինակ՝** «Հայանտառ» ՊՈԱԿ-ը, որի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է, ստեղծվել է ՀՀ կառավարության որոշմամբ: ՊՈԱԿ-ի տնօրենը պաշտոնատար անձ է:

- Պետական կառավարման համակարգի կողմից հիմնադրված ոչ առևտրային կազմակերպություններ. Պետական կառավարման համակարգի մարմինների մասին օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ պետական կառավարման մարմիններն են կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա մարմինները: Նախարարությունների ցանկը սահմանվում է «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքով: Կառավարությանը ենթակա մարմինների սպառիչ ցանկը սահմանված է նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասում: Դրանք են, օրինակ, Կադաստրի կոմիտեն, Պետական եկամուտների կոմիտեն, Քաղաքաշինության կոմիտեն, և այլն: Վարչապետին ենթակա մարմինների սպառիչ ցանկը սահմանված է նույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասում: Դրանք են, օրինակ, Ազգային անվտանգության ծառայությունը, Արտաքին հետախուզության ծառայությունը, և այլն: Վերը նշված մարմինների կողմից հիմնադրված ոչ առևտրային կազմակերպությունների անունից հանդես գալու լիազորություն ունեցող անձինք պաշտոնատար անձինք են:

**Օրինակ՝** ՀՀ արդարադատության նախարարության կողմից հիմնադրված «Օրենսդրության գարգացման կենտրոն» հիմնադրամը, որի տնօրենը լիազորված է հանդես գալու հիմնադրամի անունից, հետևաբար, նա պաշտոնատար անձ է:

ՀՀ ներքին գործերի նախարարության Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն ՊՈԱԿ-ի տնօրենը կամ կազմակերպության անունից հանդես

գալու լիազորություն ունեցող այլ անձը պաշտոնատար անձ է:

- Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հիմնադրված ոչ առևտրային կազմակերպություններ. դա նախատեսված է Երևան քաղաքի տեղական ինքնակառավարման մասին օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի հիմքով, ըստ որի ավագանին իրավասու է ստեղծել Երևանի ենթակայության ոչ առևտրային կազմակերպություններ: Նման կազմակերպության անունից հանդես գալու իրավազորություն ունեցող աշխատակիցը պաշտոնատար անձ է:

**Օրինակ՝** Երևանի ենթակայության տակ գտնվող Երևանի հ.1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ը, կամ «Թ. 5 գրադարան» ՀՈԱԿ-ը, կամ «Ս. «Ջրբաշյանի անվան թիվ 8 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ը: Ամբողջական ցանկը հասանելի է Երևանի ավագանու հետևյալ [որոշման](#) հավելվածում:

- Պեպության կամ համայնքի կողմից ստեղծված ոչ առևտրային կազմակերպություններ. առաջինների հիմնադիրը համարվում է Հայաստանի Հանրապետությունը, ու դրանք ստեղծվում են կառավարության որոշման հիման վրա: Որպես կանոն, դրանք պետական հիմնադրամներ են, թեև կարող են լինել նաև ՊՈԱԿ-ներ: Իսկ համայնքի կողմից ստեղծված ոչ առևտրային կազմակերպությունները (ՀՈԱԿ) ստեղծվում են Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 16-րդ հոդվածի 14-րդ կետի հիման վրա, ըստ որի համայնքի ավագանին որոշում է կայացնում, համայնքի մասնակցությամբ համայնքային ոչ առևտրային կազմակերպության (ՀՈԱԿ) ստեղծման մասին: Նման կազմակերպությունների անունից հանդես գալու լիազորություն ունեցող անձինք պաշտոնատար անձ են:

**Օրինակ՝** «Երևանի պետական համալսարան» [հիմնադրամը](#), որի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս ՀՀ կառավարության: Այս կազմակերպության անունից հանդես գալու լիազորված անձը պաշտոնատար անձ է, օրինակ՝ ռեկտորը: Իսկ, օրինակ, ԲՈՒՀ-ի դասախոսը պաշտոնատար անձ չէ:

**Օրինակ՝** Գյումրու համայնքապետարանի կողմից հիմնադրված [«Գյումրու զբոսայգիներ և պուրակներ»](#) ՀՈԱԿ-ը (համայնքային ոչ առևտրային կազմակերպություն): Այս կազմակերպության տնօրենը պաշտոնատար անձ է:

- *Պետական կամ համայնքային կառավարչական հիմնարկներ.* 2021 թվականին Պետական կառավարչական հիմնարկների մասին օրենքում կատարվեց փոփոխություն, որով վերացվեց պետական կառավարչական հիմնարկ հասկացությունը և սահմանվեց միայն համայնքային կառավարչական հիմնարկ հասկացությունը: Համայնքային կառավարչական հիմնարկները իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ոչ առևտրային կազմակերպություններ են, որոնք հիմնադրվում են համայնքային սեփականության կառավարման, համայնքի առօրյա կարիքների սպասարկման և տեղական նշանակության հանրային ծառայությունների իրականացման համար:

**Օրինակ՝** «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարական հիմնարկը, որի միջոցով ավագանին և քաղաքապետը իրականացնում են իրենց լիազորությունները, համակարգում են Երևանի ենթակայության հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների գործունեությունը, և այլն: Անձը, ով լիազորված է հանդես գալու հիմնարկի անունից, Քրեական օրենսգրքի հիմքով պաշտոնատար անձ է:

56. Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայում «պաշտոնատար անձ» հասկացությունը մանրամասնորեն սահմանված է 2-րդ հոդվածի ա-կետի (i-iii) ենթակետերում: Դրանց համեմատությունը Քրեական օրենսգրքում նույն հասկացության սահմանման հետ, ինչպես շարադրվել է վերևում, ցույց է տալիս, որ Քրեական օրենսգրքի սահմանումը համահունչ է կոնվենցիայի հետ:

### 3. Կաշառքի առարկան

57. Քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածում կաշառքի առարկան է գույքը, ներառյալ՝ **դրամական միջոցը, արժեթուղթը, վճարային այլ գործիքը,**

**գույքի նկատմամբ իրավունքը, ծառայությունը կամ որևէ այլ առավելությունը:**

58. Այս ձևակերպումը ավելի հստակ է ու լայն, քան նախկին օրենսգրքի սահմանումը, որում բացակայում էին «դրամական միջոց», «վճարային այլ գործիք» և «ծառայություններ» հասկացությունները:
59. [Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայում](#), որն այս ձևակերպման հիմնական միջազգային ուղեցույցն է, կաշառքի առարկան սահմանված է հնարավորինս լայն արտահայտությամբ՝ «անտեղի (անհարկի) առավելություն» (հոդվածներ 15, 16, 18, 19), այդ թվում նաև առևտրային կաշառքի համար (հոդված 21): Այս արտահայտությունը ընտրվել է այն միտումով, որ կոնվենցիայի հեղինակները ցանկացել են որքան հնարավոր է լայն ու ճկուն իրավական սահմանում առաջարկել Մասնակից Պետություններին, որ վերջիններս իրենց ներպետական օրենսդրությունում ունենան հնարավորությունների լայն շրջանակ կաշառքի առարկան սահմանելիս՝ այդ թվում նաև հաշվի առնելով տեխնոլոգիական զարգացումները և հասարակական հարաբերություններում փոփոխությունները:
60. Նշված արտահայտության որոշիչ չափանիշը այն է, թե արդյոք առավելությունը «անհարկի» է, այսինքն այնպիսին, որ ի սկզբանե նպատակաուղղված է առավելություն ստացողի կողմից իր պաշտոնեական լիազորությունների վրա անօրինական ազդեցություն գործելուն:
61. «Անհարկի» հասկացությունը ունի ոչ միայն իրավական, այլև էթիկական բովանդակություն: Հանրային ծառայության մասին օրենքի 29-րդ հոդվածում սահմանված են հանրային ծառայողների և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից նվերների ընդունման արգելքի նյութաիրավական և ընթացակարգային իրավական հիմքերը, որոնց խախտումը հանգեցնում է կարգապահական պատասխանատվությանը: Այդ հոդվածի 3-րդ մասում «նվերը» սահմանված է որպես «ցանկացած գույքային առավելություն», որում «գույքը» մեկնաբանվում է լայնորեն, այդ թվում՝ «գործողություններ, որոնց հետևանքով անձն ստանում է օգուտ կամ առավելություն»:
- 61.1. Կոնվենցիայի հայերեն տեքստում «անհարկի առավելություն» արտահայտության փոխարեն օգտագործվում է «ոչ իրավաչափ առավելություն» արտահայտությունը, որն անգլերեն արտահայտության ոչ բառացի, բայց բովանդակային թարգմանությունն է:

62. [ՖԱԹՖ-ի հանձնարարականներում](#), գույքը մեկնաբանվում է որպես «ցանկացած տեսակի՝ նյութական կամ ոչ նյութական, շարժական կամ անշարժ, շոշափելի կամ ոչ շոշափելի ակտիվները, ինչպես նաև դրանց նկատմամբ իրավունքները կամ շահառությունը հաստատող իրավական փաստաթղթերը կամ գործիքները»:
63. Այսպիսով, «անհարկի առավելությունը» ներառում է ցանկացած գույքային և ոչ գույքային, շոշափելի կամ ոչ շոշափելի բարիք, որն անձը ստանում է, պահանջում է, առաջարկում է իրեն տալ, կամ ընդունում է դրա առաջարկը կամ խոստումը:
64. Տարբեր պետությունների օրենքներում կաշառքի առարկան ունի հետևյալ սահմանումները.
- Հնդկաստանի [Կոռուպցիայի դեմ 1988 թվականի օրենքում](#) կաշառքի առարկան սահմանված է «անհարկի առավելություն» հասկացությամբ, ըստ որի այդ հասկացությունը չի սահմանափակվում միայն գումարով չափվող կամ նյութական առավելությամբ (հոդված 2, դ-կետ):
  - Միացյալ Նահանգների [«Հանրային պաշտոնյաներին և վկաներին կաշառելու մասին»](#) օրենքի 201 հոդվածը սահմանում է կաշառքի առարկայի երկու տեսակ: Առաջինը սահմանված է որպես «արժեք ներկայացնող ցանկացած բան», որը եթե արվում է հանրային ծառայության դիմաց (կամ հանրային ծառայություն կամ որոշում գնելու դիմաց), համարվում է կաշառակերություն և դրա համար սահմանված է մինչև 15 տարվա ազատազրկում: Մյուսը սահմանված է որպես «գնահատանք», որը տրվում է ծառայության դիմաց՝ ի նշան երաշխագիտության, որի մասին կողմերը նախօրոք չեն պայմանավորվել, ու այդ պատճառով նման արարքի հանրային վտանգավորությունը գնահատվում է նվազ, ու դրա դրա համար սահմանված է մինչև երկու տարվա ազատազրկում:
  - [Գերմանիայի քրեական օրենսգրքում](#) կաշառքի առարկան սահմանված է մեկ հավաքական եզրով՝ «օգուտ» (հոդված 332), իսկ բացառապես ներկայացուցչական մարմնի՝ պառլամենտարիստների առնչությամբ կաշառքի առարկան սահմանված է «անհարկի առավելություն» հասկացությամբ (հոդված 108e):
  - [Սինգապուրի Կոռուպցիայի կանխման օրենսգրքում](#) կոռուպցիայի առարկան սահմանված է «գնահատանք» (gratification) հավաքական տերմինով, որի մեկնաբանությունը օրենսգրքում ներառում է գումար,

նվեր, վարկ, պարգևավճար, տոկոսավճար, արժեթուղթ, անշարժ կամ շարժական գույք կամ գույքի նկատմամբ իրավունք, ցանկացած ծառայություն, լավություն կամ առավելություն, այդ թվում՝ կարգապահական տույժ կամ քրեական պատիժ նախատեսող վարույթի կարճում, որևէ իրավունքի կամ պաշտոնական լիազորության կատարում կամ կատարման արգելում, ինչպես նաև նշված գործողություններով դրսևորվող պարգևավճար:

- [Տրանսիայի քրեական օրենսգրքում](#) կաշառքի առարկան ներառում է «առաջարկություններ, խոստումներ, նվիրատվություններ կամ առավելություններ»: Ցանկացած առավելություն, անկախ արժեքից, համարվում է կաշառք: Նվազագույնի սկզբունքը կաշառակերության հողվածներում չի կիրառվում: Նունիսկ փոքրիկ նվերը կարող է համարվել կաշառք: Առավել կարևոր է արարքի սուբյեկտիվ հատկանիշը: Հյուրասիրությունը, անկախ գումարային չափից, նույնպես կարող է համարվել «առավելություն», եթե սուբյեկտիվ հատկանիշը նույնպես առկա լինի:

65. «**Գույքը**» քաղաքացիական իրավունքների օբյեկտ է, Քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածում գույքը մեկնաբանվում է ըստ Քաղաքացիական օրենսգրքում այդ հասկացության իրավական բովանդակության: Քաղաքացիական օրենսգրքի 134-րդ հոդվածում սպառիչ կերպով սահմանված են գույքի երկու տեսակների՝ անշարժ ու շարժական գույքի բացատրությունը:

66. «**Դրամական միջոցի**»՝ որպես կաշառքի առարկայի բացատրությունը ներկայացված է Քրեական օրենսգրքի 291-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետում, ըստ որի **օրենսգրքի իմաստով** (կանխիկ) դրամական միջոցներ են համարվում թղթադրամների և գանձապետական տոմսերի, մետաղադրամների տեսքով դրամանիշները, այդ թվում՝ շրջանառությունից հանված կամ հանվող, սակայն շրջանառության մեջ գտնվող դրամանիշների հետ փոխանակման ենթակա դրամանիշները:

67. «**Արժեթղթի**» իրավական սահմանումը տրված է ՀՀ «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասում, ըստ որի արժեթղթեր են համարվում բաժնետոմսերը, բաժնետոմսերով ամրագրված իրավունքներին համարժեք իրավունքներ տվող այլ արժեթղթերը, պարտատոմսերը և պարտքային այլ արժեթղթերը, ներդրումային ֆոնդերի փայերը, բաժնետոմսերը և այլ բաժնային արժեթղթերը, շահույթի բաշխման

համաձայնությունը, նման համաձայնությանը մասնակցությունը վկայող փաստաթուղթը, դրամական շուկայի գործիքները, կապիտալի (միջոցների) ներգրավման նպատակով օգտագործվող ցանկացած ներդրումային համաձայնությունը:

68. **«Վճարային այլ գործիքները»** Անկանխիկ գործառույթների մասին օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող վճարային գործիքներ են, և դրանց մի քանի տեսակների մասին նշվում է Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին օրենքում, համաձայն որի դրանք են վճարային քարտերը, չեկերը, էլեկտրոնայի փողերը և Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած այլ վճարային գործիքները, օրինակ՝ էլեկտրոնային դրամապանակները, ՔՅՈՒԱՐ (տեխնոլոգիայի) կողմից կիրառմամբ վճարումները և փոխանցումները:
69. **«Գույքի նկատմամբ իրավունքը»** նույնպես մեկնաբանվում է Քաղաքացիական օրենսգրքում այդ արտահայտության իրավական բովանդակությամբ: Օրենսգրքի Չորրորդ բաժնում սահմանված են ընդհանուր սեփականության (Գլուխ 12), հողի նկատմամբ սեփականության և գույքային իրավունքների (Գլուխ 13), բնակելի տարածության սեփականության և այլ գույքային իրավունքների (Գլուխ 14), գրավի, հիփոթեքի (Գլուխ 15) վերաբերյալ մանրամասն իրավակարգավորումներ:

69.1. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի ներքո գույքային իրավունքը նույնպես մեկնաբանվում է լայնորեն՝ հետևյալ բովանդակությամբ.

*«Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի առաջին մասով նախատեսված «գույք» հասկացությունն ինքնուրույն նշանակություն ունի, որը չի սահմանափակվում նյութական իրերի նկատմամբ սեփականության իրավունքով և կապված չէ ներպետական օրենսդրության ձևական դասակարգման հետ: Ինչպես նյութական իրերը, գույքային հանդիսացող որոշակի այլ իրավունքներ ու շահեր նույնպես կարող են համարվել «գույքային իրավունքներ» և հետևաբար նաև «գույք» սույն դրույթի իմաստով» (Մինասյանը և Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի, թիվ [27651/05](#), 23/06/2009թ., կետ 55):*

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գույքային իրավունք է ճանաչել հետևյալը.

- հոտատարածքը, տունը և բնակարանը,
- շարժական գույքը, օրինակ, անձնական իրեր, ընտանեկան կենդանիներ,
- ընկերության բաժնեմասեր,
- մտավոր սեփականություն,
- կազմակերպության բարի համբավը,
- դատական ակտով բավարարված հայցապահանջ,
- սոցիալական ապահովության իրավունք,
- աշխատավարձ և թոշակ,
- Ձկնաորսության, տաքսի վարելու, այլկոհոլային խմիչքներ վաճառելու թույլտվություն կամ լիցենզիա, փաստաբանի լիցենզիա՝ եթե այդ թույլտվությունները և լիցենզիաները արդեն օգտագործվել են և սեփականատերերին բերել են հասույթներ՝ մինչև լիցենզիայի կամ թույլտվությունից զրկելը;
- Գույքային իրավունք ունենալու լեգիտիմ ակնկալիքը:

70. «**Ծառայությունը**», ինչպես և գույքը, նույնպես քաղաքացիական իրավունքների օբյեկտ է և մեկնաբանվում է Քաղաքացիական օրենսգրքում այդ հասկացության իրավական բովանդակությամբ: Մասնավորապես, Քաղաքացիական օրենսգրքի 777-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծառայությունը որոշակի գործողություններ կատարելն է կամ որոշակի գործունեություն իրականացնելը: Հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 44-րդ կետի համաձայն՝ ծառայությունը գործողություն է, որի արդյունքը չունի նյութական բնույթ, և որը ստացողը սպառում է այդ գործողության արդյունքը:

**Օրինակներ՝** Ստորև օրինակներ են Միացյալ Նահանգների երկու դատական ակտերից՝ կաշառքի առարկայի մեկնաբանության մասին:

*Միացյալ նահանգներն ընդդեմ Ռայթի (United States v. Wright (3d Cir. 2015))* գործով դատական ակտում որոշվել է, որ քաղաքային խորհրդի պաշտոնատար անձը կառուցապատող ընկերությունից ընդունել էր անթույլատրելի նվերներ ու ծառայություններ, այն է՝ ստացել էր 14 ամիս մի բնակարանում առանց վարձավճարի ապրելու

իրավունք, անվճար իրավաբանական ծառայություն կառուցապատող ընկերության կողմից վարձված իրավաբանի կողմից, որպեսզի վերջինս իրականացներ իրավաբանական ներկայացուցչություն պաշտոնատար անձի ամուսնալուծության ձգձգվող դատական վարույթում:

*Միացյալ Նահանգներն ընդդեմ Դիմորայի* ([United States v. Dimora \(6th Cir. 2020\)](#)) գործում տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարը ճանաչվել է մեղավոր իր պաշտոնական լիազորությունների իրակացման կապակցությամբ անթույլատրելի նվերներ ու ծառայություններ ստանալու համար, մասնավորապես՝ խոշոր գումար, տան անվճար վերանորոգում, թանկանոց հյուրասիրություններ (ընթրիք), ճանապարհորդություն Լաս Վեգաս, մարմնավաճառների ծառայություններ:

71. «Որևէ այլ առավելություն» հասկացությունը նման է Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայում օգտագործվող «անհարկի առավելություն» հասկացությանը (պաշտոնական թարգմանություններում նաև օգտագործվում է «անիրավաչափ առավելություն» արտահայտությունը): Դա լայն արտահայտություն է, և, ինչպես նշվեց վերևում, «առավելություն» եզրը միջազգային իրավունքում ընտրվել է այն մտադրությամբ, որ դրա բովանդակությունը ընդգրկի որքան հնարավոր է շատ արարքներ: Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի [Կոնվենցիայի կիրարկման օրենսդրական ուղեցույցում](#) նշվում է, որ առավելությունը կարող է լինել շոշափելի և ոչ շոշափելի առարկաներ (կետ 283): Քրեական իրավունքի մասին կոնվենցիայի [Բացատրական գեկույցում](#) «անհարկի» եզրույթը մեկնաբանված է որպես մի բան, որը կաշառք ստացողը իրավունք չունի ընդունել կամ ստանալ, իսկ կոնվենցիայի հեղինակները այդ եզրույթը ընդունել են այն նպատակով, որ բացառեն օրենքով կամ վարչարարությամբ սահմանված ցանկացած առավելություն՝ այդ թվում նվազագույն արժեք ունեցող նվերներ, հասարակության կողմից լայնորեն ընդունվող գնահատանքներ (կետ 38):
72. Նման մոտեցում է ամրագրվել նաև նաև ՀՀ բարեվարքության համակարգում, որում «նվեր» հասկացությունը ներառում է «ցանկացած գույքային առավելություն», որում նույնպես «գույքը» ներառում է ոչ միայն շոշափելի, այլև ոչ շոշափելի գույքային հասկացություններ, օրինակ՝ ներված պահանջ, անհատույց կամ ակնհայտ անհամարժեք ցածր գնով պահանջի զիջում,

անհատույց կամ անհամարժեք ցածր գնով մատուցված ծառայություն կամ կատարված աշխատանք, ուրիշի գույքի անհատույց օգտագործում կամ այլ գործողություններ, որոնց հետևանքով անձն ստանում է օգուտ կամ առավելություն (տե՛ս Հանրային ծառայության մասին օրենք, հոդված 29-ի, մաս 3-րդ):

73. Նշվածի իմաստով, կաշառք ստանալու հանցակազմ կարող են պարունակել պաշտոնատար անձի համար ստորև ներկայացված օրինակներում ներկայացված գործողությունները, որոնք Հանրային ծառայության օրենքի իմաստով կարող են համարվել ոչ թույլատրելի «նվեր»՝ (որպես բարեվարքության կատեգորիա), իսկ Քրեական օրենսգրքի իմաստով՝ կաշառքի առարկա:

#### **Օրինակներ՝**

- Պետական մարմնի կապալառու կազմակերպությունը հոգացել է գնումների հարցերով պատասխանատու պաշտոնատար անձի որդու բուժման ծախսերը: Արդյունքում, պաշտոնատար անձը ստացել է գույքային առավելություն կամ օգուտ, որը, եթե կատարվել է իր պաշտոնեական լիազորությունների հետ կապված, համարվում է անթույլատրելի նվեր կամ կաշառք:
- Պաշտոնատար անձն իր հարսանեկան արարողության ժամանակ ստացել է բազմաթիվ նվերներ՝ ոսկյա մատանի, ապարանջան, դրամական միջոց, հագուստներ, ինքնաթիռի տոմս, հյուրանոցի ամրագրում՝ կեցության ողջ ժամանակահատվածի համար ամբողջությամբ վճարված: Այս ամենը կարող է համարվել կաշառքի առարկա կամ, Հանրային ծառայության մասին օրենքի 29-րդ հոդվածի իմաստով՝ անթույլատրելի նվեր:
- Կաշառքի առարկա (կամ անթույլատրելի նվեր) կարող են համարվել պաշտոնատար անձին հյուրասիրելը, որդու ուսման վարձը վճարելը, պաշտոնատար անձին անհարկի ծառայողական առաջընթաց ապահովելը, ամառանոցի անհատույց վերանորոգումը, վերանորոգման շինանյութերի անհատույց տրամադրելը, մեքենան անհատույց վերանորոգելը,

գիտական ստեղծագործությունում համահեղինակ նշելը, և այլ նմանատիպ ծառայություններ կամ, ինչպես հասարակությունում տարածված է ասել՝ «լավություն»:

74. «Առավելության՝ որպես կաշառքի առարկայի օրինակներ են հետևյալ հղումները այլ պետությունների դատական որոշումներից:

**Օրինակներ՝** Ֆրանսիայի Վճռաբեկ դատարանի [թիվ 21-83.437 վճռում](#) դատարանը որոշել է, որ այն հանգամանքը, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձը մասնակցել էր մասնավոր կազմակերպության միջոցառմանը, որին ուղևորվելու ճանապարհաձախսը վճարել էր կազմակերպությունը, դեռ բավարար չէր որոշելու, որ նման առավելությունը պասսիվ կոռուպցիայի հանցակազմ է, այլ կարևոր էր նաև ապացուցելը, որ ցանկացած առավելություն (նվեր, ծառայություն, ճամփորդություն) տրամադրվել է պաշտոնատար անձի լիազորությունների հետ կապված որևէ գործողության (անգործության) դիմաց:

Իսպանիայի Գլխավոր տրիբունալի՝ [Գյուրտեյի գործով](#) դատական ակտում առողջապահության նախարարի ամուսինը, ով քաղաքապետ էր, մեղադրվում էր ոչ միայն գումարի տեսքով կաշառք ստանալու, այլև անթույլատրելի նվերներ և ծառայություններ ստանալու մեջ օրինակ՝ ճամփորդական ծախսերի հատուցում, բնակարանի անվճար վերանորոգում:

4. Կաշառք ստանալը, պահանջելը, առաջարկ անելը և ընդունելը, խոստում տալը

75. Քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածը սահմանում է պասիվ կաշառակերության հինգ գործողություններ՝ կաշառք **ստանալը**, **պահանջելը**, **առաջարկ** ներկայացնելը, **առաջարկություն** ընդունելը և **խոստում** ընդունելը:

76. Միջազգային կոնվենցիաներում նշված գործողությունները սահմանված են հավաքական կերպով: [Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայում](#) սահմանված է կաշառք (կամ ոչ իրավաչափ առավելություն) *առաջարկելը* և *ընդունելը*: [Պալերմոյի](#) կոնվենցիայում նույնպես սահմանված է կաշառք (կամ

անհրավաչաւի նախապատվութիւն) *առաջարկելը* և *ընդունելը*: [Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիայում](#) սահմանված է կաշառք, անհիմն օգուտ կամ օգուտի խոստում *պահանջելը*, *առաջարկելը* կամ *ընդունելը*:

76.1. Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի հայերեն պաշտոնական թարգմանության տեքստում 15-րդ հոդվածի բ-կետում «առաջարկել» եզրույթը (հոմանիշը՝ «հայցել», անգլ. solicitation) սխալմամբ թարգմանվել է որպես «շորթում»: [Պալերմոյի կոնվենցիայի հայերեն տեքստի 8-րդ հոդվածի 1-ին մասի բ-կետում](#) «առաջարկել» եզրույթը (հոմանիշը՝ «հայցել», անգլ. solicitation) նույնպես թարգմանվել է որպես *շորթում*: Հայերեն թարգմանությունը անգլերեն բնօրինակում օգտագործված բառի համարժեք տերմինը չէ:

77. **Կաշառք ստանալը արվում է ուղղակիորեն կամ անուղղակիորեն** (այդ թվում նաև կաշառք տալու պահանջ ու առաջարկ ներկայացնելը կամ կաշառք ստանալու առաջարկություն ու խոստում ընդունելը): Կաշառքը ուղղակիորեն ստանալ ասելով պետք է հասկանալ պաշտոնատար անձի կողմից կաշառքի առարկան անձամբ ամբողջությամբ կամ մաս-մաս ստանալը կամ պահանջը, առաջարկությունը անձամբ ընդունելը: Անուղղակիորեն ասելով պետք է հասկանալ այդ գործողությունները միջնորդի միջոցով կատարելը (կաշառքի միջնորդության մասին տե՛ս մանրամասներեն 102-104 կետերում):

78. Քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածում կաշառքը միջնորդի միջոցով ստանալը սահմանված է բառացիորեն, իսկ միջազգային կոնվենցիաներում օգտագործվում է «անուղղակիորեն» եզրույթը: Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի [կիրարկման օրենսդրական ուղեցույցում](#) բացատրվում է, որ կոնվենցիայի 15-րդ հոդվածում օգտագործված «անուղղակիորեն» եզրույթը պետք է հասկացվի միջնորդի իմաստով (կետ 201): [Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիայի 3-րդ հոդվածում](#) նույնպես կաշառք ստանալու կամ պահանջելու գործողությունները սահմանված են որպես ուղղակիորեն կամ անուղղակիորեն կատարվող գործողություններ, իսկ [Բացատրական զեկույցում](#) ներկայացվում է, որ կաշառքի ստացումը նախատեսվում է նաև երրորդ անձանց (կնոջ, գործընկերոջ, կազմակերպության, քաղաքական կուսակցության, և այլն) կամ միջնորդների միջոցով (կետ 42):

79. **Կաշառք ստանալը արվում է բացահայտորեն կամ քողարկված** կերպով: Այս մասին Քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածում բառացիորեն նշված չէ:

Սակայն, Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիայի [Բացատրական գեկույցում](#) կոնվենցիայի 3-րդ հոդվածի (պասիվ կաշառակերությունը) մեկնաբանությունում նշվում է, որ կաշառք տալու պահանջը կամ առաջարկը կարող է լինել պաշտոնատար անձի այնպիսի միակողմանի գործողությամբ, որով նա որոշակիորեն (explicitly) կամ քողարկված (implicitly) ձևով (հոմ.՝ լռելյալն) տեղեկացնում է այլ անձի, որ նա պետք է «վճարի» իր որևէ գործողության կատարման կամ կատարումից ձեռնպահ մնալու համար (կետ 41): Սրանից էլ բխում է այն մտեցումը, որ կաշառք ստանալը կարող է հիմնավորվել ոչ միայն ուղղակի ապացույցներով, այլև անուղղակի ապացույցներից բխեցված մտահանգումով, քանի որ քողարկված ձևով կաշառք ստանալը դժվար է հիմնավորել ուղղակի ապացույցներով (տե՛ս, ավելի մանրամասն, 112-118 կետերում):

79.1. Անգլերեն implicit բառի հոմանիշը դժվար է գտնել հայերենում: Որոշ մասնագետներ գտնում են, որ դրա լավագույն հոմանիշը «ներակա» բառն է, ըստ որ այդպիսին են այն իմաստները, որոնք լեզվական ուղղակի, բացահայտ արտահայտություն չեն ստանում, բայց հասկացվում են արտահայտվածի իմաստի հիման վրա: Ներակայությունը բովանդակության ոչ ամբողջական արտահայտումն է, այլ կերպ ասած՝ թերարտահայտումը: Ներական հակադրվում է արտակային (անգլ.՝ explicit), այսինքն՝ չարտահայտվածը՝ արտահայտվածին, ոչ բացահայտը՝ բացահայտին:

Աղբյուրը՝ [http://www.old.yasu.am/files/01A\\_Abrahamyan.pdf](http://www.old.yasu.am/files/01A_Abrahamyan.pdf)

80. Այսպիսով, քողարկված (ներակա) ձևով կաշառքի ստացումը վերաբերում է այն իրավիճակներին, երբ պաշտոնատար անձը ընդունել է կաշառքը կամ կաշառք ստանալու համաձայնությունը, սակայն այդ մասին բառացիորեն չի արտահայտում, այլ հասկացնել է տալիս իր գործողություններով:

**Օրինակ՝** Անգլո-սաքսոնական իրավական համակարգում ընդունված է «Quid pro quo» (լատ.՝ ինչ որ բան ինչ որ բանի դիմաց) իրավական կոնցեպտը, համաձայն որի կողմերը՝ պաշտոնատար անձը և կաշառք տվողը փոխադարձաբար հասկանում են, որ կաշառքը տրվել է որևէ գործողության դիմաց, սակայն պաշտոնատար անձը այդ մասին որևէ հանգամանքում բառացիորեն չի նշում: [Շնայդերն ընդդեմ Միացյալ Նահանգների \(23-108\)](#) վճռում (2024թվականի)

ԱՄՆ գերագույն դատարանը սահմանել է, որ պաշտոնատար անձին իր կատարած որևէ գործողության կամ որոշման համար post factum տրված պարզևավճարը ոչ թե կաշառք է, այլ գնահատանք՝ քանի դեռ չի ապացուցվել, որ առկա էր quid pro quo հարաբերություն՝ այսինքն, որ վճարը տրվել է պաշտոնատար անձի ինչ որ գործողության դիմաց (էջ 4, պարբ. 2):

81. ՀՀ իրավակիրառ պրակտիկայում քողարկված կաշառակերության ավելի հաճախ հանդիպող ձևերն են մոլեխաղում (գրագ, թղթախաղ և այլն) տանուլ տալը, նյութական արժեքներն իբրև պարտքի մարում ներկայացնելը, արժեքավոր գույքը խիստ ցածր գնով վաճառելը կամ հակառակը՝ չնչին արժեք ունեցող գույքը բարձր գնով գնելը, որևէ միջոցառման (ծննդյան տարեդարձ, հարսանյաց հանդես և այլն) կապակցությամբ թանկարժեք նվեր տալը և այլն:<sup>1</sup>
82. Կաշառքի քողարկված եղանակով ստանալու կոնցեպտի հետ որոշակի հակասության մեջ է մտնում Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը, որ կաշառք տալու պահանջը պետք է լինի **կոնկրետ, առկա և իրական**, և այդ չափանիշներին չհամապատասխանող, զուտ անձի դիտավորությունը բացահայտող պահանջ ներկայացնելը չի կարող կաշառք ստանալու պահանջ ներկայացնելու հանցագործություն համարվել: Ըստ Վճռաբեկ դատարանի՝ պահանջն առկա է, եթե այն ներկայացված, ձևակերպված է եղել, և պահանջի կոնկրետությունը ենթադրում է հստակություն պաշտոնատար անձի կողմից պահանջվող կաշառքի առարկայի և դրա չափերի հարցում: Ըստ դատարանի՝ հանցավորի ներկայացրած պահանջը դրամի, գույքի, գույքի նկատմամբ իրավունքի և կաշառքի այլ առարկաների ու դրանց չափերի վերաբերյալ պետք է լինի կոնկրետ ու հստակ, կաշառք տվողի համար ակնհայտ, մասնավորապես, վկայի, թե հանցավորը որպես կաշառք ինչ է պահանջում և ինչ չափով է պահանջում:

[\(Էդուարդ Զաբարյանի և այլոց գործով Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0002/01/13 որոշում, 20-22-րդ կետեր\):](#)

83. **Կաշառք ստանալու հանցակազմը ձևական է:** Արարքի որակման առումով էական չէ, թե կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին հնարավոր է եղել հասնել ցանկալի արդյունքի, թե ոչ: Էական չէ նաև, թե

---

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության քննչական ծառայություն: [Պետական ծառայության դեմ ուղղված պաշտոնեական հանցագործությունների որակման և քննության մեթոդիկայի առանձնահատկությունները \(գիտագործնական մեկնաբանություն\):](#) Երևան, «Տիգրան Մեծ» 2015թ.: Էջ 66, պարբ. 2:

արդյոք պաշտոնատար անձը ստացել է կաշառքի առարկան: Հանցագործությունը համարվում է ավարտված կաշառքի պահանջ կամ առաջարկ ներկայացնելու, կաշառքի ստանալու համաձայնությունը կամ խոստումը ընդունելու պահից՝ անկախ կաշառք տվողի և ստացողի միջև համաձայնության ձեռքբերման, կաշառքի առարկան հետագայում ստանալու կամ չստանալու, պաշտոնատար անձի կողմից կաշառք տվողի օգտին պայմանավորված գործողությունները կատարելու կամ չկատարելու հանգամանքից ([Էդուարդ Զաքարյանի և այլոց գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵԿԴ/0002/01/13](#) որոշման 20-22-րդ կետերը):

83.1. Կաշառք ստանալու (նաև կաշառք տալու) ձևական հանցակազմի կոնցեպտը ներմուծվել է միջազգային իրավունքից (դա հաստատվում է նաև Վճռաբեկ դատարանի կողմից Էդուարդ Զաքարյանի վերաբերյալ վճռի 20-րդ կետում արված դիտարկմամբ): [Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի](#) 15-րդ հոդվածը պասիվ կաշառակերությունը սահմանում է ոչ միայն որպես ոչ իրավաչափ առավելություն ընդունելը, այլև պահանջելը: Նմանապես, [Պալերմոյի կոնվենցիայի](#) 8-րդ հոդվածում կաշառք ստանալու հանցակազմը ներառում է ոչ միայն անիրավաչափ առավելություն ընդունելը, այլև պահանջելը (հոմանիշ՝ հայցելը, որը սխալմամբ թարգմանվել է որպես շորթել – տե՛ս 79.1 կետը վերևում):

84. Կաշառքի ձևական հանցակազմի և միջնորդի միջոցով կամ օժանդակման եղանակով կաշառք ստանալու, պահանջելու, կաշառք ստանալու համաձայնություն տալու, կաշառք վերցնելու առաջարկություն կամ խոստում ընդունելու հարաբերակցության հարցը ունի որոշ առանձնահատկություններ, որոնց մասին խոսվում է 106-109 կետերում:

85. **Կաշառք ստանալու հանցակազմը առկա է, երբ պաշտոնատար անձի գործողությունները կաշառքի դիմաց օրինական են՝** մտնում են իր պաշտոնական լիազորությունների մեջ: Դա բխում է Քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 1-ին մասից, ըստ որի պաշտոնատար անձը կաշառքը ստանում է իր լիազորությունները օգտագործումով կաշառք տվողի կամ այլ անձի օգտին որևէ գործողություն կատարելու դիմաց:

85.1. Վերը նշվածի հետ անհամատեղելի չէ Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը այն մասին, որ երբ անձը կաշառքի դիմաց

խոստացել է կատարել այնպիսի գործողություն, որը նա իրականում չի կարող կատարել՝ համապատասխան լիազորությունների բացակայության կամ պաշտոնական դիրքն օգտագործելու անհնարինության պատճառով, ապա այդպիսի արարքը, **նյութական արժեքները հափշտակելու դիտավորության առկայության դեպքում**, պետք է որակվի որպես խարդախություն՝ պաշտոնեական դիրքի օգտագործմամբ (տե՛ս [Լևոն Հարությունյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԴԴ/0079/01/16 որոշում](#), կետ 12):

86. Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիայի [բացատրական գեկույցում](#) նշվում է, որ օրինական գործողության համար կաշառք վերցնելը արդեն իսկ հանցագործություն է: Հետևաբար, պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունները խախտելու «լրացուցիչ տարրը» կաշառքի հանցակազմում ավելորդ է: Կոնվենցիայի հեղինակները առաջնորդվել են այն գաղափարով, որ կաշառք վերցնելու հանցագործության էական պայման է ոչ թե այն, թե կաշառքի դիմաց պաշտոնատար անձի գործողությունները օրինական էին՝ իր լիազորությունների շրջանակում, թե ոչ, այլ այն, որ պաշտոնատար անձը ստացել է կաշառք որևէ գործողություն կատարելու դիմաց: Քանի որ կոռուպցիայի կանխարգելման ընդհանուր նպատակի ներքո կարևոր է հանրային վստահության ապահովումը հանրային ինստիտուտների նկատմամբ, այդ վստահությունը հավասարապես կխաթարվի նույնիսկ այն դեպքում, երբ պաշտոնատար անձը գործի իր լիազորությունների շրջանակից դուրս առանց կաշառք վերցնելու: Այդ լույսի ներքո, կարևոր չէ, թե պաշտոնատար անձը գործել է իր լիազորությունների շրջանակում, թե դրանից դուրս, եթե այդ ամենը նա կատարել է կաշառք ստանալու դիմաց:

[Բացատրական գեկույց](#) կետ 39-ում:

[Վլերսանդր Այվազյանի վերաբերյալ թիվ ԵԷԴ/0040/01/16](#) գործով Վճռաբեկ դատարանի որոշում, կետ 19.1:

87. **Կաշառք ստանալու հանցակազմը պաշտոնատար անձի ապօրինի գործողությունների դիմաց** սահմանված է 435-րդ հոդվածի որակյալ հանցակազմերում, մասնավորապես՝ 2-րդ մասի 3-րդ կետում՝ պաշտոնատար անձի կողմից կաշառք տվողի կամ նրա մատնանշած անձի օգտին թողտվության կամ հովանավորչության կամ այլ ապօրինի գործողության կամ անգործության համար, և 2-րդ մասի 4-րդ կետում՝ անձի իրավունքները, ազատությունները կամ օրինական շահերը ոտնահարելու սպառնալիքով:

**Օրինակներ՝** Հովանավորչությունը դրսևորվում է, երբ պաշտոնատար անձը ծառայողին շնորհում է անհարկի արտոնություններ ու խրախուսանքներ, բարձր կոչումներ, անհարկի բարձրացում է պաշտոնը, մասնագիտական կարգը, և այլն:

*Թողությունը* դրսևորվում է, երբ պաշտոնատար անձը միջոցներ չի ձեռնարկում թերացումները, ապօրինությունները, խախտումները վերացնելու, մեղավորին բացահայտելու, պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

*Անձի իրավունքները, ազատությունները և օրինական շահերի ոտնահարումը* վերաբերում է հիմնական իրավունքների ոտնահարմանը, օրինակ՝ կաշառքը շորթմամբ, բռնությամբ, անձնական ազատության, տեղաշարժի իրավունքի, գույքային իրավունքի, անձնական կյանքի հարգման և այլ հիմնական իրավունքների ոտնահարման սպառնալիքով ստանալը: Այդպիսի հանգամանք է, երբ պաշտոնատար անձը պահանջում է կաշառք տալ՝ հակառակ դեպքում սպառնալով կաշառք տվողի կամ այլ անձի նկատմամբ կիրառել բռնություն, կամ երբ պաշտոնատար անձը ուղակիորեն չի պահանջում կաշառք, բայց անձին այնպիսի պայմանների մեջ է դնում, որ վերջինս ստիպված է լինում տալ կաշառք, որպեսզի կանխի իր հիմնական իրավունքների (օրինակ՝ գույքային շահերին կամ անձնական կյանքի գաղտնիությանը) սպառնացող վտանգը:

88. Հաշվի առնելով կաշառք ստանալու հանցագործության ձևական հատկանիշը, անձի իրավունքները, ազատությունները կամ օրինական շահերը ոտնահարելու սպառնալիքով կաշառք ստանալու դեպքում ևս հանցագործությունն ավարտված է համարվում սպառնալիքով ուղեկցվող պահանջը ներկայացնելու պահից՝ անկախ հետագա զարգացումներից:
89. **Կաշառք ստանալու հանցակազմն առկա չէ, երբ պաշտոնատար անձը ստացել է գույքային առավելություն՝ որպես գնահատանք** (նվեր) իր կատարած գործողության համար, և մինչև գործողություն կատարելը դրա դիմաց չի կատարել գույքային առավելություն ստանալու առաջարկ կամ

պահանջ, կամ չի ընդունել գույքային առաջարկ տալու առաջարկ կամ խոստում: Նման հանգամանքում բացակայում է կաշառք ստանալու հանցակազմի հիմնական օբյեկտիվ հատկանիշը, որն է, որ պաշտոնատար անձը կաշառքը ստանում է կաշառք տվող անձի կամ այլ անձի համար որևէ գործողություն **կատարելու համար**: Իսկ եթե անձը գույքը կամ նվերը ընդունելուց կարճ ժամանակ անց վերադարձնում է այն, բացառվում է նաև արարքի հանրային վտանգավորությունը այն հիմքով, որ հակառակ պարագայում, եթե չվերադարձներ գույքը, պաշտոնատար անձը որոշակի կախվածության մեջ կհայտնվեր գույքը տված անձից, որն էլ վտանգում է հանրային մարմնի բնականոն գործունեությունը, որը կաշառք ստանալու հանցագործության օբյեկտն է (տե՛ս նաև [Կոռուպցիայի մասին քրեական հրավումնի Բացատրական գեկույցում](#), կետ 43):

**Օրինակ՝** [Շնայդերն ընդդեմ Միացյալ Նահանգների \(23-108\)](#) 2024 թվականի հունիսի 26-ի վճռում, որը Միացյալ Նահանգներում բարձրացրել է մեծ աղմուկ, ԱՄՆ գերագույն դատարանը սահմանել է, որ կաշառքի մասին դաշնային օրենքում պարզևավճարը չի կարող համարվել հանցագործություն, քանի որ օրենքում կաշառք ստանալու դիտավորությունը համարվում է հաստատված այն դեպքում, երբ դրա համար վճարում են: Մինչդեռ տվյալ դեպքում անձը ոչ թե պաշտոնատար անձին վճարել է, որ նա կատարի որոշակի գործողություն, այլ վճարել է արդեն կատարված գործողության դիմաց, որը ոչ թե կաշառք է, այլ գնահատանք: ԱՄՆ գերագույն դատարանը դրանով սահմանել է տարբերություն կաշառքի (պաշտոնատար անձի որոշման համար կատարվող վճար) և պարզևավճարի միջև (պաշտոնատար անձի որոշումից հետո կատարվող վճար), որով հակակոռուպցիոն օրենքը ենթարկվեց նեղ մեկնաբանության: Գերագույն դատարանի այս որոշումն ընդունվեց քննադատությամբ: Մի շարք նահանգների իշխանությունները հայտարարեցին, որ իրենց նահանգային օրենքներում չեն առաջնորդվելու այդ որոշմամբ ու շարունակելու են պարզևավճարը համարել ակտիվ կաշառակերություն:

90. Այդուհանդերձ, մասնագիտական գրականության մեջ նաև տիրում է այն կարծիքը, որ պաշտոնատար անձի կողմից զբաղեցրած պաշտոնի բերումով ցանկացած գնահատանք կամ նվեր (դրամ, գույք, գույքի նկատմամբ

իրավունք, արժեթուղթ կամ որևէ այլ առավելություն) ընդունելը նույնպես պետք է որակել որպես կաշառք ստանալու հանցագործություն, քանի որ հանրային ապարատի նորմալ գործունեության բովանդակությունից բխում է, որ պաշտոնատար անձի վարձատրությունը կարող է իրականացվել միայն օրենքով սահմանված կարգով և չափով: Մինչդեռ, ապօրինի վարձատրություն ստանալով հանրային ծառայողը որոշակի կախվածության մեջ է ընկնում վարձատրություն տվողից, որով արարքը դառնում է հանրորեն վտանգավոր: Ուստի, եթե պաշտոնատար անձը նվեր է ստանում՝ հասկանալով, որ այն տրվում է իրեն իր որոշակի ծառայողական գործունեության համար, նրա արարքում նույնպես պետք է առկա լինի կաշառք ստանալու հանցակազմ՝ բացառությամբ, եթե կիրառելի է Քրեական օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքը՝ արարքը իր նվազ վտանգավորության պատճառով հասարակությանը կամ պետությանը էական վնաս չի պատճառել կամ չէր կարող պատճառել:<sup>2</sup>

91. Նման դեպքում արարքը կարող է քննության առարկա հանդիսանալ բարեվարքության նորմերի ներքո՝ Հանրային ծառայության մասին օրենքի 29-րդ հոդվածի հիմքով: Մասնավորապես, հանրային ծառայության բարեվարքության տեսանկյունից պաշտոնատար անձի կողմից նման հանգամանքում գույքային առավելություն ընդունելը, այնքանով, որքանով դա տրվել է իր լիազորությունների հետ կապված, համարվում է անթույլատրելի նվեր, և Հանրային ծառայության մասին օրենքի 29-րդ հոդվածի համաձայն Պաշտոնատար անձը պարտավոր է այդ գույքը վերադարձնել կամ վճարել դրա արժեքը, եթե հնարավոր չէ դա վերադարձնել (օրինակ, հյուրասիրությունը):

5. Իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելը

92. Հանցանքն իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կատարելը Քրեական օրենսգրքով սահմանված պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ են (71-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետ): Օրենսգրքի բազմաթիվ նորմերում այս հանգամանքները սահմանված են որպես որակյալ հատկանիշներ:

<sup>2</sup> Տողատակի ծանոթագրություն 1, էջ 75:

93. Օրենսգրքի 435-րդ հոդվածում այս հատկանիշը սահմանված է հիմնական հանցակազմում: Նման մոտեցում է ցուցաբերվել նաև 436, 438 և 439-րդ հոդվածներում, որոնցում նշված հատկանիշները սահմանված են հիմնական հանցակազմում: Հետևաբար, նշված հոդվածներում իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելը չեն կարող հաշվի առնվել որպես պատասխանատվությունը կամ պատիժը ծանրացնող հանգամանքներ:
94. «*Իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելը*» արտահայտության բացատրությունը ներկայացված է Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետում, ըստ որի դա նշանակում է «*ծառայողական ենթակայության տակ չգտնվող անձանց նկատմամբ սահմանված կարգով կարգադրիչ լիազորությունները կամ ծառայողական լիազորությունները կամ ծառայողական դիրքից բխող հեղինակությունն օգտագործելը*»:
95. Ի հավելումն նշվածի, «*իշխանական լիազորություն*» և «*ծառայողական լիազորություն*» արտահայտությունների իրավական բովանդակությունը կարելի է բացահայտել նաև Հանրային ծառայության մասին օրենքի հիման վրա, որը սահմանում է հանրային ծառայության պետական և համայնքային պաշտոնների դասակարգումը և տեսակները (հոդվածներ 3 և 4):
96. Քրեական օրենսգրքում «պաշտոնատար անձ» հասկացության սահմանումը ներառում է պաշտոնատար անձանց երեք խմբեր՝ հանրային ծառայողներ, հանրային պաշտոն զբաղեցնող անձինք, պետական կամ համայնքային մարմինների կողմից ստեղծված ոչ առևտրային կազմակերպությունների կամ հիմնարկների անունից հանդես գալու լիազորություն ունեցող կամ այդ մարմիններից անունից իրավունք կամ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ իրականացնող անձինք:
97. Նշված բոլոր սուբյեկտները, Հանրային ծառայության մասին օրենքի հիման վրա, իրականացնում են իշխանական կամ ծառայողական լիազորություններ: Օրինակ, եթե պաշտոնատար անձը հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձ է, նշանակում է նա հանրային ծառայող է և իրականացնում է ծառայողական լիազորություններ: Կամ, քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող անձինք համարվում են հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձինք, հետևաբար՝ հանրային ծառայողներ են ու իրականացնում են ծառայողական լիազորություններ: Իսկ եթե անձը հանրային պաշտոն զբաղեցնող անձ է, նշանակում է զբաղեցնում է պետական

քաղաքական, վարչական, հայեցողական կամ ինքնավար պաշտոն կամ համայնքային քաղաքական, վարչական կամ հայեցողական պաշտոն, իսկ նման պաշտոնների անձնագրերի համաձայն նրանք իրականացնում են իշխանական լիազորություններ:

**Օրինակ՝** Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնը պետական քաղաքական պաշտոն է, հետևաբար, նա իրականացնում է իշխանական լիազորություն, եթե կայացնում է իր լիազորություններից բխող որոշում:

98. Ինչ վերաբերում է երրորդ խումբ պաշտոնատար անձանց, նրանք պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կամ հիմնարկների այն աշխատակիցներ են, ովքեր լիազորված են հանդես գալ այդ մարմինների անունից, կամ ունեն այդ մարմիններից անունից իրավունք կամ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ:
99. Նշված սահմանումները մեծամասամբ համահունչ են Վճռաբեկ դատարանի՝ նախկին քրեական օրենսգրքին ներքո «պաշտոնատար անձ» հասկացության մեկնաբանությանը, որն արվել է նախկին օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով, որի համաձայն պաշտոնատար անձինք էին իշխանության ներկայացուցչի գործառույթներ (ներկա Օրենսգրքով՝ իշխանական գործառույթներ) իրականացնող անձինք, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում և նրանց ստեղծած կազմակերպություններում կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ, ինչպես նաև իրավական նշանակություն ունեցող, իրավահարաբերություններ առաջացնող, դադարեցնող կամ փոփոխող գործողություններ կատարելու լիազորություններ ունեցող անձինք: Վերջինների առումով Վճռաբեկ դատարանը նաև սահմանել է, որ կարևոր նշանակություն ունի, թե արդյոք այդ անձինք ունեին պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, հիմնարկության, կազմակերպության կամ ձեռնարկության անունից քաղաքացիներին պաշտոնական փաստաթուղթ տրամադրելու լիազորությունները ([Համլետ Սահակյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԼԴ/0207/01/12 որոշման 16-րդ կետը](#)):
100. Վճռաբեկ դատարանը վերը նշված մոտեցումը ընդլայնել է, հավելելով, որ բժշկական մասնավոր հաստատության բուժաշխատողը կարող է համարվել կաշառք ստանալու հանցակազմի սուբյեկտ, եթե բացի իր մասնագիտական գործունեությունից, բժշկական գործունեության ոլորտում հատուկ

լիազորությամբ իրականացրել է կազմակերպական-տնօրինչական և վարչատնտեսական գործառույթներ և իրականացրել է իրավական նշանակություն ունեցող կամ իրավական հետևանքներ առաջացնող կոնկրետ որոշման ընդունման կամ դրա ընդունմանը մասնակցելու լիազորություններ:

**Օրինակ՝** Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ «Էրեբունի» ԲԿ ՓԲԸ-ում աշխատող բուժաշխատողը ՀՀ առողջապահության նախարարի հրամանի հիման վրա բժշկական հաստատության ղեկավարի կողմից ընդունված որոշմամբ նշանակվել է զինապարտների բժշկական հետազոտում, փորձաքննություն և բուժում իրականացնող հանձնաժողովի անդամ, և «Զինապարտների և զինճառայողների առողջական վիճակի փորձաքննության կարգը հաստատելու մասին» ՀՀ պաշտպանության նախարարի թիվ 410-Ն հրամանով սահմանված կարգի համաձայն իրականացրել է զորակոչիկի առողջական վիճակի հետազոտման ակտ կազմելու լիազորություն: Դա հաստատվում է փորձաքննական հանձնաժողովի կողմից, այնուհետև ներկայացվում է զինկոմիսարիատ, որի հիման վրա տրվում է եզրակացություն զորակոչիկի պիտանիության մասին: Հետևաբար, անձը իրականացրել է իշխանության ներկայացուցչի գործառույթներ, քանի որ հատուկ լիազորությամբ (նախարարի հրամանով) իրականացրել է կազմակերպական-տնօրինչական գործառույթներ, ինչպես նաև իրականացրել է իրավական նշանակություն ունեցող և իրավական հետևանքներ առաջացնող կոնկրետ որոշման ընդունման և դրա ընդունմանը մասնակցելու լիազորություններ: ([Ալեքսանդր Այվազյանի վերաբերյալ 2018 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ ԵԷԴ/0040/01/16, կետեր 14-15](#)):

101. Վճռաբեկ դատարանի այս մեկնաբանությունը ամբողջությամբ համահունչ չէ նոր Քրեական օրենսգրքում «պաշտոնատար անձ» հասկացության սահմանմանը, քանի որ վերջինում պաշտոնատար անձ հասկացության շրջանակում ներկայացված չեն մասնավոր կազմակերպությունների աշխատակիցները՝ անկախ այն հանգամանքից, որ նրանք հատուկ լիազորություններով (օրինակ՝ պետական պաշտոն զբաղեցնող անձի

հրամանով) իրականացրել են կազմակերպական-տնօրինչական գործառույթներ և ընդունել են քրեական հետևանքներ առաջացնող որոշումներ: Քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետում նշվում է միայն պետական, պետական կառավարման համակարգի, տեղական ինքնակառավարման մարմնի, պետության կամ համայնքի կողմից ստեղծված **ոչ առևտրային կազմակերպության կամ հիմնարկի անունից** հանդես գալու լիազորություն ունեցող և իրավունք, պարտականություն կամ պատասխանատվություն առաջացնող որոշումներ կայացնելու գործառույթներ իրականացնող անձանց մասին: Նման շրջանակը չի ընդգրկում մասնավոր կազմակերպության, օրինակ, ՓԲԸ-ի աշխատակից հանդիսացող, սակայն կազմակերպական-տնօրինչական գործառույթներ իրականացնող անձանց մասին, նույնիսկ եթե այդ գործառույթները հաստատվել են պետական մարմնի կողմից:

6. Կաշառք ստանալու միջնորդությունը և հանցակցությունը

102. Քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածում կաշառք ստանալու հանցակազմը սահմանված է անձամբ կամ միջնորդի միջոցով: Օրենսգրքի 437-րդ հոդվածում կաշառքի միջնորդությունը սահմանված է ինքնուրույն հանցակազմով, ըստ որի միջնորդը կաշառքի շուրջ կաշառք տվողի և ստացողի միջև նպաստում է համաձայնության գալուն: Միջնորդը գործում է որպես կապող օղակ կաշառք տվողի և կաշառք ստացողի միջև: Նա ինքն է մասնակցում համաձայնության կայացմանը, փոխանցում պահանջը, առաջարկը, պայմանավորվածությունը կամ կաշառքի առարկան՝ փաստորեն մասնակցելով կաշառքը ստանալու ողջ ընթացքին: Մասնավորապես, միջնորդը նպաստում է կաշառք տվողի և ստացողի միջև կապերի հաստատմանը, կաշառքի առարկայի բնույթի և չափի վերաբերյալ նրանց համաձայնության գալուն: Դա կաշառքի միջնորդության հանցակազմի օբյեկտիվ հատկանիշն է: Միջնորդը նաև, համաձայնության առկայության դեպքում, կաշառքի առարկան պաշտոնատար անձին կամ նրա մատնանշած անձին փոխանցելու նախաձեռնություն է դրսևորում, փոխանցելու խոստում է տալիս կամ փոխանցում է: Դա կաշառքի միջնորդության հանցակազմի օբյեկտիվ կողմի ֆիզիկական հատկանիշն է:

103. Թեև Քրեական օրենսգրքում կաշառքի միջնորդությունը սահմանված է որպես ինքնուրույն հանցագործություն (հոդված 437), բովանդակորեն կաշառքի միջնորդությունը հանցակցության ձև է: Շատ պետություններում կաշառքի միջնորդությունը սահմանված է որպես հանցակցության ձև, այլ ոչ թե որպես

առանձին հանցագործություն: Այդպիսին են, օրինակ, Միացյալ Նահանգների, Անգլիայի, Ֆրանսիայի, Լեհաստանի քրեական օրենսդրությունը:

104. Միջազգային կոնվենցիաներում նույնպես կաշառքի միջնորդությունը որպես ինքնուրույն հանցագործություն սահմանված չէ: [Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի](#) 15-րդ հոդվածում կաշառք ստանալը սահմանված է **ուղղակիորեն** կամ **անուղղակիորեն**, և Կոնվենցիայի [կիրարկման օրենսդրական ուղեցույցում](#) ներկայացվում է, որ «անուղղակիորեն» եզրույթը օգտագործվում է միջնորդի իմաստով (կետ 201): [Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի](#) կոնվենցիայի 3-րդ հոդվածում նույնպես կաշառք ստանալու կամ պահանջելու գործողությունները սահմանված են որպես ուղղակիորեն կամ անուղղակիորեն կատարվող գործողություններ, իսկ կոնվենցիայի [Բացատրական զեկույցում](#) ներկայացված է, որ կաշառքի ստացումը նախատեսվում է նաև երրորդ անձանց (կնոջ, գործընկերոջ, կազմակերպության, քաղաքական կուսակցության, և այլն) կամ միջնորդների միջոցով (կետ 42):
105. Հաշվի առնելով, որ ՀՀ քրեական օրենսգրքում կաշառքի միջնորդությունը սահմանված է հանցակցությունից առանձին, անհրաժեշտ է սահմանազատել կաշառքի միջնորդությունը հանցակցության ձևերից:
- **Կազմակերպիչը** ունի անձնական հետաքրքրություն, որ հանցագործությունը տեղի ունենա: Նա գործում է սեփական նախաձեռնությամբ: Նա չի մասնակցում համաձայնության կայացմանը, չի մասնակցում կաշառքի առարկան փոխանցելուն: Դրանով նա տարբերվում է միջնորդից: Եթե կազմակերպիչը, բացի կաշառք տալու կամ ստանալու կազմակերպումից, նաև միջնորդի դեր է կատարում, նրա արարքը որակվում է միայն որպես կաշառք տալու կամ ստանալու կազմակերպում:
  - **Դրդիչը** այն անձն է, ով կաշառք ստացողին հակում է կաշառք ստանալուն: Հանցավորի կողմից կաշառք ստանալու դիտավորությունը ծագում է դրդիչի գործողությունների ազդեցության տակ: Ինչպես կազմակերպիչը, դրդիչը նույնպես գործում է իր նախաձեռնությամբ, ունի անձնական շահագրգռվածություն պաշտոնատար անձի կողմից կաշառքի դիմաց որոշակի գործողության կատարման մեջ: Եթե դրդիչը նաև կատարում է միջնորդի դեր, նրա արարքը որակվում է որպես դրդչություն:
  - **Օժանդակողը** այն անձն է, ով նպաստում է կաշառք ստանալուն: Ի տարբերություն միջնորդի, նա կապող օղակ չէ կաշառք տվողի և

կաշառք ստացողի միջև: Նա ոչ թե կապում է կողմերին, այլ օգնում է իրականացնելու արդեն համաձայնեցված կաշառքի ստացմանը: Նա գործում է կամ կաշառք տվողի, կամ կաշառք ստացողի կողմից՝ օժանդակելով կամ կաշառք տվողին, կամ կաշառք ստացողին: Կաշառք ստացողին օժանդակելը կարող է դրսևորվել նրանում, որ նա ինքն է պաշտոնատար անձի փոխարեն վերցնում կաշառքի առարկան, ինքն է կաշառք ստացողի անունից գործարքի մեջ մտնում կաշառք տվողի հետ: Օժանդակելը ինքնուրույն հանցակազմ չէ, այլ մասնակցություն այլ հանցագործությանը:

**Օրինակ՝** կաշառք ստացողը կաշառք տվողի հետ բոլոր համաձայնությունները ձեռք բերելուց հետո կարող է խնդրել իր ընկերոջը, որ նա վերցնի կաշառք տվողից գումարով ծրարը և հանձնի իրեն: Տվյալ դեպքում նրա ընկերը չի մասնակցել կաշառք ստանալու հետ կապված համաձայնության ձեռք բերմանը, այլ միայն մասնակցել է կաշառքը փոխանցելու մեկ դրվագին: Հետևաբար, նա ոչ թե միջնորդ է, այլ հանցակից՝ օժանդակող:

Այս դրվագն անհամատեղելի է նաև կաշառքի միջնորդության հանցանքի հատկանիշներին՝ սահմանված Քրեական օրենսգրքի 437-րդ հոդվածում: Թեև այս հանցակազմի հատկանիշներից է կաշառքը փոխանցելը, սակայն մնացած հատկանիշները նույնպես պետք է առկա լինեն, օրինակ՝ կաշառքի շուրջ կաշառք տվողի և կաշառք ստացողի միջև համաձայնության գալուն մասնակցելը, նպաստելը:

106. Քանի որ կաշառք ստանալու հանցակազմը ձևական է, անկախ միջնորդի՝ իր հանցավոր գործողությունները ավարտին հասցնելու հանգամանքից, որը կարող է պատահել միջնորդի ցանկությամբ կամ իր կամքից անկախ պատճառով, կաշառք ստանալու հանցագործությունը համարվում է ավարտված այն պահից, երբ պաշտոնատար անձը ներկայացրել է կաշառք տալու պահանջ կամ առաջարկություն, կամ ընդունել է կաշառք տալու առաջարկը կամ խոստումը:

**Օրինակ՝** Միջնորդը վերցրել է կաշառքի առարկան կաշառք տվողից, սակայն չի հանձնել պաշտոնատար անձին, այլ յուրացրել է

այն: Կամ, միջնորդը կաշառք տվողից կաշառքը վերցնելու պահին բռնվել է: Այն հանգամանքը, որ պաշտոնատար անձը չի ստացել կաշառքը միջնորդի գործողությունների պատճառով, վերջինի կամքից կախված կամ կամքից անկախ հանգամանքներով, չի վերացնում պաշտոնատար անձի կաշառք ստանալու հանցագործության փաստը, քանի որ կաշառք ստանալու պահանջ ներկայացնելը կամ առաջարկությունը ընդունելը արդեն իսկ կաշառք ստանալու ավարտված հանցագործություն է:

107. Նույն սկզբունքով է որակվում նաև կաշառքին օժանդակելու հանցագործությունը: Եթե կաշառք ստանալուն օժանդակելը, օրինակ, կաշառք տվողից գումարը վերցնելը, արվել է պաշտոնատար անձի կողմից կաշառք տալու պահանջը ներկայացնելուց կամ կաշառք ստանալու համաձայնությունը տալուց հետո, այդ անձի նկատմամբ կաշառքի օժանդակելու հանցակազմը չի կարող համարվել չկայացած այն ձևական պատճառաբանությամբ, որ հանցակցությունը կատարվել է հիմնական հանցագործության ձևական հանցակազմի ավարտելուց հետո, որի հանգամանքը, օբյեկտիվորեն, բացառում է հանցակցության առկայությունը: Թեև կաշառք ստանալու հանցակազմն ավարտված է համարվում համապատասխան պահանջ ներկայացնելու պահից, կաշառք ստանալու օբյեկտիվ կողմը դրսևորվում է նաև կաշառքի առարկան փաստացի ստանալով: Հետևաբար, **անիրավաչափ է հանցակազմի օբյեկտիվ կողմից դուրս թողնել կաշառքի ստացման բուն գործողությունը:** Հակառակ դեպքում կստացվի, որ եթե անգամ հաստատված համարվի, որ կաշառք ստանալուն օժանդակող անձը ստացել է կաշառքի առարկան ու պատրաստվում էր հանձնել կաշառք ստացողին, նրա արարքում կբացակայեն կաշառք ստանալու հանցագործության օժանդակության հատկանիշները՝ կաշառքի առարկան պահանջելու պահի դրությամբ հանցանքն ավարտված լինելու ձևական պատճառաբանությամբ:

[Վճռաբեկ դատարանի՝ Ալեքսանդր Այվազյանի վերաբերյալ թիվ ԵԷԴ/0040/01/16 որոշում, կետ 28\):](#)

108. Իրավաբանական գրականության մեջ արտահայտված է այն տեսակետը, որ Վճռաբեկ դատարանի վերը նշված դիրքորոշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ձևական հանցակազմերում հանցակցության հնարավորության հարցը դիտարկելիս պետք է ելակետ ընդունել ոչ թե տվյալ հանցագործության իրավաբանական պահը (կաշառքը համարվում է

ստացված պահանջը կամ առաջարկությունը կատարելու պահից), այլ փաստացի ավարտի պահը (կաշառքի ստացումը): Դա ենթադրում է, որ ձևական հանցակազմերի դեպքում հանցակցությունը հնարավոր է իրավաբանորեն ավարտված, սակայն, փաստացի չավարտված հանցագործություններում: Այս մոտեցումը հիմնավորվում է այն իրողությամբ, որ ձևական հանցագործություններում, ինչպիսին է կաշառքի ստացումը, հանցակցի արարքը պատճառական կապի մեջ է **ընդհանուր հանցավոր արդյունքի հետ** և անհրաժեշտ պայման է կատարողի կողմից հանցանքը հաջողությամբ կատարելու համար:<sup>3</sup>

109. Կաշառք ստանալու հանցակցության բոլոր ձևերը կատարվում են ուղղակի դիտավորությամբ: Կոռուպցիայի քրեական իրավունքի մասին կոնվենցիայի 2-րդ հոդվածի մեկնաբանության համաձայն, կաշառք ստանալու և կաշառք տալու հանցակազմի հանցակցության բոլոր ձևերը պետք է սահմանվեն որպես ուղղակի դիտավորությամբ կատարված հանցագործություններ:

[Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի բացատրական զեկույց](#), կետ 76

7. Կաշառք ստանալու հանցակազմի սուբյեկտիվ հատկանիշը և ապացուցման չափանիշը

110. Կաշառք ստանալու հանցակազմի սուբյեկտիվ հատկանիշը ուղղակի դիտավորությունն է: [Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիայի](#) 3-րդ հոդվածի համաձայն՝ պասիվ կաշառակերությունը ներառում է «...դիտավորությամբ, ուղղակիորեն կամ անուղղակիորեն՝ ... անհիմն որևէ օգուտ պահանջելը կամ ստանալը կամ նման օգուտի առաջարկ կամ խոստում ընդունելը...»:

111. [Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի](#) 15-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել քրեական իրավախախտում սահմանելու համար, երբ դրանք կատարվում են միտումնավոր...բ) պաշտոնատար անձի կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն ... ոչ իրավաչափ առավելություն ընդունելը...»: [Կոնվենցիայի կիրարկման օրենսդրական ուղեցույցում](#) նշվում է, որ այս հանցագործության սուբյեկտիվ հատկանիշը պաշտոնատար անձի կողմից անհարկի

<sup>3</sup> [Հանցագործությունների որակման հիմնախնդիրները](#): Սերգեյ Առաքելյան, Պետիկ Մկրտչյան: Արդարադատության ակադեմիա: Երևան 2020: էջ 300:

առավելություն ստանալու կամ հայցելու մտադրությունն է, որի նպատակը պաշտոնատար անձի՝ իր պաշտոնական լիազորությունները իրականացնելիս վարքագծի փոփոխությունն է (տե՛ս կետեր 202 և 306):

112. [Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի](#) 28-րդ հոդվածում սահմանվում է, որ Կոնվենցիայով սահմանված հանցավոր արարքների, այդ թվում կաշառք ստանալու գիտակցումը, դիտավորությունը և մտադրությունը, որպես հանցագործության հատկանիշներ, կարող են բխեցվել գործի [օբյեկտիվ փաստական հանգամանքներից](#): [Կոնվենցիայի կիրարկման օրենսդրական ուղեցույցում](#) այս դրույթը մեկնաբանվում է այնպես, որ ազգային օրենսդիրները պետք է սահմանեն ապացույցի այնպիսի չափանիշներ, որ հնարավոր լինի կաշառքի սուբյեկտիվ հատկանիշները բխեցնել օբյեկտիվ փաստերից, այլ ոչ թե ուղղակի ապացույցներից օրինակ՝ անձի ինքնախոստովանությունը (տե՛ս կետ 244-ում):

**Օրինակներ՝** Օբյեկտիվ փաստեր, որոնցով կաշառք ստանալու սուբյեկտիվ հատկանիշը ինքնին համարվում է հաստատված.

- **Վճարման եղանակը.** կրկնվող վճարումներ պաշտոնատար անձին, որոնց չափերը շարունակաբար աճում են, որը կաշառք ստանալու մոդել է՝ ի տարբերություն եզակի և օրինական վճարների:
- **Թաքցնելը.** Ստացված վճարները թաքցնելու փորձեր ձեռնարկելը, օրինակ՝ կեղևային ընկերություն, անապրանք գործարք, որի նպատակն է գումարի հանցավոր ծագումը թաքցնելը: Սա կոռուպցիայի ցուցիչ է:
- **Հատուկ վերաբերմունք ցուցաբերելը.** երբ պաշտոնատար անձը ցուցաբերում է բարենպաստ վերաբերմունք, օրինակ, ծառայության արագ մատուցում, որևէ առավելության շնորհում:

113. Վերը նշվածը ցույց է տալիս, որ միջազգային իրավունքով առաջարկվում է նվազեցնել կաշառք ստանալու սուբյեկտիվ հատկանիշի ապացուցողական շեմը, որպեսզի հնարավոր լինի արդյունավետորեն դիմագրավել կոռուպցիայի դեմ պայքարին: Այդ իմաստով պետք է նկատի ունենալ, որ Կոնվենցիայի 28-

որ հողվածը վերաբերում է Կոնվենցիայով սահմանված բոլոր տեսակի կոռուպցիոն հանցագործություններին՝ ակտիվ ու պասիվ կաշառակերությունը, առևտրային կաշառքը, ապօրինի հարստացումը, փողերի լվացումը, հանցակցությունը, և այլն: Տարբեր պետությունների դատական պրակտիկաներում նկատվել են հետևյալ մոտեցումները դատարանների կողմից.

**Օրինակներ՝** Դատարանը կաշառք ընդունելու դիտավորությունը բխեցրել է պաշտոնատար անձի բանկային հաշվին պարբերաբար ու աճող չափերով վճարումներ ստացված լինելու, ստացված վճարները պաշտոնատարձ անձի կողմից թաքցնելու փորձերի և պաշտոնատար անձի կողմից վճարումներ կատարած անձին շարունակաբար բարենպաստ վերաբերմունք ցուցաբերելու փաստերից: Դատարանը սահմանել է, որ նման անուղղակի ապացույցներից կարելի է բխեցնել, որ նրանց միջև եղել է պայմանավորվածություն:

Մեկ այլ գործով դատարանը մտահանգել է, որ մասնավոր անձի կողմից պաշտոնատար անձին շարունակաբար ծառայություններ մատուցելը, որի ժամակահատվածը համընկել է պաշտոնատար անձի կողմից մասնավոր անձի համար բարենպաստ վարչական ակտեր ընդունելու ժամանակահատվածին, բավարար ապացույց էր, որ պաշտոնատար անձի կողմից ընդունված գումարները կաշառք էին: Այսինքն, դատարանը կաշառք ընդունելը և այդ արարքի դիտավորությունը բխեցրել է ոչ ռացիոնալ տնտեսական հարաբերություններից, այն է, որ տվյալ դեպքում անձանոթ մարդու վերաբերմունքը պաշտոնատար անձի նկատմամբ եղել է ավելին, քան լինում է ընկերների միջև:

114. Այս մոտեցումը նման է խտրականության/ռասիստական շարժառիթով հանցագործությունների կամ լատենտային բնույթի հանցագործությունների քննության մեթոդաբանությանը, որն ընդունված է նաև միջազգային իրավունքում, համաձայն որի որոշ տեսակի հանցագործությունների մեթոդաբանությունը թույլ է տալիս ապացույցը կարելի է բխեցնել անուղղակի ապացույցների, փաստերի ու տվյալների ամբողջությունից կամ չհերքված

փաստի հավաստիության կանխավարկածից, քանի որ ուղղակի ապացույցների վրա հիմնվելը կլինի անարդյունավետ՝ հաշվի առնելով, որ որոշ հանցագործություններ, այդ թվում նաև կաշառակերությունը, գաղտնի բնույթ ունեն, և հազվադեպ է, երբ գաղտնի եղանակով իրականացվող գործարքների վերաբերյալ կարելի է հեշտությամբ ձեռք բերել դրա սուբյեկտների մտադրության մասին ուղղակի ապացույցներ: Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայով, փաստորեն, առաջարկվում է կոռուպցիոն բնույթի հանցագործության սուբյեկտիվ հատկանիշի ապացուցման շեմը ուղղակի ապացույցից իջեցնել անուղղակի ապացույցների առատությունից բխեցվող մտահանգման կամ չհերքված փաստի հավաստիության աստիճանի:

**Օրինակ՝** Ռասիստանական կամ խտրական դրդապատճառներով հանցագործության սուբյեկտիվ հատկանիշը բացահայտելու համար Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կիրառում է ապացույցի հետևյալ չափանիշը. «*ապացույցը կարող է բխել բավականաչափ հիմնավորված, պարզ ու համահունչ մտահանգումներից կամ նմանատիպ փաստերի անհերքելիության կանխավարկածից*» ([Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի](#), թիվ 40094/05, 02/10/2012, կետ 150):

115. Սուբյեկտիվ հատկանիշի վերը նշված նկարագրությունից հարց է բարձրանում, թե ապացուցողական ինչ ճշգրտությամբ պետք է սահմանվեն կաշառք ստանալու, պահանջելու, կաշառքի առաջարկին կամ խոստումին համաձայնության ձևերը:
116. Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման համաձայն՝ կաշառք տալու պահանջը պետք է լինի **կոնկրետ, առկա և իրական**, և այդ չափանիշներին չհամապատասխանող, զուտ անձի դիտավորությունը բացահայտող պահանջ ներկայացնելը չի կարող կաշառք ստանալու պահանջ ներկայացնելու հանցագործություն համարվել: Պահանջն առկա է, եթե այն **ներկայացված, ձևակերպված** է եղել, և պահանջի կոնկրետությունը ենթադրում է հստակություն պաշտոնատար անձի կողմից պահանջվող կաշառքի **առարկայի** և դրա **չափերի** հարցում: Ըստ դատարանի՝ հանցավորի ներկայացրած պահանջը դրամի, գույքի, գույքի նկատմամբ իրավունքի և կաշառքի այլ առարկաների ու դրանց չափերի վերաբերյալ պետք է լինի **կոնկրետ և հստակ**, կաշառք տվողի համար **ակնհայտ**, մասնավորապես, վկայի, թե հանցավորը որպես կաշառք **ինչ է** պահանջում և **ինչ չափով** է պահանջում: Պահանջի իրական լինելը գնահատելիս

անհրաժեշտ է հաշվի առնել պահանջի ներկայացման **եղանակը, ինտենսիվությունը** (օրինակ՝ ներկայացված պահանջը կրկին վերահաստատելը), **իրադրությունը, տեղը, ժամանակը** և այլն:

[\(Էդուարդ Զաքարյանի և այլոց գործով Վճարել դատարանի թիվ ԵԿԴ/0002/01/13 որոշում, 20-22-րդ կետեր\):](#)

117. Միջազգային և համեմատական իրավունքում տարածված է նաև երկրորդ մոտեցումը, ըստ որի կաշառք ստանալու, կաշառք տալու պահանջ կամ առաջարկություն ներկայացնելու կամ առաջարկությունը ընդունելու ապացույցը պարտադիր չէ, որ բխի ուղղակի ապացույցներից, այլ կարող է բխել անուղղակի ապացույցների համակցությունից, փաստերի ու տվյալների հիման վրա արված մտահանգումներից, չհերքված փաստի կանխավարկածից: Որպես կանոն, նման մոտեցումն օգտագործվում է անուղղակի եղանակով, ենթադրյալ համաձայնությամբ ստացված կաշառքի դեպքերին, հատկապես, եթե կաշառքի առարկան ոչ թե գումար է, այլ ծառայություններ կամ այլ անհարկի առավելություններ:

#### **Օրինակներ՝ Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիայի**

[Քացատրական զեկույցում](#) կոնվենցիայի 3-րդ հոդվածի մեկնաբանությունում նշվում է, որ կաշառք տալու պահանջը կամ առաջարկը կարող է լինել պաշտոնատար անձի այնպիսի միակողմանի գործողությամբ, որով նա որոշակիորեն (explicitly) կամ անուղղակիորեն (implicitly) տեղեկացնում է այլ անձի, որ նա պետք է «վճարի» իր որևէ գործողության կատարման կամ կատարումից ձեռնպահ մնալու համար (կետ 41):

#### [Մակդոննելին ընդդեմ Միացյալ Նահանգների \(579 U.S. \(2016\)\)](#)

ԱՄՆ Գերագույն դատարանի նախադեպայի որոշմամբ սահմանվել է, որ երդվյալ ատենակալները պետք է առաջնորդվեն ապացույցի այնպիսի չափանիշով, որի համաձայն անհրաժեշտ չէ հիմնավորել, որ պաշտոնատար անձը կայացրել է կաշառք ստանալու որոշում, կատարել է կաշառքի ստացմանն ուղղված կոնկրետ գործողություններ, կայացրել է կաշառք ընդունելու համաձայնություն, և թե կոնկրետ ինչ գործողություններով էր պաշտոնատար անձը պատրաստվում ստանալ կաշառքը: Կաշառք ստանալու համաձայնության մասին ապացույցը կարելի է բխեցնել այն

հանգամանքից, առաջին, որ նա ստացել էր արժեքավոր իր, երկրորդ, որ այդ իրը նրան տրվել էր ակնկալիքով, որ նա կայացնելու էր իր լիազորությունների շրջանակում որևէ որոշում այդ իրը տված անձի օգտին:

[Ֆրանսիայի քրեական օրենսգրքի](#) 432-11 հոդվածի համաձայն՝ կաշառք ստանալու հանցագործություն է հանրային պաշտոն զբաղեցնող կամ հանրային իշխանություն իրականացնող անձի կողմից առաջարկություններ, խոստումներ, նվիրաբերություններ, նվերներ կամ առավելություններ, անօրինական կերպով, ուղղակիորեն կամ անուղղակիորեն խնդրելը կամ ընդունելը:

Ենթադրյալ համաձայնությամբ կաշառք վերցնելու օրինակներ էին Իսպանիայի դատարանի կողմից Գուրտելի գործով դատարանի եզրահանգումը, որում դատարանը նշել է, որ թեև գործում բացակայում էր «կաշառք եմ ստացել» հայտարարություն որպես պաշտոնատար անձանց կողմից կաշառք ընդունելու մասին ուղղակի ապացույց, սակայն այն փաստերը, որ պաշտոնատար անձինք օգտվել էին մասնավոր կազմակերպության անվճար ծառայություններից, օրինակ՝ բնակարանի վերանորոգում, անվճար ճամփորդություն, կաշառք վերցնելու անուղղակի ապացույցներ են:

118. Այսպիսով, կաշառք ստանալու, կաշառք ստանալու առաջարկը կամ խոստումը ընդունելու համաձայնությունը հաստատվում է կամ ապացուցողական բարձր շեմով՝ կոնկրետ, իրական, առկա, հստակորեն ամրագրված ու ուղղակի ապացույցներով, կամ անուղղակի ապացույցների ամբողջությունից կամ չհերքված փաստի կանխավարկածից բխեցված մտահանգմամբ, որն ապացուցման առավել ցածր շեմ է: Ըստ վերևում վկայակոչված Վճռաբեկ դատարանի եզրահանգման՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվում է առաջինը:

119. **Կաշառք ստանալը արվում է բացահայտորեն կամ քողարկված** կերպով: Այս մասին Քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածում բառացիորեն նշված չէ: Սակայն, Կոռուպցիայի քրեական իրավունքի մասին կոնվենցիայի [Բացատրական գեկույցում](#) կոնվենցիայի 3-րդ հոդվածի (պասիվ կաշառակերությունը) մեկնաբանությունում նշվում է, որ կաշառք տալու պահանջը կամ առաջարկը կարող է լինել պաշտոնատար անձի այնպիսի

միակողմանի գործողությամբ, որով նա որոշակիորեն (explicitly) կամ քողարկված (implicitly) ձևով (հոմ. լռելյալն) տեղեկացնում է այլ անձի, որ նա պետք է «վճարի» իր որևէ գործողության կատարման կամ կատարումից ձեռնպահ մնալու համար (կետ 41): Սրանից էլ բխում է այն մտտեցումը, որ կաշառք ստանալը կարող է հիմնավորվել ոչ միայն ուղղակի ապացույցներով, այլև անուղղակի ապացույցներից բխեցված մտահանգումով, քանի որ քողարկված ձևով կաշառք ստանալը դժվար է հիմնավորել ուղղակի ապացույցներով (տե՛ս, ավելի մանրամասն, 79-80 կետերում վերևում):

8. Պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներ

120. Քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը սահմանում են կաշառք ստանալու հանցագործության ծանրացնող հատկանիշները, որոնք են կաշառք ստանալը 1) մի խումբ պաշտոնատար անձանց կողմից, 2) խոշոր չափերով, 3) կաշառք տվողի կամ նրա մատնանշած անձի օգտին թողտվության կամ հովանավորչության կամ այլ ապօրինի գործողության կամ անգործության համար, 4) անձի իրավունքները, ազատությունները կամ օրինական շահերը ոտնահարելու սպառնալիքով, կամ կաշառք վերցնելը վերը նշված ծանրացնող հանգամանքներում՝ 5) հանցավոր կազմակերպության կողմից, 6) դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի կողմից, և 7) առանձնապես խոշոր չափերով:

121. **Մի խումբ պաշտոնատար անձանց կողմից** կաշառք ստանալը հանցակցություն է, որի հատկանիշները սահմանված են Քրեական օրենսգրքի 8-րդ գլխի նորմերում: Եթե կաշառք տալու հանցակազմի որակյալ հատկանիշ է *մի խումբ անձանց* կողմից կաշառք տալը, կաշառք ստանալու հանցակազմում որակյալ հատկանիշ է *մի խումբ պաշտոնատար անձանց* կողմից կաշառք ստանալը: «Պաշտոնատար անձ» հասկացության բովանդակությունը մանրամասնորեն ներկայացված է 54-56 կետերում: Իսկ **մի խումբ** անձինք արտահայտությունը պետք է մեկնաբանել հանցակցության սկզբունքներով, ըստ որի եթե անձը մեկ ուրիշի հետ կատարում է հանցագործություն, ապա արարքը պետք է որակել որպես մի խումբ անձանց կողմից կատարված հանցագործություն: Ի տարբերություն «մի խումբ անձանց» եզրույթի սահմանման, Օրենքի 50-րդ հոդվածի 3-րդ մասում «հանցավոր կազմակերպությունը» սահմանված է որպես «երեք կամ ավելի անձանցից բաղկացած խումբ»:

122. Կաշառքի **խոշոր չափը** և **առանձնապես խոշոր չափը** Օրենսգրքի 435-րդ հոդվածում սահմանված են վերացարկված՝ առանց դրանց գումարային

չափերի նշման: Ի տարբերություն դրա, նախկին քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 5-րդ մասում ներկայացված էին այդ հասկացությունների կոնկրետ գումարային չափերը տվյալ գլխում սահմանված հանցագործությունների՝ այդ թվում նաև կաշառք տալու համար: Ներկա քրեական օրենսգրքում գումարային չափեր սահմանված են ընդհանուր մասի 3-րդ հոդվածի 17-րդ կետում միայն երեք տեսակի հանցագործությունների՝ հափշտակության, պատճառված գույքային վնասի և հանցավոր ճանապարհով ձեռք բերված կամ ստացված գույքի կամ օգուտի համար: Ըստ այդ սահմանումների, մանր չափ է համարվում 500.000 դրամը չգերազանցող գումարը (արժեքը), խոշոր չափ է համարվում 5 միլիոն դրամը չգերազանցող գումարը (արժեքը), առանձնապես խոշոր չափ է համարվում 5 միլիոն դրամը գերազանցող գումարը (արժեքը)՝ բացառությամբ Օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված առանձին հանցագործությունների: Այդուհանդերձ, կաշառք ստանալու կամ կաշառք տալու հանցագործությունները 3-րդ հոդվածի 17-րդ կետում ընդգրկված չեն:

122.1. Վճռաբեկ դատարանը վերը նշվածը մեկնաբանել է Օրենսգրքի 436-րդ հոդվածի ներքո, ըստ որի «խոշոր» և «առանձնապես խոշոր» չափ հասկացությունները չափելի երևույթների են, հետևաբար օրենսդիրը կա՛մ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի շրջանակներում՝ ընդհանուր հասկացությունների ներքո, կա՛մ Քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածով պետք է հստակ սահմաներ, թե կաշառք տալու հանցակազմի պարագայում որ չափն է համարվում խոշոր, որը՝ առանձնապես խոշոր, մինչդեռ, կաշառքի առարկայի խոշոր և առանձնապես խոշոր չափերը չեն բացահայտվել օրենսգրքում: Այդ պատճառով առկա է օրենսդրական բաց, որը չի կարող լրացվել դատական մեկնաբանության միջոցով: Հետևաբար, 436-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում «խոշոր չափ» և «առանձնապես խոշոր չափ» արտահայտությունները, մինչև Օրենսգրքում համապատասխան փոփոխություններ կատարելը, պետք է մեկնաբանվեն նույն հոդվածի 1-ին մասի կարգավարման համաձայն:

Վճռաբեկ դատարանի 28/08/2024թ. որոշումը թիվ

[ՀԿԴ2/0023/01/22](#) գործով, կետեր 11-14:

122.2. Անկասկած է, որ որը նշված մեկնաբանությունը կիրառելի է նաև 435-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի առնչությամբ: Ըստ այդմ, կաշառք տալու կամ կաշառք ստանալու հանցակազմում կաշառքի չափերը

բոլոր դեպքերում պետք է մեկնաբանվեն հիմնական հանցակազմի շրջանակում՝ մինչև համապատասխան օրենսդրական փոփոխությունների կատարումը:

123. Պաշտոնատար անձի կողմից **թողտվությունը, կամ հովանավորչությունը կամ այլ ապօրինի գործողությունը կամ անգործությունը՝** որպես կաշառք ստանալու հանցակազմը որակյալ դարձնող արարքներ նկարագրված են 87-րդ կետում:
124. Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիայի [Բացատրական ուղեցույցում](#) նշվում է, որ սկզբունքորեն, էական, չէ, թե կաշառք տալը կամ վերցնելը արվում է պաշտոնատար անձի օրինական, թե անօրինական գործողության դիմաց, կամ թե արդյոք պաշտոնատար անձը ունի հայեցողություն անելու այն, ինչ պահանջում է իրենից կաշառք տվողը: Կոնվենցիայի հեղինակները առաջնորդվել են այն գիտակցությամբ, որ էական է այն, որ պաշտոնատար անձին առաջարկել, տվել կամ խոստացել են կաշառք որևէ արարքի դիմաց: Կաշառք տվողը կարող է նույնիսկ չիմանալ, որ պաշտոնատար անձը ունի հայեցողություն այդ արարքը կատարելու կամ չկատարելու հարցում, որի հանգամանքը չի նվազեցնում կաշառք տվողի արարքի լրջության աստիճանը: Կոնվենցիայի նպատակն է ապահովել հանրային ծառայության նկատմամբ հանրային վստահությունը՝ նույնիսկ այն դեպքում, երբ պաշտոնատար անձը նույն գործողությունը կկատարեր առանց ստանալու կաշառք կամ կաշառքի առաջարկություն: Քրեական օրենսգրքում ապօրինի գործողության դիմաց կաշառք տալը որակյալ հանցակազմ սահմանելը ապահովում է առավել բարձր երաշխիք հանրային ծառայության նկատմամբ հանրային վստահության համար, քան Կոռուպցիայի քրեական իրավունքի կոնվենցիան:
125. **Կաշառք ստանալը անձի իրավունքները, ազատությունները կամ օրինական շահերը ոտնահարելու սպառնալիքով՝** արարքը որակյալ դարձնող այս գործողությունները առաջին հերթին վերաբերում են մարդու հիմնական իրավունքներին, օրինակ, կյանքի իրավունք, խոշտանգումների արգելք, անձնական ազատության իրավունք, արտահայտվելու ազատության, կրոնական համոզմունքների, խտրականության արգելքի և այլ իրավունքներ, որոնք սահմանված են ՀՀ սահմանադրության 2-րդ բաժնում: Օրինական շահերը կարող են վերաբերել նաև սոցիալական իրավունքներին, օրինակ, կրթության, աշխատանքի, առողջության իրավունքները, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված ցանկացած այլ իրավունքներ ու շահեր:

125.1. Սա նոր որակյալ հանցակազմ է, որը փոխարինել է նախկին օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետում սահմանված՝ շորթամբ կաշառք ստանալու որակյալ հանցակազմին: Այս հանցակազմում «սպառնալիքը» կարող է դրսևորվել շորթման հատկանիշներով՝ հատկապես հաշվի առնելով, որ շորթման հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող արարքների շրջանակը զգալիորեն ընդլայնվել է նոր օրենսգրքում (հոդված 258): Հետևաբար, երբ կաշառք ստանալու պահանջը ձեռք է բերում սպառնալիքի հատկանիշներ, որոնք դրսևորվում են նաև շորթման հանցակազմի հատկանիշներում, արարքը պետք է որակվի քրեաիրավական նորմերի մրցակցության սկզբունքով՝ ըստ Օրենսգրքի 52-րդ հոդվածի 6-րդ մասի:

126. **Հանցավոր կազմակերպության կողմից կաշառք տալը** նույնպես հանցակցություն է, որը կարգավորվում է Օրենսգրքի 8-րդ գլխի նորմերով: Մասնավորապես, 50-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանցանքը համարվում է հանցավոր կազմակերպության կողմից կատարված, եթե կատարվել է մեկ կամ մի քանի հանցանքներ կատարելու համար ստեղծված երեք կամ ավելի անձից բաղկացած կայուն խմբի կամ խմբերի միավորման կողմից: Հանցանքը համարվում է հանցավոր կազմակերպության կողմից կատարված նաև այն դեպքում, երբ դա ստեղծած կամ ղեկավարող անձի դիտավորության մեջ ընդգրկված հանցանքն անմիջականորեն կատարել է խմբի թեկուզ մեկ անդամը կամ խմբի առաջադրանքով՝ դրա անդամ չհանդիսացող անձը:

127. **Դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի կողմից** կաշառք ստանալը հատուկ սուբյեկտի կողմից կատարվող որակյալ հանցագործություն է: Նախկին քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածում ծանրացնող հանգամանքով հանցակազմ էր համարվում կաշառք ստանալը միայն դատավորի կողմից: Նոր օրենսգրքում հատուկ սուբյեկտների շրջանակը էապես ընդլայնվել է: Օրենսգրքի 3-րդ հոդվածի 21-րդ կետի համաձայն հետաքննության մարմին են հետաքննության մարմնի պետը և հետաքննիչները: Որակյալ հանցակազմում հատուկ սուբյեկտների շրջանակի ընդլայնումը պայմանավորված է Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայով, որի 11-րդ հոդվածով առաջարկվում է դատավորների և դատախազների կոռուպցիոն հանցագործությունների կանխարգելումը սահմանել առանձին նորմերով:

128. Կաշառք ստանալու և տալու հանցագործությունների հիմնական և որակյալ հանցակազմերի որակման ու դրանց համադրման օրինակ է 159-րդ կետում բերված իրավիճակը:

## Բ. Կաշառք տալու հանցակազմը

### 1. Հանցագործության օբյեկտը և սուբյեկտը

129. **Կաշառք տալու հանցագործության օբյեկտը** նույնն է, ինչ կաշառք ստանալու հանցագործության օբյեկտը: Ըստ Քրեական օրենսգրքի Հավելված 1-ի, կաշառք տալու հանցակազմի հիմնական օբյեկտը հանրային ծառայության օրինական գործունեությունը ապահովող հասարակական հարաբերություններն են, հանրային (պետական ու համայնքային) մարմինների նկատմամբ հանրայի վստահության ապահովումը, նաև տնտեսության զարգացմանը, տնտեսական անվտանգության պաշտպանությանը ուղղված հասարակական հարաբերությունները: Լրացուցիչ օբյեկտներ են մարդկանց սահմանադրական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը, օրինակ՝ գույքային իրավունքների, անձնական կյանքի նկատմամբ հարգանքի, կյանքի ու առողջության պաշտպանության իրավական երաշխիքները:

[Արտակ Հովհաննիսյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0096/01/13 որոշումը](#) կետ 14):

130. **Կաշառք տալու հանցագործության սուբյեկտը**, ի տարբերություն կաշառք ստանալու հանցակազմի, պաշտոնատար անձը չէ, այլ 16 տարին լրացած ցանկացած ֆիզիկական անձ, օրինակ՝ անհատ ձեռներեց, հանրային ծառայող, մասնավոր անձ, և այլն:

131. Եթե կաշառք տվողը գործել է իրավաբանական անձի անունից և ի շահ իրավաբանական անձի, դա կարող է բարձրացնել նաև իրավաբանական անձի պատասխանատվության մասին հարց՝ Քրեական օրենսգրքի 123-րդ հոդվածի հիմքով, ինչպես նաև [Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի](#) 18-րդ հոդվածի հիմքով (տե՛ս, ավելի մանրամասն, 169-178 կետերում): Միևնույն ժամանակ, իրավաբանական անձը ներկայացնող անձինք կամ աշխատակիցները կարող են համարվել ակտիվ կաշառակերության կատարողներ, դրդողներ կամ օժանդակողներ նույն կոնվենցիայի 18-ր հոդվածի 3-րդ մասի հիմքով (տե՛ս, նաև, կոնվենցիայի [Բացատրական գեկույցը](#), կետ 35):

### 2. Կաշառքի առարկան

132. Կաշառքի առարկան Քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածում նույնն է, ինչ 435-րդ հոդվածում, այն է՝ **գույքը**, ներառյալ՝ **դրամական միջոցը**, **արժեթուղթը**, **վճարային այլ գործիքը**, **գույքի նկատմամբ իրավունքը**,

**ծառայությունը կամ որևէ այլ առավելությունը:** Այս եզրույթների մեկնաբանությունը ներկայացված է 57-74 կետերում:

3. Ակտիվ կաշառակերության գործողությունները

133. **Ակտիվ կաշառակերությունը դրսևորվում է երեք գործողություններով.** կաշառք խոստանալը, առաջարկելը, տրամադրելը՝ ինչպես սահմանված է Քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածում: Ակտիվ կաշառակերությունը պասիվ կաշառակերության անհրաժեշտ նախապայման է:

134. Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայում, Պալերմոյի կոնվենցիայում և Կոռուպցիայի մասին քրեական իրավունք կոնվենցիայում նույնպես սահմանված են ակտիվ կաշառակերության նշված երեք գործողությունները՝ կաշառք տրամադրելը, խոստանալը և առաջարկելը: Կաշառք խոստանալը ենթադրում է կաշառք տվողի և կաշառք ստացողի միջև համաձայնության առկայության մասին, իսկ կաշառք խոստանալը չի նշանակում նման համաձայնության կայացված լինելու մասին:

Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի [կիրարկման օրենսդրական ուղեցույց](#), կետ 197:

135. Կաշառք տալու հանցագործությունը սահմանազատվում է կաշառք ստացողի կողմից շանտաժի ենթարկվելու կամ հարկադրանքի տակ կաշառք տալու գործողություններից: Այն դեպքերում, երբ կաշառք տալու պահանջը զուգորդվում է սպառնալիքով, մասնավորապես՝ կաշառք չտալու դեպքում անձի իրավունքներն ու օրինական շահերը ոտնահարելու վերաբերյալ կամ անձին այնպիսի պայմանների մեջ դնելով, որ վերջինս հարկադրված լինի կաշառք տալ՝ իր իրավունքներին և օրենքով պաշտպանվող շահերին սպառնացող հնարավոր վտանգը կանխելու համար, արարքը պետք է որակել որպես շորթամամբ կաշառք պահանջել ([Էդուարդ Չաբարյանի և այլոց գործով Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0002/01/13](#) որոշում, կետ 24): Օրենսգրքի 435-րդ հոդվածում կաշառքը շորթամամբ ստանալու ձևական հանցակազմը փոխարինվել է կաշառք ստանալը անձի իրավունքները, ազատությունները կամ օրինական շահերը ոտնահարելու սպառնալիքով (տե՛ս 125-րդ կետում): Հետևաբար, Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը պետք է կիրառվի նշված նոր որակյալ հատկանիշի իմաստով: Նման պարագայում կաշառք տվողը պետք է ազատվի քրեական պատասխանատվությունից, քանի որ բացակայում է հանցակազմի սուբյեկտիվ հատկանիշը:

136. **Կաշառք տալը արվում է ուղղակիորեն կամ անուղղակիորեն** (այդ թվում նաև խոստանալը և առաջարկելը): Ուղղակիորեն ասելով պետք է հասկանալ պաշտոնատար անձին կաշառքի առարկան ամբողջությամբ կամ մաս-մաս տալը, ինչպես նաև առաջարկելը կամ խոստանալը: Անուղղակիորեն ասելով պետք է հասկանալ այդ գործողությունները միջնորդի միջոցով կատարելը (տե՛ս մանրամասնորեն 77-78-րդ կետերում): Քրեական օրենսգրքը 436-րդ հոդվածում կաշառքը միջնորդի միջոցով տալը սահմանված է բառացիորեն, իսկ միջազգային կոնվենցիաներում օգտագործվում է «անուղղակիորեն» եզրույթը:

137. Ըստ Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի [կիրարկման օրենսդրական ուղեցույցի](#), կոնվենցիայի 15-րդ հոդվածում օգտագործված «անուղղակիորեն» եզրույթը պետք է հասկացվի այնպես, որ կաշառքի առարկան, օրինակ, նվերը, ցանկացած գնահատանք կամ առավելություն կարող է տրվել որևէ երրորդ անձի՝ պաշտոնատար անձի հարազատի, կազմակերպությանը, որտեղ պաշտոնատար անձը աշխատում է, կամ քաղաքական կուսակցությանը, որի անդամ է պաշտոնատար անձը (կետ 197):

138. **Կաշառք տալու հանցակազմը ձևական է:** Հանցանքն ավարտված է համարվում կաշառք խոստանալու, առաջարկելու, տրամադրելու գործողություններից որևէ մեկը կատարելու պահից՝ անկախ կաշառքի առարկան պաշտոնատար անձին հանձնելու հանգամանքից: Քրեական պատասխանատվությունը կաշառք տալու համար վրա է հասնում ոչ միայն կաշառքի առարկան հասցեատիրոջը տրամադրելու, այլև որոշակի նյութական բարիք կամ առավելություն խոստանալու կամ առաջարկելու պահից:

Արտակ Հովհաննիսյանի վերաբերյալ ՎՃռաբեկ դատարանի թիվ [ԵԿԴ/0096/01/13](#) գործով որոշում, կետ 14

139. **Պաշտոնատար անձի օրինական, թե՛ անօրինական գործողություններ.** Կաշառք տալու հանցակազմն առկա է անկախ այն հանգամանքից, թե կաշառքը կամ դրա խոստումը կամ առաջարկը տրվել է պաշտոնատար անձին վերջինիս կողմից օրինական (լիազորությունների շրջանակում), թե անօրինական (լիազորություններից դուրս) գործողությունների դիմաց: Էական է այն, որ **պաշտոնատար անձը կատարել է որևէ գործողություն կաշառքի դիմաց:** Այդ իմաստով Քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի հիմնական հանցակազմում գործողության կատարման նկարագրությունը ներկայացված է չեզոք իմաստով: Միևնույն ժամանակ, լիազորություններով

պայմանավորված ազդեցությունը օգտագործելը կարող է համարվել ապօրինի գործողություն հանրային ծառայության բարեվարքության նորմերի համաձայն՝ որպես վարքագծի կանոնի խախտում, որը կարգավորվում է Հանրային ծառայության մասին օրենքի Գլուխ 5-ի նորմերով մասնավորապես՝ 29-րդ հոդվածով: Իսկ պաշտոնատար անձի գործողության անօրինական բնույթի մասին հստակորեն նշված է 236-րդ հոդվածի որակյալ հանցակազմերի ներքո՝ 2-րդ մասի 3-րդ կետում, որում որպես արարքի որակյալ հանցակազմ սահմանված է կաշառք տալը պաշտոնատար անձի անօրինական գործողությունների համար, որն է՝ թողտվության կամ հովանավորչության կամ այլ ապօրինի գործողության կամ անգործության համար:

139.1. Ըստ Կոռուպցիայի քրեական իրավունքի մասին կոնվենցիայի [Բացատրական զեկույցի](#), եթե պաշտոնատար անձը ստանում է որևէ գնահատանք իր լիազորությունների շրջանակում որևէ գործողություն կատարելու դիմաց, դա արդեն իսկ հանցագործություն է: Իսկ եթե պաշտոնատար անձը գնահատանքի դիմաց կատարում է մի բան, որն արգելված է օրենքով կամ իր բնույթով կամայական է, դա առավել ծանր հանցագործություն է: Իսկ եթե նա որոշի գնահատանքի դիմաց ընդհանրապես չկատարել գործողություն, օրինակ, չտրամադրել արտոնագիր, դա երկրորդից առավել ծանր հանցագործություն է, և նա պետք է ենթարկվի պատասխանատվության ավելի ծանր հանցագործություն կատարելու համար: Հետևաբար, անիմաստ է լիազորությունները խախտելու լրացուցիչ օբյեկտիվ հատկանիշ սահմանել կաշառքի հանցակազմում:

Կոռուպցիայի քրեական իրավունքի կոնվենցիայի [Բացատրական ուղեցույց](#), կետ 39

4. Իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելը

140. **Իշխանական կամ ծառայողական լիազորությունների կամ դրանցով պայմանավորված ազդեցության** օգտագործման հասկացությունների իրավական բովանդակությունը նույնն է, ինչ կաշառք ստանալու հանցակազմի պարագայում: Դրանց բացատրությունները ներկայացված են 92-101 կետերում:

5. Կաշառք տալու միջնորդությունը և հանցակցությունը

141. **Կաշառքի միջնորդության և կաշառքի հանցակցության** հատկանիշները Քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի կաշառք տալու հանցակազմում նույնն են, ինչ 435-րդ հոդվածում կաշառք ստանալու հանցակազմում: Այդ հասկացությունների բացատրությունները ներկայացված են 102-109 կետերում:

142. Այս համատեքստում անհրաժեշտ է հաշվի առնել **«Կարծեցյալ միջնորդությունը»**, որն այնպիսի իրադրություն է, երբ անձը կաշառք տվողից ստանում է կաշառքի առարկան պաշտոնատար անձին հանձնելու պատճառաբանությամբ, սակայն իրականում մտադրություն չունի փոխանցել նրան, այլ մտադիր է հափշտակել այն: Կարծեցյալ միջնորդությունը կաշառքի միջնորդության հանցակազմի հատկանիշ չէ: Անկախ այն հանգամանքից, կաշառք տվողը, թե կարծեցյալ միջնորդն է նախաձեռնել նախաձեռնել կաշառք տալը, **կաշառք տվողի արարքը պետք է որակվի որպես կաշառք տալու փորձ**, քանի որ վերջինս որոշ գործողություններ է կատարում, որոնք անմիջականորեն ուղղված են հանցանք կատարելուն (օրինակ՝ միջնորդին փոխանցում է կաշառքի առարկան), սակայն հանցագործությունն իր ավարտին չի հասցվում նրա կամքից անկախ հանգամանքներով: Ստորև Վճռաբեկ դատարանի դիրքորոշումն է կարծեցյալ միջնորդի արարքի որակման մասին:

142.1. **Այն դեպքում, երբ «կարծեցյալ միջնորդը»** որևէ անձի օգտին գործողություններ (անգործություն) կատարելու նպատակով դրդում է անձին իրեն փոխանցել կաշառքի առարկան, որպեսզի ինքը փոխանցի պաշտոնատար անձին, սակայն ի սկզբանե նման մտադրություն չի ունենում, այլ ցանկանում է հափշտակել այն, ապա արարքը պետք է որակվի համակցության կանոններով, որպես խարդախություն և կաշառք տալու փորձի դրդչություն:

Վճռաբեկ դատարանի՝ [Ռադիկ Պապյանի վերաբերյալ թիվ ՏԴ/0053/01/12](#) որոշում, էջ 15

142.2. Իրավաբանական գրականության մեջ կա տեսակետ, որ կաշառքի կարծեցյալ միջնորդության դեպքում արարքը պետք է որակվի միայն որպես խարդախություն, իսկ միաժամանակ որպես դրդչություն չի կարող որակվել այն պատճառով, որ կաշառքի կարծեցյալ միջնորդի մոտ ի սկզբանե բացակայում են հանցակցության և, մասնավորապես, դրդչության օբյեկտիվ և

սուբյեկտիվ հատկանիշները: Հանցակցության դեպքում մասնակիցների արարքների ուղղվածությունը և դիտավորության բովանդակությունը պետք է համընկնեն, մինչդեռ կարծեցյալ միջնորդի և կաշառք տվողի թե արարքների ուղղվածությունը, թե մտադրությունները տարբեր են:<sup>4</sup>

6. Կաշառք տալու հանցակազմի սուբյեկտիվ հատկանիշը և ապացուցման չափանիշը

143. Կաշառք տալու հանցակազմը, ինչպես կաշառք ստանալու հանցակազմը, բնութագրվում է բացառապես ուղղակի դիտավորությամբ, այսինքն՝ կաշառք տվողը գիտակցում է, որ ինքն ապօրինի վարձատրություն է խոստանում, առաջարկում կամ տրամադրում պաշտոնատար անձին և ցանկանում է դա անել:

144. [Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիայի](#) 2-րդ հոդվածում կաշառք տալու հանցակազմի դիտավորության մասին նշված է **բառացիորեն**՝ սահմանելով, որ Կոնվենցիայի մասնակից յուրաքանչյուր պետություն պետք է քրեականացնի որևէ պետական պաշտոնյայի «դիտավորությամբ» կաշառք տալը:

145. [Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի Բացատրական զեկույցում](#) 2-րդ հոդվածի մեկնաբանությունում նշվում է հետևյալը.

«2-րդ հոդվածով սահմանված կաշառակերության հանցանքը կարող է կատարվել միայն դիտավորյալ կերպով, և դիտավորությունը պետք է ընդգրկի հանցակազմի բոլոր այլ սուբյեկտիվ հատկանիշները: Դիտավորությունը պետք է կապ ունենա ապագա արդյունքի հետ. հանրային պաշտոնյան պետք է կատարի գործողություն կամ ձեռնպահ մնա գործողության կատարումից՝ ի կատարումն կաշառք տվողի մտադրության: Այդուհանդերձ, էական չէ, թե հանրային պաշտոնյան ի վերջո կատարել է պայմանավորված գործողությունը կամ թե ձեռնպահ է մնացել պայմանավորված գործողության կատարումից (կետ 34):»

146. [Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի](#) 15-րդ հոդվածը սահմանում է «պաշտոնատար անձին ... ոչ իրավաչափ առավելություն խոստանալը, առաջարկելը կամ տրամադրելը»՝ որպես միտումնավոր կատարվող

<sup>4</sup> Տողատակի ծանոթագրություն 3, էջեր 288-291:

հանցագործություն: Իսկ 15-րդ հոդվածի մեկնաբանությունում նշվում է, որ արարքի սուբյեկտիվ հատկանիշի շրջանակում պետք է նաև ցույց տալ **կապը** առաջարկության կամ առավելության տրամադրման և պաշտոնատար անձին իր պաշտոնական լիազորությունների շրջանակում որոշակի գործողություն կատարելուն կամ կատարելուց հրաժարվելուն հակելու միջև: Քանի որ հանցանքը ձևական է, ըստ որի չի պահանջվում, որ կաշառքի առարկան ստացված լինի պաշտոնատար անձի կողմից, վերը նշված կապը նաև ընդգրկում է այնպիսի իրավիճակը, երբ մեղադրյալը ոչ միայն մտադիր էր առաջարկել կաշառք, այլև դրանով մտադիր էր ազդեցություն գործել կաշառք ստացողի վարքագծի վրա՝ անկախ այն հանգամանքից, թե դա հետագայում տեղի ունեցել է, թե ոչ:

[Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի կիրարկման օրենսդրական ուղեցույց](#), կետ 198:

147. Սուբյեկտիվ հատկանիշի հիմնավորման վերը նշված մեկնաբանությունում կրկին վկայակոչվում է Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 28-րդ հոդվածը, ըստ որի սուբյեկտիվ հատկանիշը՝ **մտադրությունը և նպատակը կարելի է բխեցնել գործի օբյեկտիվ փաստական հանգամանքներից**, այլ ոչ թե՝ բացառապես ուղղակի ապացույցներից: Դա թույլ է տալիս ապացուցման շեմը նվազեցնել ու հիմնվել անուղղակի ապացույցների համակցության վրա: Այդ մասին մանրամասնորեն խոսվել է կաշառք ստանալու հանցակազմի շրջանակում՝ 112-րդ կետում որտեղ, օրինակ, նշվել է, որ կոնվենցիայի 28-րդ հոդվածին կարող է բավարարել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ապացույցի ցածր չափանիշը, ըստ որի ապացույցը կարող է բխեցվել բավականաչափ հիմնավոր, հստակ ու համահուն փաստերից բխեցված *մտահանգումներից* կամ չհերքված փաստերի *կանխավարկածից*:

**Օրինակ՝** Հանրային պաշտոն զբաղեցնող անձը ստացել է թանկարժեք նվեր մի անձից, ում համար մի քանի օր առաջ կայացրել էր բարենպաստ վարչական ակտ: Թեև բացակայում է ուղղակի ապացույց, որ այդ անձը նվերը տվել էր վարչական ակտի դիմաց, սակայն այն, որ նրանք ազգակցական հարաբերությունների մեջ չեն, նախկինում իրար չեն ճանաչել, հետևաբար, անձը պաշտոնատար անձին նվեր տալու որևէ անձնական պատճառ չուներ, ինչպես նաև, որ նվեր տալու ժամանակահատվածը համընկել է բարենպաստ դատական ակտի կայացման ժամանակահատվածի հետ, օբյեկտիվ հանգամանքներ են,

որոնցից կարելի է բխեցնել նվեր տալու իրական մտադրությունը, որն է, որ նվերը տրվել է վարչական ակտի դիմաց, այսինքն՝ որպես կաշառք:

148. Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 28-րդ հոդվածում արտահայտված մոտեցումը չի հակասում «հիմնավոր կասկածից վեր» ապացույցի չափանիշին,<sup>5</sup> սահմանված Վճռաբեկ դատարանի կողմից, քանի որ տվյալ դեպքում խոսքը վերաբերում է միայն սուբյեկտիվ հատկանիշի ապացուցմանը, իսկ նշված ապացույցի բարձր չափանիշը վերաբերում է ընդհանրապես մեղքի ապացուցմանը՝ այդ թվում նաև օբյեկտիվ չափանիշների առկայությունը՝ «հիմնավոր կասկածից վեր» հավանականությամբ:

## 7. Ծանրացնող հատկանիշները

149. Քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը սահմանում են կաշառք տալու հանցագործության ծանրացնող հատկանիշները, որոնք են կաշառք տալը՝

- 1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
- 2) խոշոր չափերով,
- 3) իր կամ իր մատնանշած անձի օգտին պաշտոնատար անձի կողմից թողտվության կամ հովանավորչության կամ այլ ապօրինի գործողության կամ անգործության համար, կամ կաշառք տալը կամ կաշառքը վերը նշված ծանրացնող հանգամանքներում տալը,
- 4) հանցավոր կազմակերպության կողմից, կամ
- 5) առանձնապես խոշոր չափերով:

150. **Մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ** կաշառք տալը հանցակցություն է, որի բոլոր հատկանիշները նկարագրված են Քրեական օրենսգրքի 8-րդ գլխի 45-ից 50-րդ հոդվածներում: 50-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված է, որ հանցանքը համարվում է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված, եթե հանցագործությանը մասնակցել են այնպիսի համակատարողներ, որոնք նախքան հանցանքն սկսելը պայմանավորվել են հանցանքը համատեղ կատարելու մասին:

<sup>5</sup> Արարատ Ավագյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի թիվ [ԵԿԴ/0252/01/13](#) գործով 31/10/2014թ. որոշումը, կետ 33:

151. Կաշառքի **խոշոր չափը** և **առանձնապես խոշոր չափը** Օրենսգրքի 436-րդ հոդվածում սահմանված են վերացարկված՝ առանց նշելու դրանց գումարային չափերը: Ի տարբերություն դրա, նախկին քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 5-րդ մասում ներկայացված էին այդ հասկացությունների կոնկրետ գումարային չափերը: Ներկա քրեական օրենսգրքի ընդհանուր մասի 3-րդ հոդվածի 17-րդ կետում սահմանված են երեք տեսակի հանցագործությունների՝ հափշտակության, պատճառված գույքային վնասի, հանցավոր ճանապարհով ձեռք բերված կամ ստացված գույքի կամ օգուտի գումարային չափերի սահմանումներ, ըստ որոնց մանր չափ է համարվում 500.000 դրամը չգերազանցող գումարը (արժեքը), խոշոր չափ է համարվում 5 միլիոն դրամը չգերազանցող գումարը (արժեքը), առանձնապես խոշոր չափ է համարվում 5 միլիոն դրամը գերազանցող գումարը (արժեքը), բացառությամբ Օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված առանձին հանցագործությունների: Կաշառք ստանալու կամ կաշառք տալու հանցագործությունները 3-րդ հոդվածի 17-րդ կետում նշված չեն:

152. Վճռաբեկ դատարանը վերը նշվածը մեկնաբանել այնպես, որ «խոշոր» և «առանձնապես խոշոր» հասկացությունները չափելի երևույթներ են, ուստի օրենսդիրը կա՛մ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի շրջանակներում՝ ընդհանուր հասկացությունների ներքո, կա՛մ Քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածով պետք է հստակ սահմաներ, թե կաշառք տալու հանցակազմի պարագայում որ չափն է համարվում խոշոր, որը՝ առանձնապես խոշոր, մինչդեռ, կաշառք տալու հանցակազմի պարագայում կաշառքի առարկայի խոշոր և առանձնապես խոշոր չափերը չեն բացահայտվել օրենսգրքում: Այդ պատճառով, ըստ Վճռաբեկ դատարանի, առկա է օրենսդրական բաց, որը չի կարող լրացվել դատական մեկնաբանության միջոցով: Հետևաբար, 436-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում «խոշոր չափ» և «առանձնապես խոշոր չափ» արտահայտությունները, մինչև Օրենսգրքում համապատասխան փոփոխություններ կատարելը, պետք է մեկնաբանվեն հոդվածի 1-ին մասի կարգավարման համաձայն:

Վճռաբեկ դատարանի 28/08/2024թվականի որոշումը թիվ [ՀԿԴ2/0023/01/22](#) գործով, կետեր 11-14:

153. **Պաշտոնատար անձի կողմից թողտվության կամ հովանավորչության կամ այլ ապօրինի գործողության կամ անգործության համար** արտահայտությունը մեկնաբանված է 87-րդ կետում: Հանցագործությունը որակյալ դարձնող այս արարքների մասին նաև նշվում է Կոռուպցիայի մասին

քրեական իրավունքի կոնվենցիայի [Բացատրական ուղեցույցում](#), ըստ որի, սկզբունքորեն, էական չէ, թե կաշառք տալը կամ վերցնելը արվում է պաշտոնատար անձի օրինական, թե անօրինական գործողության դիմաց կամ թե պաշտոնատար անձը ունի հայեցողություն անելու այն, ինչը պահանջում է իրենից կաշառք տվողը: Կոնվենցիայի հեղինակները առաջնորդվել են այն գիտակցությամբ, որ էական է այն, որ պաշտոնատար անձին առաջարկել, տվել կամ խոստացել են կաշառք որևէ արարքի դիմաց: Կաշառք տվողը կարող էր նույնիսկ չիմանալ, որ պաշտոնատար անձը ունի հայեցողություն տվյալ արարքը կատարելու կամ չկատարելու հարցում, սակայն այդ հանգամանքը չի նվազեցնում կաշառք տվողի արարքի լրջության աստիճանը: Կոնվենցիայի նպատակն է ապահովել հանրային ծառայության նկատմամբ հանրային վստահությունը՝ նույնիսկ այն դեպքում, երբ պաշտոնատար անձը նույն գործողությունը կկատարեր առանց ստանալու կաշառքի առաջարկությունը: Քրեական օրենսգրքում ապօրինի գործողության դիմաց կաշառք տալը որպես որակյալ հանցակազմ սահմանելը ապահովում է առավել բարձր երաշխիք հանրային ծառայության նկատմամբ հանրային վստահության համար, քան Կոռուպցիայի քրեական իրավունքի կոնվենցիան:

154. **Հանցավոր կազմակերպության կողմից կաշառք տալը** նույնպես հանցակցություն է, որը կարգավորվում է Օրենսգրքի 8-րդ գլխի նորմերով: Մասնավորապես, 50-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանցանքը համարվում է հանցավոր կազմակերպության կողմից կատարված, եթե կատարվել է մեկ կամ մի քանի հանցանքներ կատարելու համար ստեղծված երեք կամ ավելի անձից բաղկացած կայուն խմբի կամ խմբերի միավորման կողմից: Հանցանքը համարվում է հանցավոր կազմակերպության կողմից կատարված նաև այն դեպքում, երբ դա ստեղծած կամ ղեկավարող անձի դիտավորության մեջ ընդգրկված հանցանքն անմիջականորեն կատարել է խմբի թեկուզ մեկ անդամը կամ խմբի առաջադրանքով՝ դրա անդամ չհանդիսացող անձը:
155. Կաշառք տալու հիմնական և որակյալ հանցակազմերի որակման ու դրանց համադրման օրինակ է ՀՀ գլխավոր դատախազության հետևյալ հայտարարարությունում նկարագրված իրավիճակը:

**Օրինակ՝** Ք.Տ.-ն, 2022 թվականին լինելով նախազորակոչային և զորակոչային տարիքի քաղաքացիների բժշկական զննում իրականացնող զորակոչային և զորահավաքային համալրման

ծառայության բժշկական հանձնաժողովի անդամ, Ռ.Պ.-ի օգտին ապօրինի գործողություն կատարելու համար, ստացել է խոշոր չափի կաշառք: Ամուսիններ Բ.Ա.-ն և Ա.Պ.-ն, իրենց որդուն՝ Ռ.Պ.-ին, բժշկական կեղծ ախտորոշումներով պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից երեք տարի ժամկետով տարկետում տրամադրելու նպատակով դիմել են Տարածքային ստորաբաժանման բժշկական հանձնաժողովի անդամ, Բ.Տ.-ին: Բ.Տ.-ն, ունենալով զինապարտների զինվորական հաշվառման, զորակոչի ժամանակ նրանց փորձաքննության ենթարկելու, զինապարտների պիտանելիության վերաբերյալ եզրակացություն տրամադրելու լիազորություն, պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից երեք տարի ժամկետով տարկետում տրամադրելու գործընթացը բժշկական կեղծ ախտորոշումների հիման վրա կազմակերպելու նպատակով, պահանջել է խոշոր չափի՝ 1 մլն 777 հազար 185 դրամի համարժեք՝ 4500 ԱՄՆ դոլար կաշառք: Կաշառքի գումարը փոխանցելու համար պայմանավորվածություն են ձեռք բերել հանձնաժողովի անդամ Բ.Տ.-ի ամուսին Հ.Պ.-ն և Ռ.Պ.-ի հորեղբայր Ար.Պ.-ն, որից հետո 2022 թվականի նոյեմբերի 27-ին գումարը փոխանցվել է Բ.Տ.-ին:

Հսկող դատախազի կողմից որոշում է կայացվել Բ.Տ.-ի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին՝ Քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով (*խոշոր չափերով կաշառք ստանալը՝ կաշառք տվողի կամ նրա մատնանշած անձի օգտին թողտվության կամ հովանավորչության կամ այլ ապօրինի գործողություն կատարելու համար*), Հ.Պ.-ի նկատմամբ՝ Քրեական օրենսգրքի 46-435-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով (*խոշոր չափերով կաշառք ստանալուն օժանդակելը՝ կաշառք տվողի կամ նրա մատնանշած անձի օգտին թողտվության կամ հովանավորչության կամ այլ ապօրինի գործողություն կատարելու համար*), Բ.Ա.-ի նկատմամբ՝ Քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով (*խոշոր չափերով կաշառք*

տալը՝ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ իր կամ իր մատնանշած անձի օգտին պաշտոնատար անձի կողմից թողություն կամ հովանավորչության կամ այլ ապօրինի գործողության համար), Ա.Պ.-ի նկատմամբ՝ Քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով (խոշոր չափերով կաշառք տալը՝ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ իր կամ իր մատնանշած անձի օգտին պաշտոնատար անձի կողմից թողություն կամ հովանավորչության կամ այլ ապօրինի գործողության համար) և Ար.Պ.-ի նկատմամբ՝ Քրեական օրենսգրքի 46-436-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով (խոշոր չափերով կաշառք տալուն օժանդակելը՝ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ իր կամ իր մատնանշած անձի օգտին պաշտոնատար անձի կողմից թողություն կամ հովանավորչության կամ այլ ապօրինի գործողության համար):

Աղբյուր՝ <https://www.prosecutor.am/article/2490>

156. Վերը նշված օրինակում Ք.Տ-ն զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության բժշկական հանձնաժողովի անդամ է: Այսինքն, Օրենսգրքի 3-րդ հոդվածի 20-րդ կետի համաձայն՝ նա կամ պետության կամ համայնքի կողմից ստեղծված ոչ առևտրային կազմակերպության անունից հանդես գալու լիազորություն ունեցող անձ է, կամ այդ մարմինների անունից իրավունք, պարտականություն կամ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ իրականացնող անձ է: Կիրառելի է նաև Վճռաբեկ դատարանի նախադեպային սահմանումը, ըստ որի նա բուժաշխատող է, ով հատուկ լիազորությամբ իրականացրել է կազմակերպական-տնօրինչական և վարչատնտեսական գործառույթներ և իրականացրել է իրավական նշանակություն ունեցող կամ իրավական հետևանքներ առաջացնող կոնկրետ որոշման ընդունման կամ դրա ընդունմանը մասնակցելու լիազորություններ ([Ալեքսանդր Այվազյանի վերաբերյալ 2018 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ ԵԷԴ/0040/01/16](#), կետեր 14-15: Տե՛ս նաև կետ 97-ում): Ք.Տ-ին առաջադրվել է մեղադրանք կաշառք ստանալը որակյալ դարձնող երկու հատկանիշների հիմքերով՝ կաշառք ստանալը խոշոր չափով և կաշառք ստանալը կաշառք սովորի մատնանշած անձի (որդու) օգտին ապօրինի գործողություն կատարելու համար:

157. Ք.Տ.-ի ամուսինը, Հ.Պ.-ն կատարել է կաշառք ստանալուն օժանդակելու հանցակցություն, քանի որ ստացել է կաշառքի առարկան ու փոխանցել է դա կաշառք ստացողին: Եթե նա մասնակցած լիներ կաշառք ստացողի և կաշառք տվողի միջև կաշառք ստանալու համաձայնության ձեռք բերմանը, մեղադրանքը կառաջադրվեր կաշառքի միջնորդության համար՝ 437-րդ հոդվածի հիմքով: Նա օժանդակել է երկու որակյալ հատկանիշներով կաշառք ստանալու հանցագործությանը՝ օժանդակել է պաշտոնատար անձի կողմից խոշոր չափերով կաշառք ստանալուն, և օժանդակել է կաշառք տվողի որդու օգտին պաշտոնատար անձի կողմից ապօրինի գործողություն կատարելուն:

158. Ար.Պ.-ն կատարել է կաշառք տալուն օժանդակելու հանցակցություն, քանի որ վերցրել է կաշառքի առարկան կաշառք տվողից ու փոխանցել է կաշառք տալուն օժանդակողին: Ար.Պ.-ն նույնպես չի մասնակցել կաշառք տալու և կաշառք ստանալու համաձայնության կայացմանը, հետևաբար, չի կարող մեղադրվել կաշառքի միջնորդության մեջ: Նա օժանդակել է երկու որակյալ հատկանիշներով կաշառք տալու գործողությանը՝ օժանդակել է խոշոր չափերով կաշառք տալուն և օժանդակել է կաշառք տվողի որդու օգտին պաշտոնատար անձի կողմից ապօրինի գործողություն կատարելուն:

159. Ա.Պ.-ին առաջադրվել է կաշառք տալու մեղադրանք երկու որակյալ հանցակազմերով՝ կաշառք տալը խոշոր չափերով և կաշառք տալը մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ որդու օգտին պաշտոնատար անձի կողմից ապօրինի գործողության կատարման համար:

8. «Կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում» օպերատիվ-հետախուզական միջոցառումները

160. Հետաքննության մարմիններն իրավունք ունեն իրականացնել կաշառք ստանալու, կաշառք տալու նմանակման եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումներ (այսուհետ նաև՝ ՕՀՄ)՝ կաշառք ստանալու, կաշառք տալու հանցագործությունների բացահայտման նպատակով: Դա սահմանված է Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին օրենքի 30-րդ հոդվածով և 14-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով: 30-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «կաշառք ստանալ» և «կաշառք տալ» հասկացությունները մեկնաբանվում են Քրեական օրենսգրքով սահմանված կարգով: ՕՀՄ-ներն իրականացվում են դատարանի թույլտվությամբ:

161. Կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակման եղանակով ՕՀՄ-ների անցկացումն անօրինական է, երբ հետաքննության մարմնի

աշխատակիցները ՕՀՄ-ների անցկացման ժամանակ կատարում են հանցագործության սադրում (այլ կերպ՝ թակարդում կամ դրդչություն): Դա հանգեցնում է ոչ միայն ապացույցների անթույլատրելիությանը, այլև վերացնում է հանցագործության նյութաիրավական հիմքերը՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները:

162. Հանցագործության սադրումը «կաշառք տալու կամ կաշառք ստանալու», ինչպես նաև «վերահսկելի մատակարարում և գնում» ՕՀՄ-ների շրջանակում մանրամասնորեն վերլուծել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր նախադեպայի պրակտիկայում՝ ձևավորված Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի (արդար դատական քննության իրավունք) հիմքով:

163. Եվրոպական դատարանը սահմանել է, որ հետաքննության աշխատակիցները կատարում են հանցագործության սադրում այն դեպքում, երբ ակտիվորեն դրդում են անձին կատարել հանցավոր արարք, որը չէր կատարվի, եթե չլիներ նրանց ակտիվ գործողությունները, քանի որ անձը, մինչև նրանց միջամտությունը, չի ունեցել տվյալ հանցավոր արարքը կատարելու մտադրություն: Եվրոպական դատարանը սահմանում է, որ հանցագործության նմանակման եղանակով իրականացվող ՕՀՄ-ները պետք է կատարվեն պասիվ եղանակով, որպեսզի ՕՀՄ-ն համարվի իրավաչափ, իսկ ակտիվ եղանակով կատարված ՕՀՄ-ները համարվում են անիրավաչափ: Ահա մեջբերում Հայաստանի Հանրապետության դեմ կայացված մեկ վճռից:

«...Ոստկանության կողմից դրդչություն է տեղի ունենում, երբ ... ծառայողները... չեն սահմանափակվում հանցավոր գործունեությունն էապես պասիվ կերպով քննելով, այլ հանցանքի կատարումը հաստատված համարելու հնարավորություն ստեղծելու, այսինքն՝ ապացույցներ ստանալու և քրեական հետապնդում հարուցելու նպատակով այնպես են ազդում սուբյեկտի վրա, որ դրդում են [նրան] կատարել այնպիսի հանցանք, որն այլապես չէր կատարվի: Եթե տեղի է ունեցել դրդչության կամ պրովոկացիայի նման դեպք, համապատասխան անձի դեմ հարուցված քրեական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցների հետագա օգտագործումը խնդիր է առաջացնում 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով»:

[Պապյանն ընդդեմ Հայաստանի, թիվ 53166/10,](#)

21/12/2021թ., կետ 80

164. Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում նշվում է, որ հանցագործության նմանակման եղանակով իրականացվող ՕՀՄ-ները, օրինակ, վերահսկելի գնումը կամ մատակարարումը կամ կաշառքի նմանակումը կիրառվում են միայն այն նպատակով, որ ստեղծվի հանցագործության կատարման նպաստավոր հանցավոր գործունեությունը «ներսից» դիտարկելու և ամրագրելու համար, մինչդեռ նման միջոցները երբեք չպետք է առիթ դառնան, որ հետաքննության մարմնի աշխատակիցը կատարի իր իսկ կողմից դիտման ենթակա հանցանքի դրդչություն կամ սադրանք: Դիտման իրավասության սահմանազանցումը անձի «թակարդում» է, իսկ թակարդումը բոլոր դեպքերում հանցագործության սադրում է: Թակարդման դեպքում հետաքննության մարմնի գործողությունները համարվում են ակտիվ, որն անիրավչափ է:

«Եթե ծպտյալ գործակալների գործողությունները հրահրել են հանցագործության կատարումը և ոչինչ չի վկայում, որ հանցագործությունը տեղի կունենար առանց նրանց միջամտության, նման գործողությունը դուրս է գալիս ծպտյալ ոստիկանի գործողությունների թույլատրելի շրջանակներից և կարող է որակվել որպես հրահրում: Նման միջամտությունը և դրա օգտագործումը քրեական հետապնդման ընթացքում կարող է անդառնալիորեն խաթարել դատավարության արդարացիությունը»:

[Վանյանն ընդդեմ Ռուսաստանի](#), թիվ 53203/99  
15/12/2005, § 47

165. Այսպիսով, կողմնորոշվելու համար, թե կաշառք տալու կամ կաշառք ստանալու ՕՀՄ-ի ընթացքում տեղի ունեցել է սադրանք, թե ոչ, անհրաժեշտ է նախ պարզել, թե հետաքննության մարմնի աշխատակցի գործողություններն ակտիվ, թե պասիվ բնույթի են եղել: Եթե ակտիվ բնույթի են եղել, այսինքն նա ակտիվորեն հրահրել է կաշառք ստանալու կամ տալու գործողությունները, որոնք հակառակ դեպքում, առանց նրա ակտիվ միջամտության, տեղի չէին ունենա, քանի որ անձի մոտ ի սկզբանե բացակայել է նախահակվածությունը (հանցագործության սուբյեկտիվ հատկանիշը), նշանակում է տեղի է ունեցել թակարդում, այսինքն՝ հանցագործության սադրում:

166. Ըստ այդմ, հնարավոր են անձի մոտ **նախահակվածության ձևավորման (սուբյեկտիվ հատկանիշի) և հետաքննության մարմնի աշխատակի միջամտության հարաբերակցության երկու տարբերակներ.**

- 1) Առաջին, եթե անձի մոտ կաշառք ստանալու կամ կաշառք տալու արարք կատարելու նախահակվածությունը կամ մտադրությունը ծագել է մինչև հետաքննության մարմնի միջամտող գործողությունը, նշանակում է վերջինի գործողությունները եղել են պասիվ, հետևաբար, կաշառքի սադրանք տեղի չի ունեցել: Դա առավել քան այդպես է, երբ հետաքննության մարմնի աշխատակիցը միացել է արդեն ընթացքի մեջ գտնվող գործողությանը:
- 2) Երկրորդ, եթե անձի մոտ կաշառք ստանալու կամ տալու մտադրությունը ծագել է հետաքննության մարմնի միջամտող գործողությունից հետո կամ դրա արդյունքում, նշանակում է վերջինի գործողությունները եղել են ակտիվ բնույթի, նա ակտիվորեն հրահրել է կաշառք ստանալու կամ տալու գործողությունները, այսինք, տեղի է ունեցել թակադրում կամ կաշառքի սադրանք:

**Օրինակ՝** [Պապյանն ընդդեմ Հայաստանի, թիվ 53166/10.](#)

21/12/2021թվականի

Եվրոպական դատարանը անիրավաչափ է համարել ԱԱԾ-ի վերահսկողության ներքո գործող մասնավոր անձի գործողությունները քննիչի նկատմամբ, երբ անձը համառորեն հորդորել ու համոզել է քննիչին իր որդու արարքը վերաորակելու դիմաց վերցնել կաշառք, մինչդեռ քննիչը հրաժարվել է ընդունել գումարը, բայց քանի որ անձը համառորեն խնդրում էր նրան օգնել իր որդուն ու դրա դիմաց ընդունել կաշառքը, ու քանի որ խոսակցությունը տեղի էր ունենում քննիչի աշխատասենյակում, նրանից ազատվելու համար քննիչը նրան ասել է, որ գումար չի ընդունի, բայց եթե հնարավոր լինի, կօգնի որդուն՝ հորդորելով անձին հեռանալ իր աշխատասենյակից: Դրանից հետո անձը գումարը թողել է քննիչի սենյակում ու հեռացել, որից հետո ԱԱԾ աշխատակիցները ներս են մտել քննիչի սենյակ, իրականացրել խուզարկություն ու բազմոցի տակից հայտնաբերել են գումարը: Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ բացակայում էր որևէ փաստ, որ մինչև ԱԱԾ-ի վերահսկողությամբ գործող անձի հայտնվելը, քննիչի մոտ ձևավորված է եղել նախահակվածություն կաշառքը ընդունելու համար: Ըստ Եվրոպական դատարանի, տվյալ դեպքում «ԱԱԾ-ն

*պարզապես չի «միացել» տեղի ունեցող հանցանքին. նրանք դրդել են դրա կատարումը», մինչդեռ կաշառք տված անձը «դուրս է եկել գաղտնի գործակալի դերի շրջանակից և վերածվել է սադրիչ գործակալի», հետևաբար, «հանցանքը չէր կատարվի առանց իրավասու մարմնի (կետեր 88-89):*

167. Այսպիսով, կաշառքի նմանակման եղանակով ՕՀՄ իրականացող հետաքննության մարմնի աշխատակիցը պետք է գործի զգուշորեն, առանց ակտիվորեն հրահրելու հանցագործության կատարումը, իսկ վարույթ իրականացնող մարմինը պետք է իր տրամադրության տակ ունենա տվյալներ, որ մինչև ՕՀՄ-ի կիրառումը պաշտոնատար անձը մտադիր է եղել ընդունել կաշառքը կամ կաշառքի առաջարկությունը կամ խոստումը: Նման հանգամանքներով բոլոր գործերում Եվրոական դատարանը նախ և առաջ ստուգում է, թե արդյոք վարույթ իրականացնող մարմինը մինչև ՕՀՄ իրականացնելը ունեցել է իր տրամադրության տակ տվյալ, որ անձը ունեցել է կաշառք ստանալու մտադրություն (տե՛ս, օրինակ
168. **Բացի կաշառք ստանալու (կամ տալու) մտադրության և հետաքննության մարմնի միջամտության հարաբերակցության վերը նշված երկու տարբերակներից, հնարավոր է նաև երրորդ տարբերակը**, երբ կաշառք տալու կամ ստանալու մտադրությունը անձի մոտ ձևավորված է եղել մինչև հետաքննության մարմնի աշխատակցի միջամտությունը, սակայն վերջինիս միջամտության արդյունքում հանցավոր արարքը ձեռք է բերել որակյալ հատկանիշ: Դա նույնպես կարելի է որակել որպես սադրանք, որը, սակայն, կվերաբերի միայն կաշառքի չափի փոփոխությանը:

**Օրինակ՝** Պաշտոնատար անձն ի սկզբանե տվել է իր համաձայնությունը ոչ մեծ չափի կաշառք ստանալու համար, սակայն ՕՀՄ-ի իրականացման ժամանակ հետաքննության մարմնի աշխատակիցը պաշտոնատար անձին հանձնել է խոշոր չափի կաշառք, որի արդյունքում պաշտոնատար անձի հանցավոր արարքը ձեռք է բերել որակյալ հատկանիշ: Թեև այդ հանգամանքը չի վերացնում հանցագործության դեպքը, սակայն քրեական հետապնդման մարմինները պետք է հաշվի առնեն, որ արարքի հատկանիշը փոփոխվել է սադրանքի արդյունքում և մեղադրանք առաջադրելիս, իսկ դատարանները՝ պատիժը սահմանելիս առաջնորդվեն

նրանով, որ պաշտոնատար անձը համաձայնությունը տվել էր ոչ մեծ չափի կաշառք ստանալու համար:

## 9. Իրավաբանական անձի պատասխանատվությունը

169. Քրեական նոր օրենսգիրքը սահմանում է պատասխանատվություն իրավաբանական անձի կողմից կատարված հանցագործության համար: Օրենսգիրքը չի սահմանում կոնկրետ հոդվածներ, որոնց ներքո իրավաբանական անձը ենթակա է պատասխանատվության: Ըստ էության, Օրենսգրքի բոլոր հոդվածները կիրառելի են իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության համար՝ այդ թվում նաև Օրենսգրքի 436-րդ հոդվածը: Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության պայմանները և հիմքերը սահմանված են Օրենսգրքի Բաժին 7-ում:
170. Քրեական պատասխանատվության ենթակա չեն հանրային մարմինները՝ պետական, պետական կառավարման համակարգի, տեղական ինքնակառավարման մարմինները, դրանց հիմնարկները, ՀՀ կենտրոնական բանկը (հոդված 122): Պատասխանատվության չեն կարող ենթարկվել նաև դիվանագիտական կարգավիճակ ունեցող միջազգային կազմակերպությունները (օրինակ՝ ԵՄ-ի ներկայացուցչությունը ՀՀ-ում, ԵԽ-ի գրասենյակը, ՄԱԿ-ի գրասենյակը և դրա մարմինները, օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունները), քանի որ օժտված են դիվանագիտական անձեռնմխելիությամբ:
171. Քրեական պատասխանատվության են ենթակա ՀՀ-ում ստեղծված մասնավոր իրավաբանական անձինք: Իրավաբանական անձի սահմանումը և դրա տեսակները ներկայացված են Քաղաքացիական օրենսգրքում (հոդվածներ 50 և 51): Իրավաբանական անձինք լինում են շահույթ ստանալու նպատակ հետապնդող կամ առևտրային կազմակերպություններ և շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կամ ոչ առևտրային կազմակերպություններ
- 171.1. Շահույթ ստանալու նպատակ հետապնդող կամ առևտրային կազմակերպություններ են, օրինակ, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները (ՍՊԸ), բաց կամ փակ բաժնետիրական ընկերությունները (ԲԲԸ, ՓԲԸ), Լիակատար ընկերակցությունը (ԼԸ), Արտադրական կոոպերատիվը (ԱԿ), և այլն:
- 171.2. Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կամ ոչ առևտրային կազմակերպություններ են, օրինակ, հասարակական կազմակերպությունները, հիմնադրամները, քաղաքական կուսակցությունները, համատիրությունները, արհմիությունները:

171.3. Կոոպերատիվները՝ կախված իրենց գործունեության բնույթից, կարող են լինել շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կամ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող (ոչ առևտրային) կազմակերպություններ: Անհատ ձեռներեցները (ԱՁ) իրավաբանական անձ չեն:

172. Քրեական պատասխանատվության են ենթակա նաև օտարերկրյա պետություններում ստեղծված իրավաբանական անձինք: Պատասխանատվությունը ծագում է այն դեպքում, եթե կատարված հանցագործությունն ուղղված է եղել 1) Հայաստանի Հանրապետության, 2) ՀՀ քաղաքացու, 3) ՀՀ-ում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձի, 4) ՀՀ-ում ստեղծված իրավաբանական անձի և այլ կազմակերպությունների դեմ, և եթե տվյալ իրավաբանական անձը տվյալ հանցագործության համար օտարերկրյա պետությունում քրեական պատասխանատվության չի ենթարկվել:
173. Հայաստանի Հանրապետությունում ստեղծված իրավաբանական անձը ՀՀ տարածքից դուրս կատարված հանցանքի համար ենթակա է քրեական պատասխանատվության, եթե տվյալ հանցագործության համար օտարերկրյա պետությունում քրեական պատասխանատվության չի ենթարկվել: Անկախ այն հանգամանքից, թե ում շահերի դեմ է ուղղված եղել արարքը, ՀՀ օրենսդրությամբ ստեղծված իրավաբանական անձը ենթակա է քրեական պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքով:
174. Այսպիսով, ՀՀ-ում ստեղծված իրավաբանական անձը ենթակա է պատասխանատվության ՀՀ-ում կատարած հանցագործության համար, ինչպես նաև այլ պետության տարածքում կատարած հանցագործության համար, եթե դրա համար պատասխանատվության չի ենթարկվել օտարերկրյա պետությունում: Վերջինի դեպքում էական չէ, թե հանցագործությունը կատարվել է ընդդեմ ՀՀ-ի, ՀՀ քաղաքացու, բնակչի կամ ՀՀ-ում ստեղծված կազմակերպության դեմ: Իսկ օտարերկրյա պետությունում ստեղծված կազմակերպությունը կարող է պատասխանատվության ենթարկվել ՀՀ-ում, եթե հանցավոր արարքը կատարել է ՀՀ-ում կամ եթե արարքը կատարել է օտարերկրյա պետությունում, սակայն արարքը ուղղված է եղել ՀՀ-ի, ՀՀ քաղաքացու, ՀՀ-ում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձի կամ ՀՀ-ում ստեղծված կազմակերպության դեմ:

**Օրինակ՝** 2008 դեկտեմբերին գերմանական Siemens AG ընկերությունը ենթարկվեց քրեական պատասխանատվության Միացյալ Նահանգներում՝

օտարերկրյա պաշտոնատար անձանց առանձնապես խոշոր չափերի պարբերաբար կաշառք տալու համար (Միացյալ Նահանգներն ընդեմ Siemens Aktiengesellschaft, գործ թիվ [08-CR-367-RJL](#)): Կաշառքները տրվել էին խոշոր պայմանագրեր և տենդերներ շահելու համար: Դրվագներից մեկը վերաբերում էր նրան, որ կազմակերպությունը 100 միլիոն դոլար կաշառք էր տվել Արգենտինայի բարձրաստիճան պաշտոնատար անձանց, որպեսզի ձեռք բերեր 1 միլիարդ դոլար արժողության պայմանագիր՝ անձը հաստատող ազգային քարտեր պատրաստելու համար: Կազմակերպությունը ստեղծել էր կաշառքի համար նախատեսված գաղտնի ֆոնդեր և վճարման ներքին հաշիվներ: ԱՄՆ քրեական հետապնդման մարմինները ըստ էության իրականացրել էին արտատարածքային իրավազրոություն, քանի որ քրեական հետապնդման էին ենթարկել ԱՄՆ տարածքում գործունեություն ծավալող ընկերությանը ԱՄՆ տարածքից դուրս կատարվող հանցագործությունների համար, որոնք ծրագրվում ու իրականացվում էին ԱՄՆ-ի ներսից:

Ընկերության համար սահմանվել էր 445 միլիոն դոլարի տուգանք՝ որպես քրեական պատասխանատվության միջոց:

175. Քրեական օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական պատասխանատվության հիմք է, առաջին, եթե հանցանքը կատարվել է իրավաբանական անձի գործունեության կամ որոշումների վրա ազդելու իրավասություն ունեցող անձի կողմից, ով հանդես է գալիս իրավաբանական անձի անունից և գործում է ի շահ իրավաբանական անձի: Սա, այսպես կոչված, **նույնականացման մոդելն** է, որն ամրագրված է նշված դրույթի 1-ին կետում, ըստ որի իրավաբանական անձի անունից հանդես եկող (բարձրաստիճան պաշտոնատար) անձի գործողությունները նույնականացվում են իրավաբանական անձի հետ, ու այդ անձը գործում է ի շահ իրավաբանական անձի, այսինքն՝ գործում է որպես իրավաբանական անձ:

175.1. Դա նշանակում է, որ ընկերության աշխատակիցը (օրինակ՝ տնօրենը) պետք է գործի իրավաբանական անձի շահին ծառայելու մտադրությամբ, սակայն պարտադիր չէ, որ ընկերությունը, ըստ

էութեան, օգուտ ստացած լինի աշխատակցի արարքից: Եթե աշխատակիցը գործել է՝ ելնելով միայն իր կամ երրորդ անձանց շահերից, ընկերությունը պատասխանատվություն չի կրում: Եթե աշխատակիցը գործել է՝ ելնելով իր և իրավաբանական անձի շահերից, ընկերությունը ենթարկվում է քրեական պատասխանատվության: Օրենքը սահմանում է, թե որն է իրավաբանական անձի շահը: Իրավաբանական անձի շահ են համարվում գույքային կամ ոչ գույքային բնույթի օգուտներ ստանալը, այդ թվում եկամուտներն ավելացնելը, ծախսերը կամ կորուստները նվազեցնելը, իրավական ակտերով սահմանված պատասխանատվությունից ազատվելը, իրավունքներ ձեռք բերելը կամ պարտականություններից ազատվելը: Իրավաբանական անձի շահ կարող են լինել, օրինակ, մրցակիցներին վերացնելը, շուկան գրավելը, մենաշնորհ սահմանելը, հարկեր վճարելուց խուսափելը, շահույթ ստանալը և այլն:<sup>6</sup>

176. Նույն դրույթի երկրորդ կետում ներկայացված է կազմակերպական մոդելը, ըստ որի պատասխանատվության հիմքը առաջանում է ոչ թե իրավաբանական անձի պաշտոնատար անձի կամ աշխատակցի արարքների, այլ իրավաբանական անձի համակարգային թերությունների պատճառով, մասնավորապես, երբ իրավաբանական անձի կողմից չեն մշակվել և/կամ կիրառել արդյունավետ ներքին հաշվետվողականության, թափանցիկության, փաստաթղթաշրջանառության, բարեվարքության և այլ, օրենքով կամ ներքին իրավական ակտերով սահմանված, կանխարգելիչ և վերահսկողական արդյունավետ մեխանիզմներ, որոնք հանգեցրել են կազմակերպության աշխատակիցների կողմից հանցագործությունների կատարմանը:

**Օրինակ՝** Siemens AG կազմակերպության դատական ակտում, վկայակոչված վերևում, ի թիվս այլ հիմքերի որպես պատասխանատվության հիմքեր են նշվել նաև կազմակերպության կողմից ԱՄՆ օրենսդրության պահանջները չկատարելու մեջ, որոնք վերաբերում էին ներքին վերահսկողության, հաշվետվողականության, համապատասխանելիության արդյունավետ մեխանիզմներ ունենալու պահանջներին: Նման

<sup>6</sup> [«Քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց»:](#) Հեղինակներ՝ Արա Գաբրույան, Աննա Մարգարյան, Տիգրան Սիմոնյան: © Եվրոպայի խորհուրդ, հուլիս, 2022 թ.: Էջ 218:

բացթողումումը հնարավորություն էր տվել կազմակերպության ներսում կազմակերպության պաշտոնատար անձանց կողմից ստեղծել գաղտնի վճարային ֆոնդեր ու հաշիվներ, որոնք օգտագործվում էին օտարերկրյա պաշտոնատար անձանց կաշառելու համար: Քանի որ Siemens AG-ին պատասխանատվության էր ենթարկվել նաև Գերմանիայում, որտեղ ստեղծվել էր կազմակերպությունը, դատական ակտում որպես պատասխանատվության հիմք նաև նշվել է կեղծ ֆոնդերի, արտաքին հաշիվների միջոցով անօրինական վճարումներ հայտնաբերելու ու կանխելու համակարգային ձախողումը, ընկերության գործունեության վրա բարենպաստ ազդեցության նպատակով և օտարերկրյա պաշտոնատար անձանց կաշառելու նպատակով կեղծ վճարային համակարգեր ստեղծելը:

177. Երրորդը, որը սահմանված 123-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում, ներկայացուցչական և կազմակերպական մոդելների խառը մոդելն է, երբ արարքը կատարում է իրավաբանական անձի պաշտոնատար անձը, սակայն դա կատարում է կամ իրավաբանական անձի անունից հանդես գալով կամ՝ իրավաբանական անձի միջոցով: Իրավաբանական անձի միջոցով հանցավոր արարքի կատարումը պայմանավորված է, ըստ կազմակերպական մոդելի, իրավաբանական անձի պատշաճ վերահսկողական, հաշվետվողական մեխանիզմների բացակայությամբ, որոնք նպաստում են իրավաբանական անձի ներկայացուցիչների կողմից ամենաթողությանը, հանցանքի կատարմանը:
178. Իրավաբանական անձի գործունեության կամ դրա կողմից կայացվող որոշումների վրա ազդելու իրավասություն ունեցող է համարվում այն անձը, որը կանոնադրական կապիտալում ունեցած ուղղակի կամ անուղղակի մասնակցության ուժով իրավունք ունի իրավաբանական անձի համար տալու պարտադիր ցուցումներ կամ այլ ձևով ներգործելու իրավաբանական անձի գործունեության կամ կայացվող որոշումների վրա: Դրանք իրավաբանական անձի հիմնադիրներն են, բաժնետերերը, տնօրենները, կառավարիչները և այլ անձինք, ովքեր մասնակցում են ընկերության կառավարմանը կամ որպես սեփականատերեր գործադիր որոշումներ կայացնելու իրավունք ունեցող անձինք են:

### ԲԱԺԻՆ 3. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԱՅԼ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

#### 1. Հոդված 437

179. Օրենսգրքի 437-րդ հոդվածում սահմանված է կաշառքի միջնորդության հանցակազմը: Եթե նախկին օրենսգրքում սահմանված էին միայն կաշառք տվողի և կաշառք ստացողի միջև կաշառքի շուրջ համաձայնության գալուն կամ արդեն կայացած համաձայնության իրականացմանը նպաստելու ուղղված գործողությունները, նոր օրենսգրքում սահմանված են, ի հավելումն, կաշառք տվողի և ստացողի միջև համաձայնության առկայության դեպքում կաշառքի առարկան պաշտոնատար անձին կամ նրա մատնանշած անձին փոխանցելու նախաձեռնություն դրսևորելը կամ այն փոխանցելու խոստում տալը կամ փոխանցելը կամ կաշառք տվողի և ստացողի միջև առկա համաձայնության իրականացմանն այլ կերպ նպաստելը:

180. Կաշառքի միջնորդության օբյեկտիվ ու սուբյեկտիվ հատկանիշների մասին նշված է Ուղեցույցի 102-109 և 141-142 կետերում՝ կաշառք ստանալու և կաշառք տալու հանցակազմերի համատեքստում: Այդ էջերում ներկայացված են նաև վերլուծություններ կաշառքի միջնորդության և կաշառքի հանցակցության, մասնավորապես, օժանդակման հանցակազմերի հարաբերության, դրանց սահմանազատման մասին: Վերլուծվել է նաև կաշառքին օժանդակելու հանցակցության որակումը կաշառք ստանալու ձևական հանցակազմի լույսի ներքո:

181. Ինչպես ներկայացվել է 102-րդ կետում, արարքի որակյալ հատկանիշը դրսևորվում է նրանում, որ միջնորդը, ի տարբերություն օժանդակողի, ոչ թե մասնակցում է կաշառքի առարկայի փոխանցմանը, այլև նպաստում է կաշառքի տվողի և կաշառք ստացողի միջև համաձայնության կայացմանը: Միջնորդը, ինչպես նշվել է այդ կետում, կապող օղակ է կաշառք տվողի և կաշառք ստացողի միջև, նա մասնակցում ու ակտիվ քայլեր է կատարում կաշառք ստանալու կամ տալու վերաբերյալ համաձայնեցման կայացմանը, կողմերի միջև կապերի հաստատմանը, կաշառքի առարկայի բնույթի, չափի մասին պայմանավորվածություններ ձեռք բերելուն, ու այդ ամենը կաշառքի միջնորդության օբյեկտիվ կողմի մտավոր հատկանիշն է: Միջնորդը նաև նախաձեռնում և/կամ մասնակցում է կաշառքի առարկայի փոխանցմանը, որը միջնորդության հանցակազմի օբյեկտիվ կողմի ֆիզիկական հատկանիշն է: Սակայն, այդ հատկանիշի բացակայությունը չի բացառում հանցակազմի առկայությունը:

182. Այսպիսով, կաշառքի միջնորդությունը սահմանազատվում է կաշառքի հանցակցությունից, օրինակ, օժանդակելուց նրանով, որ միջնորդը կազմակերպում է կաշառք ստանալը կամ կաշառք տալը, մասնակցում է համաձայնության և պայմանավորվածությունների ձեռք բերման, իսկ օժանդակողը միայն նպաստում է կաշառքի ստացմանը կամ տալուն:
183. Անհրաժեշտ է հաշվի առնել կաշառքի միջնորդության և կաշառք ստանալու (կամ տալու) օժանդակության միջև հարաբերությունը քրեաիրավական տարբեր նորմերի միջև մրցակցության կոնցեպտի տեսանկյունից: Եթե կաշառք ստանալու (կամ կաշառք տալու) հանցակցությունը դրսևորվել է միջնորդի միջոցով, արարքը պետք է որակվի այդ արարքի համար Օրենսգրքով սահմանված հատուկ նորմով՝ 437-րդ հոդվածով՝ որպես կաշառքի միջնորդություն, և լրացուցիչ որակում 46-րդ հոդվածի հիմքով, որպես օժանդակող, չի պահանջվում: Դա բխում է Օրենսգրքի 52-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված մոտեցումից, ըստ որի եթե անձի մեկ արարքում միաժամանակ առկա են օրենսգրքի Հատուկ մասի ընդհանուր և հատուկ նորմեր, արարքը որակվում է միայն հատուկ նորմով: Դա անհրաժեշտ է իրավական որոշակիության սկզբունքից ելնելով, քանի որ հատուկ նորմը բոլոր դեպքերում արարքի առավել մանրամասն ու հստակ կարգավորում է սահմանում, քան ընդհանուր նորմը: Տվյալ դեպքում, քանի որ կաշառք տալը կամ ստանալը սահմանված է նաև միջնորդի միջոցով, որը որպես ինքնուրույն հանցագործություն սահմանված է հատուկ նորմով՝ 437-րդ հոդվածով, արարքը պետք է որակվի հատուկ նորմով, ու լրացուցիչ որակում 46-435 հոդվածով (կաշառք ստանալուն օժանդակելը) կամ 46-436 հոդվածով (կաշառք տալուն օժանդակելը) նպատակահարմար չէ, քանի որ հատուկ նորմը կլանում է ընդհանուր նորմի հատկանիշները, ու՝ ավելի մանրամասն ու որոշակի կարգավորում է նախատեսում:
184. Քանի որ կաշառք ստանալու և կաշառք տալու հանցակազմերը ձևական են, կաշառքի միջնորդությունը համարվում է ավարտված հանցագործություն նաև այն դեպքում, երբ կաշառքի առարկան պաշտոնատար անձի կողմից չի ստացվել, սակայն կաշառք ստանալու պահանջ, առաջարկ խոստում կամ կաշառք տալու խոստում կամ առաջարկություն արվել է:
185. Անհրաժեշտ է տարբերակել միջնորդի միջոցով կատարվող հանցագործությունը միջնորդավորված հանցագործությունից: Հայերենում այս երկու տարբեր իրավական բովանդակությունները արտահայտվում են նման բառերով, որոնք կարող են շփոթություն առաջացնել: Միջնորդի միջոցով կատարվող հանցագործությունը հանցակցություն է, որը քրեական պատասխանատվության

ենթակա երկու կամ ավելի անձանց կողմից հանցավոր արարքների համակատարում է: Մինչդեռ, արարքի միջնորդավորված եղանակով կատարման դեպքում բացակայում է համակատարումը, քանի որ դա արարք է, երբ հանցանք կատարողը օգտագործում է այնպիսի անձի, որն օրենքի ուժով ենթակա չէ քրեական պատասխանատվության կամ ենթակա չէ քրեական պատասխանատվության տվյալ հանցագործության համար՝ որպես կատարող (Օրենսգրքի 45-րդ հոդվածի 2-րդ մաս):

**Օրինակ՝** Եթե պաշտոնատար անձը օգտագործում է քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձի կամ անմեղսունակության վիճակում գտնվող անձի կաշառքի առարկան ստանալու համար, արարքը կորակվի կաշառքի ստացում միջնորդավորված եղանակով, այլ ոչ թե կաշառքի ստացում միջնորդի միջոցով: Տվյալ դեպքում պաշտոնատար անձը գործում է ուղղակի դիտավորությամբ, քանի որ նա գիտակցում է, որ որպես հանցագործության գործիք օգտագործում է այնպիսի անձի, որն օրենքի ուժով ենթակա չէ քրեական պատասխանատվության, նախատեսում է դրա հետևանքով հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը կամ անխուսափելիությունը (դիտավորության գիտակցական հատկանիշ) և ցանկանում է այդ հետևանքների առաջացումը: Կաշառքի առարկան ստանալու համար քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձի օգտագործելը նաև պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ են՝ Օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով:

## 2. Հոդված 438

186. Քրեական օրենսգրքի 438-րդ հոդվածում սահմանված է պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած իրական կամ ենթադրյալ ազդեցությունը օգտագործելու հանցակազմը:
187. 438 և 439-րդ հոդվածները բխում են [Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի](#) 18-րդ հոդվածից, որը սահմանում է ազդեցության չարաշահման պասիվ ու ակտիվ հանցակազմերը: Ըստ ՄԱԿ-ի կոնվենցիայի [կիրարկման օրենսդրական ուղեցույցի](#), Կոնվենցիայի 18-րդ հոդվածը 15-րդ հոդվածի հայելանման կարգավորումն է, որոնց միջև հիմնական տարբերությունը նրանում է, որ 15-րդ

հողվածում (ակտիվ ու պասիվ կաշառակերություն) հանցակազմի հատկանիշ է **պաշտոնատար անձի կողմից** իր լիազորությունների շրջանակում որոշակի արարքի կատարումը (կամ չկատարումը), իսկ 18-րդ հողվածում հանցակազմի հատկանիշ է **այլ անձի կողմից** պաշտոնատար անձի նկատմամբ **ազդեցության օգտագործումը**, որ վերջինս կատարի (կամ չկատարի) իր լիազորությունների շրջանակում որոշակի գործողություններ:<sup>7</sup>

188. Նմանապես, Օրենսգրքի 438 և 439-րդ հողվածները պասիվ կաշառակերության (435-րդ հողված) ու ակտիվ կաշառակերության (436-րդ հողված) հայելանման ձևակերպումներն են՝ համապատասխանաբար: Դրանց միջև էական տարբերությունը նրանում է, որ 435 և 436-րդ հողվածներում հանցակազմը պայմանավորված է **պաշտոնատար անձի կողմից** որոշակի գործողության կատարմամբ կամ չկատարմամբ, իսկ 438 և 439-րդ հողվածներում հանցակազմը պայմանավորված է **այլ անձի կողմից** պաշտոնատար անձի նկատմամբ **ազդեցության օգտագործմամբ**, որպեսզի վերջինս կատարի (կամ չկատարի) որոշակի գործողություններ:
189. Մասնավորապես, 438-րդ հողվածը սահմանում է ազդեցության չարաշահման պասիվ հանցակազմը, այն է՝ անձի կողմից պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու նպատակով անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն **ստանալը, պահանջելը, տալու առաջարկ ներկայացնելը կամ տալու առաջարկը կամ խոստումն ընդունելը՝** ապօրինի վարձատրություն տվողի կամ նրա մատնանշած անձի օգտին պաշտոնատար անձի կողմից իր իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով՝ գործողություն կատարելու կամ չկատարելու համար:
190. Արարքը հանցագործություն է նաև այն դեպքում, երբ անձը իրականում չունի ազդեցություն պաշտոնատար անձի նկատմամբ, սակայն պնդում է, որ ունի այդպիսի ազդեցություն և դրա դիմաց ստանում է վարձատրություն (կամ ընդունում է վարձատրության առաջարկը կամ խոստումը): 438 և 439-րդ հողվածներում այս իմաստով օգտագործվում է «ենթադրյալ ազդեցություն» արտահայտությունը: [Կոռուպցիայի քրեական իրավունքի մասին կոնվենցիայի](#) 12-րդ հողվածում օգտագործվում է «հայտարարում է կամ հաստատում է»

<sup>7</sup> Կոնվենցիայի 18-րդ հողվածի 2-րդ մասում, ինչպես 15-րդ հողվածի բ-կետում, «շորթում» բառը օգտագործվել է սխալմամբ: Տե՛ս բացատրությունը կետ 76.1-ում:

արտահայտությունը, ըստ որի նույնիսկ ազդեցություն գործադրելու մասին հայտարարելը, անկախ այդպիսի ազդեցություն իրականում ունենալուց, բավարար է արարքի քրեականացման համար:

191. Հանցակազմի օբյեկտիվ հատկանիշները մեկնաբանվում են նույն կերպ, ինչ նույնանման հատկանիշները 435-րդ հոդվածում: Այդ իմաստով *պաշտոնատար անձ* հասկացության բացատրությունը ներկայացված է վերևում՝ 54-56 կետերում, *գույք, դրամական միջոց, արժեթուղթ, վճարային գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն, որևէ այլ առավելություն* հասկացությունների բացատրությունը՝ 65-74 կետերում, *պահանջ, առաջարկ, խոստում* հասկացությունների բացատրությունը՝ 75-91 կետերում, *իշխանական կամ ծառայողական լիազորություններ* հասկացությունների բացատրությունը՝ 92-101 կետերում:
192. Հանցակազմի որակյալ հատկանիշները մեծամասամբ նույնական են 435 և 436-րդ հոդվածների որակյալ հատկանիշներին: «*Մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ*» հասկացության բացատրությունը ներկայացված է 150-րդ կետում, իսկ «*խոշոր չափ*» և «*առանձնապես խոշոր չափ*» հասկացությունների բացատրությունը՝ 122 և 151-152 կետերում: «*Թողտվության կամ հովանավորչության կամ այլ ապօրինի գործողության կամ անգործության համար*» արտահայտության բացատրությունը ներկայացված է 123 և 153-րդ կետերում, «*անձի իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին վնաս պատճառելու սպառնալիքով*» արտահայտության բացատրությունը՝ 125 և 153-րդ կետերում, իսկ «*հանցավոր կազմակերպության կողմից*» հասկացության բացատրությունը՝ 126-րդ կետում:
193. Այսպիսով, այս հանցակազմի հիմնական տարբերությունը կաշառք ստանալու հանցակազմից այն է, որ նյութական վարձատրությունը տրվում է ոչ թե պաշտոնատար անձին կամ նրա մատնանշած անձին, այլ երրորդ անձի, մինչդեռ պաշտոնատար անձը կարող նույնիսկ տեղյակ չլինել նման անձի կամ նրան տրվող վարձատրության մասին: Վարձատրությունը ստանում է հանցավոր արարք կատարողը՝ նա, ով պաշտոնատար անձի նկատմամբ փորձում է օգտագործել իր իրական կամ ենթադրյալ ազդեցությունը, պայմանավորված, օրինակ ընտանեկան, ազգակցական կապերով, ընկերական հարաբերություններով և այլն:

**Օրինակ՝** Ա-ն Բ-ի խնդրանքով դիմել է իր մտերիմ Գ-ին, որ նա իր հերթին դիմի օրենսդիր մարմնի ներկայացուցիչ Դ-ին, որ վերջինս օգտագործի տեսչական մարմնի պաշտոնատար անձանց

նկատմամբ իր ենթադրյալ ազդեցությունը՝ վերջիններիս կողմից իրենց ծառայողական լիազորություններն օգտագործելով Բ-ի օգտին ապօրինի գործողություն կատարելու համար, այն է՝ առանց համապատասխան փաստաթղթերի կամ կեղծ փաստաթղթերով ապրանքներ արտահանելու գործընթաց կազմակերպելու համար: Այնուհետև, Ա-ն ու Գ-ն մեկնել են Դ-ի հետ հանդիպման համար, որտեղ Գ-ն հանդիպել է Դ-ի հետ և ներկայացրել առաջարկությունը՝ 23,000 ԱՄՆ դոլարի չափով վարձատրության դիմաց: Դ-ն ընդունել է առաջարկը: Որոշ ժամանակ անց Գ-ն ու Դ-ն հանդիպել են, Դ-ն ասել է, որ գործարքի համար պայմանավորվել է տեսչական մարմնի աշխատակցի հետ, անհրաժեշտ է նախօրոք իրեն վճարել 100,000 ԱՄՆ դոլար, որպեսզի ինքը փոխանցի դա համապատասխան պաշտոնատար անձին: Գ-ն ասել է, որ 100,000 դոլարը կարող է տալ գործարքի ընթացքում՝ մաս-մաս, ոչ թե նախօրոք, իսկ Դ-ին այդ պահին կարող է տալ 20,000 դոլար: Սակայն Դ-ն հայտնել է, որ սկզբնապես կայացած համաձայնությունը խախտվել է, չի համաձայնվել գումարը վերցնել, ու այլևս չի համագործակցել:

Այսպիսով, Դ-ն, հանդիսանալով պաշտոնատար անձ (պատգամավոր), համաձայնվել է ընդունել վարձատրություն, որպեսզի դրա դիմաց օգտագործի այլ պաշտոնատար անձի նկատմամբ իր ենթադրյալ ազդեցությունը, որ այդ պաշտոնատար անձն իր հերթին ապօրինի վարձատրությունը տվողի օգտին կատարի ապօրինի գործողություն: Արդյունքում, Դ-ին առաջադրվել է մեղադրանք 438-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի հիմքով՝ դրամական միջոց ստանալուն համաձայնություն տալը, որ դրա դիմաց պաշտոնատար անձի նկատմամբ իրականացնի ազդեցություն, որպեսզի վերջինս ապօրինի վարձատրություն տվող անձի օգտին կատարի իր ծառայողական լիազորություններից բխող գործողություն: Դ-ին կարող է առաջադրվել մեղադրանք նաև 436-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (պաշտոնատար անձին կաշառք տալը իր մատնանշած անձի օգտին ապօրինի գործողության կատարման համար), եթե պարզվի, որ նա պաշտոնատար անձին

առաջարկել է կաշառք նշված գործողությունների կատարման համար՝ անկախ այն հանգամանքից, որ կաշառքը չի վճարվել:

194. Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ կա որոշակի նմանություն այս հանցակազմի և լրբիստական գործունեության միջև: Վերջինի դեպքում նույնպես անձը կամ կազմակերպությունը, լիազորված այլ անձանց կամ խմբի կողմից, պաշտոնատար անձի նկատմամբ ազդեցություն օգտագործելով, անձանց կամ անձանց խմբի համար ստանում է կամ փորձում է ստանալ որևէ իրավունք, ծառայություն կամ «այլ առավելություն» (օրինակ, խորհրդարանի կողմից օրենքի ընդունում, որը ներկրողների համար բարենպաստ պայմաններ է ստեղծում)՝ պաշտոնատար անձի կողմից իր իշխանական կամ ծառայողական լիազորությունների օգտագործումով գործողության կատարման համար (օրինակ, ազգային ժողովի պատգամավորների կողմից ներկրողների համար օրենքի ընդունում):

195. Ազդեցության օգտագործման՝ որպես հանցավոր արարքի և լրբիստական գործունեության միջև տարբերությունը նրանում է, որ վերջինը սահմանված է օրենքով, այսինքն՝ ազդեցության օգտագործումն օրենքով սահմանված գործունեություն է: Ավելին, Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիայի [Բացատրական ուղեցույցում](#) հստակեցվում է, որ այս հանցակազմում խոսք է գնում «ոչ պատշաճ» ազդեցության մասին, որը ենթադրում է ազդեցության օգտագործումը կոռուպցիայի նպատակով, հետևաբար, հանցավոր մտադրության սուբյեկտիվ հատկանիշով է, որ **ազդեցության օգտագործումը որպես հանցավոր արարք սահմանազատվում է լրբիստական օրինական գործունեությունից** (տե՛ս Ուղեցույցի 65-րդ կետում): Այդուհանդերձ, պետք է նկատի ունենալ, որ Հայաստանի Հանրապետությունում բացակայում է լրբիստական գործունեության մասին օրենք: Դա կարող է հանգեցնել մի իրավիճակի, որ որևէ լրբիստական գործունեություն կարող է համարվել Քրեական օրենսգրքի 438-րդ հոդվածով արգելված արարք:

### 3. Հոդված 439

196. 439-րդ հոդվածը (պաշտոնատար անձի նկատմամբ ուեցած իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու նպատակով ապօրինի վարձատրություն տալը) սահմանում է ազդեցության չարաշահման ակտիվ հանցակազմը, և դրա օբյեկտիվ հատկանիշները համընկնում են ակտիվ կաշառակերության օբյեկտիվ հատկանիշների հետ՝ այն տարբերությամբ, որ 436-րդ հոդվածում սահմանված արարքում վարձատրությունը տրվում է պաշտոնատար անձին, որ նա վարձատրություն տվող անձի կամ նրա մատնացույց արած այլ անձի օգտին կատարի (կամ չկատարի) իր իշխանական

կամ ծառայողական լիազորություններից բխող գործողություններ, իսկ 439-րդ հոդվածում սահմանված արարքում վարձատրությունը տրվում է ցանկացած անձի, որ նա օգտագործի իր ազդեցությունը պաշտոնատար անձի նկատմամբ՝ վարձատրություն տվող անձի կամ նրա մատնացույց արած անձի օգտին իր իշխանական կամ ծառայողական լիազորություններից բխող գործողություններ կատարելու (կամ չկատարելու) համար:

197. Էական չէ, թե վարձատրությունը տվել է ցանկալի արդյունքը, թե՛ ոչ: Էական չէ նաև, թե անձը, ով ստացել է վարձատրությունը, իրականում ուներ ազդեցություն պաշտոնատար անձի նկատմամբ, թե՛ ոչ: Էական է, որ վարձատրությունը տրամադրվել է, առաջարկվել է, կամ խոստացվել է՝ ինչպես ակտիվ կաշառակերության դեպքում:
198. 439-րդ հոդվածում գույք, դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն, առավելություն առաջարկ, խոստում, իշխանական կամ ծառայողական լիազորություններ հասկացությունները մեկնաբանվում են այնպես, ինչպես 435 և 436-րդ հոդվածում (տե՛ս վերևում՝ 190-րդ կետում): Որակյալ հատկանիշները նույնպես ամբողջությամբ կրկնվում են (տե՛ս 191-րդ կետում):
199. Նույն կերպ է մեկնաբանվում նաև «ենթադրյալ ազդեցություն» հասկացությունը, ինչ 438-րդ հոդվածում (տե՛ս 189-րդ կետում):

**Օրինակ՝** Նախորդ օրինակում իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու նպատակով ապօրինի վարձատրություն տալու հիմքով կարող է առաջադրվել մեղադրանք Գ-ին 439-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով՝ այն բանի համար, որ Գ-ն առաջարկել է Դ-ին 23,000 ԱՄՆ դոլարի չափով վարձատրություն Դ-ի կողմից իր ազդեցությունը պաշտոնատար անձի նկատմամբ օգտագործելու դիմաց: Թեև վարձատրությունը ի վերջո չի տրվել, սակայն առաջարկություն անելը ինքնին ավարտված հանցագործություն է: Մեղադրանք կարող է առաջադրվել նաև Ա-ին դրդչության համար՝ 46-439(3)(2) հոդվածի հիմքով, քանի որ նա է հորդորել Գ-ին տալ առանձնապես խոշոր չափով վարձատրություն Դ-ին, որ վերջինս ազդեցություն գործադրի պաշտոնատար անձի նկատմամբ:

200. Ինչպես 438-րդ հոդվածում, 439-րդ հոդվածի շրջանակում նույնպես պետք է հաշվի առնել արարքի սուբյեկտիվ հատկանիշը առ այն, որ դա պետք է ներառի հանցավոր (կոռուպցիոն) նպատակով: Հակառակ դեպքում վարձատրություն տվողի արարքը կարող է օբյեկտիվորեն համարվել լրբիստական օրինավոր գործունեություն (տե՛ս 194-195 կետերում):

#### 4. Հոդված 440

201. Օրենսգրքի 440-րդ հոդվածում սահմանված է *Կաշառք ստանալու, կաշառքի միջնորդության կամ իրական կամ ենթադրյալ ազդեցությունը շահադիպական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով օգտագործելու պատրվակով գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն ստանալու* հանցակազմը:

202. Սույն հանցակազմը Քրեական նոր օրենսգրքում սահմանված նոր հանցակազմ է: Նախկին օրենսգրքում սահմանված էր այս հանցակազմի միայն մեկ բաղադրիչը՝ 178-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետում՝ **խարդախությունը կաշառք ստանալու պատրվակով**, որն օրենսգրքում ավելացվել էր 2008 թվականի ապրիլին: Սակայն իրավաբանական գրականությունում քննադատվում էր այս դրույթը: Ստացվում էր, որ անձը, ով կատարել էր հանցավոր արարք, այն է՝ տվել էր կաշառք, միևնույն ժամանակ համարվում էր խարդախության զոհ (տուժող) և անցնում էր իրավական պաշտպանության տակ՝ ստանալով օրինական հիմք կաշառքի առարկան որպես հանցագործության արդունքում հասցված վնաս հետ ստանալու իրավունք: Անձի խախտված շահը չի կարող համարվել օրինական, եթե խախտումը անմիջական կապ ունի հանցավոր արարքի հետ: Հետևաբար, առաջարկվում էր վերանայել տվյալ հանցավոր արարքը խարդախության հանցակազմում սահմանելը ու դա սահմանել առանձին հանցակազմով<sup>8</sup>, որն էլ իրականացվեց նոր Քրեական օրենսգրքում:

203. Օրենսգրքի 440-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումը բխում է 48-րդ հոդվածի 6-րդ մասից, համաձայն որի եթե օրենսգրքի Հատուկ մասի հոդվածում նշված հանցագործության հատուկ սուբյեկտ չհամարվող անձը կատարել է տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմն **իր նախաձեռնությամբ**, ապա նա ենթակա

<sup>8</sup> [խարդախություն՝ կաշառք ստանալու պատրվակով. օրենսդրական բարեփոխում, թե՞ իրավական փակուղի](#): Միսակ Մարկոսյան: Էջ 43-44:

է քրեական պատասխանատվության օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված այն հանցագործության համար, որի հատկանիշներն առկա են նրա արարքում:

**Օրինակ՝** Եթե պաշտոնատար անձ չհանդիսացող անձը ներկայանում է քաղաքացիներին որպես իշխանության ներկայացուցիչ և իբրև թե նրանց օգտին որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու համար գումար է վերցնում, այդ այդ անձը պատասխանատվության կենթարկվի ոչ թե կաշառք ստանալու համար, քանի որ պաշտոնեական հանցագործության սուբյեկտ չէ, այլ օրենսգրքի 440-րդ հոդվածի առաջին մասով, որի հատկանիշներն առկա են նրա արարքում:

204. 440-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված այնպիսի օբյեկտիվ հատկանիշներ, ինչպիսին են գույք, դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն, որևէ այլ առավելություն, մեկնաբանվում են նույնկերպ, ինչ նույնանման արտահայտությունները 435-ից 439-րդ հոդվածներում:

205. 440-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված հանցակազմը վերաբերում է այն դեպքերին, երբ անձը ներկայանում է իբրև թե կաշառքի միջնորդություն կատարող անձ և այդ պատրվակով քաղաքացուց ստանում է գումար (կամ այլ առավելություններ), որը յուրացնում է, քանի որ ի սկզբանե նպատակ չի ունեցել կաշառքի միջնորդության գործողություն կատարել, այլ նպատակ է ունեցել յուրացնել այդ գումարը:

**Օրինակ՝** Երևանի բնակիչ Կ.Պ.-ն 2024 թվականի հունվարին ՀՀ ՊՆ կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ տեղափոխված ժամկետային զինծառայող Ա.Մ.-ին զինվորական հետագա ծառայությունից ազատելու խնդրանքով դիմել է իր ծանոթ Վ. Ս.-ին՝ միաժամանակ տեղեկացնելով, որ հիշյալ հարցը լուծելու համար Ա.Մ.-ն և նրա մայրը պատրաստ են կաշառք տալ:

Տեղեկանալով զինծառայողի և նրա մոր կողմից կաշառք տալու պատրաստակամության մասին, սակայն իրականում նպատակ չունենալով նշված հարցով դիմել որևէ պաշտոնատար անձի, կաշառքի միջնորդության պատրվակով գումար ստանալու դիտավորությամբ Վ.Ս.-ն Կ.Պ.-ին վստահեցրել է, թե իբր իր ծանոթ պաշտոնատար անձանց 3.000 ԱՄՆ դոլար կաշառք

տալու դիմաց հնարավոր է կազմակերպել Ա. Մ.-ին հետագա զինվորական ծառայությունից ազատելու հարցը:

Ա.Մ.-ն և նրա մայրը, տեղյակ չլինելով Վ.Ս.-ի իրական մտադրության մասին, 2024 թվականի հունվարի 11-ից փետրվարի 19-ն ընկած ժամանակահատվածում, Կ.Պ.-ի միջնորդությամբ Վ.Ս.-ին են փոխանցել խոշոր չափերի՝ 1.500.000 ՀՀ դրամ և 90.000 ՀՀ դրամի խմիչք:

Նախաքննության ընթացքում Վ.Ս.-ին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 440-րդ հոդվածի 2-րդ մասով:

Աղբյուր՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի [հայտարարությունը](#):

206. 440-ր հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքը իշխանական կամ ծառայողական լիազորությունների կամ դրանցով պայմանավորված ազդեցության օգտագործումով կատարելը պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ են:
207. 440-րդ հոդվածի 2-րդ մասում գույք, դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն, որևէ այլ առավելություն հասկացությունները նույնպես մեկնաբանվում են նույնկերպ, ինչ նույնանման արտահայտությունները 435-ից 439-րդ հոդվածներում:
208. 440-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված արարքը վերաբերում է այն դեպքերին, երբ անձը ստանում է գույք, դրամական միջոց և այլ առավելություններ իր իրական կամ ենթադրյալ ազդեցությունը օգտագործելու պատրվակով: Ի տարբերություն 438-րդ և 439-րդ հոդվածների, պարտադիր պայման չէ, որ ազդեցության օգտագործումը ենթադրաբար կատարվելու է պաշտոնատար անձանց նկատմամբ: Ազդեցություն գործադրելու մասին վերացական նշումը ինքնին բավարար պայման է հանցակազմի համար, քանի որ հանցավորը մտադրություն չունի ազդեցություն գործադրել պաշտոնատար անձի կամ որևէ այլ անձի նկատմամբ:

Օրինակ՝ Գ.Մ.-ն մտադրվել է պաշտոնատար անձանց կաշառք տալու միջոցով կազմակերպել իր որդու՝ զինվորական ծառայությունից անօրինական եղանակով ազատելու գործընթացը և այդ նպատակով դիմել է իր մտերիմ, ՀՀ ՊՆ նախկին աշխատակից Բ.Հ.-ին: Վերջինս նշել է, որ Պաշտպանության նախարարությունում ունի բազմաթիվ կապեր և կարող է նրանց միջոցով ազդեցություն գործել բժշկական կենտրոններից մեկի բժշկի վրա, որ զորակոչիկին կեղծ հիվանդության վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր պատրաստվեն զինվորական ծառայությունից տարկետում տրամադրելու նպատակով: Գ.Մ.-ն տրամադրել է Բ.Հ.-ին 3,000 ԱՄՆ դոլար, իսկ որոշ ժամանակ անց վերջինս Գ.Մ.-ին տեղեկացրել է, որ բժշկի տրամադրած փաստաթղթերի հիման վրա տարկետման մասին որոշումը կայացվել է: Որոշ ժամանակ անց Գ.Հ.-ի որդին ստացել է ծանուցագիր պարտադիր զինվորական ծառայության անցնելու մասին, որից պարզվել է, որ Բ.Հ.-ն իրականում ոչ մեկի չէր դիմել Գ.Մ.-ի որդու տարկետման հարցով:

## 5. Հոդված 441

209. Նախկին քրեական օրենսգրքի 308-րդ և 309-րդ հոդվածներով նախատեսված երկու հանցակազմերը, որոնք էին պաշտոնատար անձի կողմից պաշտոնեական լիազորությունները չարաշահելը և պաշտոնատար անձի կողմից պաշտոնեական լիազորություններն անցնելը, նոր Քրեական օրենսգրքում միավորվել են 441-րդ հոդվածում:
210. 441-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված որակյալ հանցակազմը (արարքը բռնություն գործադրելով կամ բռնություն գործադրելու սպառնալիքով կատարելը) չունի վաղեմության ժամկետ՝ ըստ 83-րդ հոդվածի 9-րդ կետի:
211. 441-րդ հոդվածով սահմանված հանցակազմը բովանդակային կապ ունի 435-րդ հոդվածի հետ, քանի որ 435-րդ հոդվածով նախատեսված «կաշառք ստանալը» հանդիսանում է 441-րդ հոդվածով նախատեսված «պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը» հանցատեսակի հատուկ դրսևորում:
212. Քրեական նոր օրենսգրքի 52-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Եթե անձի մեկ արարքում միաժամանակ առկա են սույն օրենսգրքի Հատուկ մասի ընդհանուր և

հատուկ նորմեր, ապա արարքը որակվում է միայն հատուկ նորմով: Հետևաբար, այդ նորմի կիրառման պարագայում պաշտոնատար անձի կողմից կաշառք ստանալու դեպքում արարքը պետք է որակվի բացառապես 435-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշներով՝ առանց համակցելու 441-րդ հոդվածով սահմանված հանցանքի հետ: